«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2025

ՆԱԽԱԲԱՆ

Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանի (այսուհետ՝ ՎՊՀ կամ համալսարան) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, փորձագետների առջև դրված էր երկու խնդիր.

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (այսուհետ՝ ԲԿԵՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Սույն զեկույցը պարունակում է համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԲԿԵՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 13

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 15

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 15

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 15

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 19

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ 21

ԸՍՏ ՀՀ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 21

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 21

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 25

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 36

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 46

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 54

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 61

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 68

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 76

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 80

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 85

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 94

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 95

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 95

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 97

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 100

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 103

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 104

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 105

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ՎՊՀ առաքելությունն է՝ «տարածաշրջանում դառնալ կրթական, գիտական գործունեություն իրականացնող և նորարարական գաղափարների փոխանցման խթանիչ կենտրոն, որի հիմնական նպատակն է պատրաստել աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին ու մարտահրավերներին պատրաստ որակյալ և մրցունակ մասնագետներ»:

Բուհը գտնվում է հավատարմագրման երրորդ շրջափուլում. մինչ այժմ ՎՊՀ-ն երկու անգամ հավատարմագրվել է 4-ական տարիներով՝ 2015 և 2021 թվականներին: Նախորդ հավատարմագրումից հետո փորձագիտական խորհրդատվությունների հիման վրա ՄՈՒՀ-ը մշակել է «Վանաձորի պետական համալսարանի բարելավման գործողությունների պլանը 2021-2025թթ. համար»: Նույն թվականին հաստատվել է ՎՊՀ 2021-2025թթ. ռազմավարական ծրագիրը և ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանը: Նախորդ հավատարմագրումից հետո ՄՈՒՀ-ը սկսել է կիրառել ռազմավարական նպատակների իրականացման արդյունքների գնահատման ցուցիչներ և կատարել միջնաժամկետ դիտարկումներ, իրականացրել է ՄԿԾ-ների և ուսումնական միջավայրի բարելավման աշխատանքներ, կանոնակարգել է մի շարք գործընթացներ, մեծացրել է ֆինանսական կայունությունը, հետազոտական գործունեության համար նպատակային միջոցներ է տրամադրել և այլն: Միևնույն ժամանակ, ծրագրով նախատեսված որոշ կարևոր խորհրդատվություններ, ինչպիսիք են կառավարման գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և դրանց կիրառումը գնահատող արդյունավետ կառուցակարգերի ներդրումը, բուհի ֆինանսական պլանավորման ու իրականացման կատարումը՝ հաշվի առնելով ՄԿԾ-ների պահանջները, ՈԱ պատասխանատուների մասնագիտական զարգացման շարունակականության ապահովումը և այլն, չեն իրականացվել:

Վանաձորի պետական համալսարանը նախորդ հավատարմագրումից հետո զգալի աշխատանք է իրականացրել կրթական ծրագրերի արդիականացման ուղղությամբ: Կրթական ծրագրերի վերջնարդյունքները վերանայվել են՝ փորձելով ապահովել համահունչություն ՀՀ Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին: Բուհը կարևորում է կրթական գործընթացների շարունակական բարելավումը՝ ներդնելով ծրագրերի բենչմարքինգի և դասավանդման մեթոդների արդիականացման մոտեցումներ, ինչի շնորհիվ ավելացել է պրակտիկ բաղադրիչը կրթական ծրագրերում:

Այնուամենայնիվ, աշխատաշուկայի պահանջներին կրթական ծրագրերի ամբողջական համապատասխանությունը դեռևս մարտահրավեր է մնում: Մասնավորապես, բուհը դեռևս չի իրականացրել աշխատաշուկայի համապարփակ ուսումնասիրություն, ինչը կարող էր հստակեցնել, թե որքանով են առկա ծրագրերը բավարարում տարածաշրջանային

և ոլորտային պահանջները: Այս բացը մասնակիորեն լրացվում է գործատու դասավանդողների ներգրավմամբ, ինչը բուհին հնարավորություն է տալիս անմիջական ազդակներ ստանալ ոլորտից և վերափոխել ծրագրերը՝ շեշտադրելով կիրառական և պրակտիկ հմտությունների զարգացումը:

Պրոֆեսորադասախոսական կազմի զարգացման ուղղությամբ բուհը ձեռնարկել է կարևոր քայլեր՝ սահմանելով դասախոսների ընտրության հստակ չափանիշներ և վերանայելով պաշտոնների անձնագրերը՝ շեշտադրելով համապատասխանությունը ծրագրերի վերջնարդյունքներին: Գործատու դասավանդողների ներգրավումն այստեղ կարևոր նշանակություն ունի՝ ներքին ներուժի ամրապնդման համար: Սակայն ՊԴ կազմի մասնագիտական զարգացման համատեքստում դեռևս առկա է վերապատրաստման ծրագրերի պակաս: Հատկապես անհրաժեշտ է դասախոսական կազմի շարունակական մասնագիտական զարգացման ծրագրերի ներդրում, որոնք ուղղված կլինեն ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառմանը:

Ենթակառուցվածքների և ռեսուրսների համալրման ու զարգացման տեսանկյունից բուհը ցուցաբերել է զգալի ջանքեր՝ ուղղված նյութատեխնիկական բազայի արդիականացմանը: Էրազմուս+ ծրագրերի շրջանակներում բուհը կարողացել է համալրել իր ռեսուրսները և ամրապնդել համագործակցությունը գործընկեր կազմակերպությունների հետ: Սակայն գրադարանային ռեսուրսները և լաբորատորիաները, հատկապես որոշ կրթական ծրագրերի համար, դեռևս բավարար չափով չեն արդիականացվել: Սա կարող է ազդել կրթական գործընթացների արդյունավետության և ծրագրերի վերջնարդյունքների հասանելիության վրա:

Փորձագիտական խումբը նշում է, որ բուհի կողմից իրականացվող քայլերը, ներառյալ կրթական ծրագրերի վերանայումները, դասախոսական կազմի կարիքներին համապատասխան քայլերի իրականացումը և ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ կատարված աշխատանքները, ընդհանուր առմամբ նպաստում են որակավորումների արժանահավատ շնորհմանը:

Համալսարանի առաքելությունն ու նպատակները նախորդ հավատարմագրումից հետո հստակեցվել են՝ շեշտադրելով համալսարանի դերը տարածաշրջանում որպես կրթական, գիտական և նորարարական կենտրոն: Համալսարանի շահակիցների ներգրավման արդյունքում վերանայվել են առաքելության և նպատակների համապատասխանությունը տարածաշրջանային պահանջներին: Դրական է այն փաստը, որ բուհի ներքին շահակիցները և գործատուները կիսում են բուհի զարգացման ուղղությունները: Փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է փոխկապակցել բուհի ռազմավարական նպատակները և ռեսուրսների բաշխումը սահմանված վերջնարդյունքներին հասնելու համար: Առաջընթացի չափելի ցուցանիշների հստակեցումը նույնպես կարևոր է ռազմավարական նպատակների իրականացման գնահատման և դրանց շարունակական բարելավման համար:

Նախորդ հավատարմագրումից հետո ՎՊՀ-ն կատարել է կառավարման համակարգի բարեփոխումներ՝ ներառելով կառուցվածքային փոփոխություններ, որոնք ուղղված են բուհի կառավարման արդյունավետության բարձրացմանը: Այնուամենայնիվ, որոշումների կայացման գործընթացում շահակիցների ոչ ամբողջական ներգրավումը հանգեցրել է անձնակազմի կողմից փոփոխությունների ոչ լիարժեք ընդունելուն: Բուհը ներդրել է ներքին և արտաքին շահակիցների կառավարման համակարգում որոշումների կայացմանը

մասնակցության մեխանիզմներ, որոնք ներառում են ուսանողների և դասախոսների ներգրավում խորհուրդների և աշխատանքային խմբերի կազմերում: Սակայն ներքին շահակիցների նախաձեռնողականությունը կարիքների վերհանման գործընթացում մնում է ցածր, ինչը կարող է սահմանափակել որոշումների կայացման համար նրանց խնդիրների ուսումնասիրությունը:

Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորումները բուհն իրականացրել է ռազմավարական ծրագրի հիման վրա, սակայն պլանավորման մոտեցումները դեռևս ամբողջությամբ չեն ապահովում համահունչություն բուհի առաքելությանն ու նպատակներին: Շատ դեպքերում գործողությունների վերջնարդյունքների համար հստակ չափելի ցուցիչներ չեն սահմանվել, ինչը սահմանափակում է պլանների գնահատման հնարավորությունը: Փորձագիտական խումբը նշում է, որ անհրաժեշտ է զարգացնել տվյալահենք որոշումների կայացման մշակույթը, ինչպես նաև ապահովել շահակիցների առավել ակտիվ մասնակցությունը կառավարման գործընթացներում:

Փորձագիտական խումբը կարևորում է ՎՊՀ ռազմավարական նպատակներից մեկը՝ որակի ապահովման համակարգի կատարելագործումը, նշելով, որ փաստաթղթերի ամբողջացումը ստեղծել է բուհի գործընթացները կարգավորող ու նկարագրող փաստաթղթային հիմք: Այնուհանդերձ, խումբը ընդգծում է, որ գործընթացների բարելավման համար պետք է հիմնվել վերլուծությունների և կարիքների վրա՝ այս կերպ հնարավոր կլինի ոչ միայն ամրապնդել փաստաթղթային հիմքը, այլև ապահովել դրա կիրառությունը և նպաստել որակի ապահովման համակարգի զարգացման ուղղությամբ ռազմավարական ծրագրով սահմանված նպատակների իրագործմանը: Որոշումների կայացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման միասնական համակարգի բացակայությունը դժվարացնում է բուհի գործունեության արդյունավետության ամբողջական գնահատումը:

Կառավարման մարմինների կողմից հստակ խնդիրների և արդյունավետության գնահատման չափանիշների սահմանումը կօգնի որակի ապահովման համակարգին արագ արձագանքել բուհի կարիքներին և բարձրացնել որոշումների կայացման հիմնավորվածությունը:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում հարցումների ու ֆոկուս խմբերի մեթոդաբանության բարելավումը, քանի որ ներկայիս մոտեցումները հաճախ չեն ապահովում գնահատման իրական պատկերը: Հարցումների նպատակների հստակեցումն ու թիրախային խմբերի ընտրությունը անհրաժեշտ են, որպեսզի հավաքված տվյալներն ունենան ազդեցություն բարելավման պլանների վրա: Կառավարիչներին պետք է նաև տրամադրվեն մանրամասն տվյալներ, որոնք կօգնեն որոշումների կայացման համար՝ վերանայելով նաև տվյալների աղբյուրները և պարբերականությունը:

ՎՊՀ-ն ակտիվորեն օգտագործում է իր կայքը և սոցիալական հարթակները թափանցիկության ապահովման համար, սակայն որակի ապահովման համացանցային էջում վերլուծությունների սակավ հասանելիությունը սահմանափակում է շահակիցների տեղեկացվածությունը: Այս առումով, բուհը կարող է առավել արդյունավետ օգտագործել թվային հարթակները՝ բարձրացնելով շահակիցների տեղեկացվածությունը և աջակցություն ցուցաբերելով որակի ապահովման գործընթացների իրականացմանը:

ՎՊՀ-ն կարևորում է ուսանողների կարիքները՝ փորձելով բարելավել ուսումնական միջավայրը և ստեղծել ուսանողների կարիքների բավարարմանն աջակցող պայմաններ: Նախորդ հավատարմագրումից հետո համալսարանն իրականացրել է բարելավումներ

ուսանողական ծառայությունների և պրակտիկաների կազմակերպման ուղղությամբ: Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը պետք է ավելի ինտենսիվ ձևով ներգրավի ուսանողներին կրթական գործընթացի բոլոր փուլերում՝ ներառյալ ծրագրերի մշակում, դասավանդման մեթոդների ընտրություն և որակի ապահովման համակարգերի ձևավորում: Սա կնպաստի ուսանողակենտրոն մոտեցման ամրապնդմանը և որակավորումների արժանահավատության բարձրացմանը:

Բուհը որոշակի առաջընթաց է գրանցել հետազոտական գործունեության խթանման ուղղությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այս ուղղությամբ բուհի սահմանած նպատակները՝ հետազոտական գործունեության ֆինանսավորումը մնում է անբավարար, ինչը կարող է սահմանափակել բուհի կարողությունը՝ վերածվելու գիտահենք կրթության և նորարարությունների խթանման կենտրոնի:

Բուհը պետք է առավել հստակ կենտրոնանա հետազոտական ուղղությունների զարգացման վրա՝ ներառելով առավել կարևոր ոլորտները, որոնք կարող են ազդեցություն ունենալ տարածաշրջանային և ոլորտային զարգացումների վրա: Գիտական խմբերի ձևավորումը և ուսանողների ավելի լայն ներգրավումը հետազոտական ծրագրերում կարող են այս ուղղության զարգացման առաջին քայլերը լինել:

ՎՊՀ-ն կարևոր դեր ունի մարզում՝ համագործակցելով դպրոցների, գործատուների և հասարակական կազմակերպությունների հետ: Բուհը իրականացնում է մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են հանրային իրազեկվածության բարձրացմանը և կրթական ծառայությունների թափանցիկության ապահովմանը: Սակայն հետադարձ կապի մեխանիզմները դեռևս ամբողջությամբ չեն ձևակերպված, ինչը սահմանափակում է բուհի գործունեության արդյունավետության գնահատումը: Կրթական ծրագրերի իրականացման արդյունքների և շրջանավարտների զբաղվածության վերլուծության հրապարակայնացումը նույնպես պակասում է, ինչը կարող էր ապահովել հանրային պատասխանատվության նկատմամբ ավելի մեծ վստահություն: Բուհին անհրաժեշտ է ներդնել հստակ հետադարձ կապի մեխանիզմներ և պարբերաբար գնահատել հանրային գործունեության ազդեցությունը՝ ապահովելով հասարակության ավելի լայն ներգրավումը:

Բուհն ակտիվորեն ներգրավվում է միջազգային ծրագրերում, մասնավորապես Էրազմուս+ ծրագրերի շրջանակներում, ինչը նպաստել է ուսանողների և աշխատակիցների շարժունության խթանմանը: Միջազգային գործընկերների հետ համագործակցության ընդլայնումը և կրթական ծրագրերի համատեղ իրականացումը բուհի ուժեղ կողմերից է: Այնուամենայնիվ, բուհը դեռևս չունի համակարգված մեխանիզմներ միջազգայնացման արդյունքների կայունությունը պահպանելու և դրանք կրթական ծրագրերի որակի վրա ազդեցիկ դարձնելու համար: Այս համատեքստում միջազգային գործընկերությունների հիման վրա հետազոտական նախագծերի իրականացման մակարդակը մնում է ցածր:

ՎՊՀ-ն անհրաժեշտություն ունի կենտրոնանալու երկարաժամկետ հետազոտական համագործակցությունների ձևավորման վրա և ստեղծելու միջազգայնացման արդյունքների վերլուծության մեխանիզմներ, որոնք կապահովեն դրանց ազդեցությունը բուհի զարգացման ուղղությունների վրա:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) կրթական ծրագրերի արդիականացումը և պրակտիկ բաղադրիչի ավելացումը,

2) պրակտիկ փորձառությամբ դասախոսների ներգրավումը դասավանդման և ավարտական աշխատանքների ղեկավարման գործընթացներում,
3) ուսանողներին մատուցվող ծառայությունների ընդլայնումը և խորհրդատվությունների իրականացումը,
4) միջազգային համագործակցությունների շնորհիվ կարողությունների զարգացման ծրագրերի իրականացումը և ենթակառուցվածքների զարգացումը,
5) հետազոտական գործունեության խթանումը և դասախոսների հետազոտական կարողությունների զարգացումը,
6) ուսումնառության և հետազոտության փոխկապակցման մեխանիզմների առկայությունը,
7) համալսարանի կայքի և սոցիալական հարթակների միջոցով համալսարանի գործունեության վերաբերյալ թափանցիկության ապահովումը:

Հաստատության թույլ կողմերն են.
1) աշխատաշուկայի պահանջների ամբողջական ուսումնասիրության բացակայությունը,
2) կառավարչական որոշումների կայացման համար անհրաժեշտ տվյալների ոչ լիարժեք հավաքագրումը և կիրառումը,
3) ֆինանսական միջոցների անբավարարությունը հետազոտական նպատակների իրականացման համար,
4) կառավարման մարմինների միջև հորիզոնական համագործակցության թուլությունը,
5) որոշումների կայացման գործընթացում շահակիցների ոչ բավարար ներգրավվածությունը,
6) որակի ապահովման գործիքների ու մեխանիզմների անկատարությունը և որակական վերլուծությունների պակասը:

Խորհրդատվություններ.
Առաքելությունը և նպատակները

1) Վերանայել բուհի ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականությունը՝ ապահովելու սահմանված նպատակների իրագործման համար անհրաժեշտ ֆինանսների տրամադրում և ռեսուրսների արդյունավետ կառավարում:
2) Հստակեցնել և կատարելագործել առաջընթացի գնահատման ցուցիչները՝ ներառելով քանակական և որակական չափելի ցուցանիշներ, որոնք կնպաստեն ռազմավարական ծրագրի արդյունավետ մշտադիտարկմանը և զարգացման ուղղությունների հստակեցմանը:

Կառավարումն ու վարչարարությունը

3) Հստակեցնել կառավարման մարմինների համագործակցությունը՝ համատեղելով միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքները՝ ապահովելու որոշումների կայացման արդյունավետ գործընթաց:

4) Խթանել բուհի ներքին շահակիցների նախաձեռնողականությունը և ներգրավվածությունը կառավարման մարմիններում իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացում:
5) Սահմանել բուհի գործունեության վրա ազդող գործոնների շրջանակը և պարբերաբար տվյալներ հավաքագրել դրանց վերաբերյալ՝ ունենալու հավաստի տվյալներ կառավարչական որոշումների կայացման համար:
6) Փոխկապակցել կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորումները՝ նախատեսելով դրանց իրականացման համար անհրաժեշտ մարդկային ու ֆինանսական ռեսուրսներ:
7) Ներդնել պլանների ու հաշվետվությունների մշտադիտարկման մեխանիզմներ՝ համապատասխան գնահատման ցուցիչների հիման վրա:

Մասնագիտության կրթական ծրագրերը

8) Կիրառել դասավանդման մեթոդների ընտրության հստակ քաղաքականություն, որը կապահովի «վերջնարդյունք–դասավանդման մեթոդ–գնահատում» փոխկապակցվածությունը բոլոր կրթական ծրագրերում:
9) Ամրապնդել միջառարկայական կապերը՝ զարգացնելով ամբիոնների միջև համագործակցությունը, մշակելով համատեղ դասընթացներ և նախագծեր, ինչպես նաև ապահովելով տեսական և գործնական բաղադրիչների սերտ կապ ուսումնական պլաններում:
10) Խթանել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը՝ ներառելով մասնագիտական առարկաներում վիճակագրական վերլուծության և մոդելավորման ծրագրերի ինտեգրումը և կազմակերպելով դասախոսների վերապատրաստումներ՝ ՏՏ հմտությունների զարգացման համար:
11) Ընդլայնել բենչմարքինգի համակարգված կիրառությունը՝ վերածելով միջազգային համեմատությունների արդյունքները գործնական բարելավումների, ստեղծելով ամփոփ հաշվետվություններ, որոնք կկիրառվեն ՄԿԾ-ների թիրախային վերանայման համար:
12) Հստակեցնել գնահատման չափանիշները՝ մշակելով միասնական մոտեցումներ, ապահովել գնահատման մեթոդների բազմազանություն և դրանց հստակ կապակցում ուսումնառության ակնկալվող արդյունքներին:
13) Կրթական ծրագրերի բարելավումներն իրականացնել բոլոր շահակիցներից հավաքագրված հավաստի տվյալների հիման վրա՝ ամփոփելով և վերլուծելով ուսումնական գործընթացի և ավարտական աշխատանքների վերաբերյալ տվյալները:

Ուսանողները

14) Դիտարկել նախապատրաստական դասընթացների շրջանակն ընդլայնելու հնարավորությունները:
15) Մշակել տվյալների վերլուծության համակարգ, որը հիմնված կլինի գործատուների և շրջանավարտների հետ համագործակցության արդյունքների ու բազաների պարբերական թարմացման վրա:

16) Վերակազմակերպել և ակտիվացնել շրջանավարտների ակումբը՝ պարբերաբար կազմակերպելով մասնագիտական զարգացման միջոցառումներ, շրջանավարտների և ուսանողների ցանցային հանդիպումներ փորձի փոխանակման նպատակով։
17) Կանոնակարգել հետազոտական աշխատանքներում ներգրավվելու համար ուսանողներին տրամադրվող աջակցության մեխանիզմները և ընդլայնել նրանց իրազեկման ու ներգրավման միջոցառումները։

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

18) Ներդնել դասախոսական կազմի գնահատման բազմաբաղադրիչ համակարգ, որը կներառի ուսանողական հարցումները, դասալսումները, մասնագիտական առաջընթացը, հետազոտական գործունեությունը և ներգրավվածության այլ գործոններ՝ ապահովելու գնահատման գործընթացի ամբողջականությունն ու օբյեկտիվությունը։
19) Կանոնակարգել մենթորության գործընթացը սկսնակ դասախոսների համար՝ սահմանելով պատասխանատվություններ և արդյունքների չափելի ցուցանիշներ, ինչպես նաև նախատեսել աջակցման գործիքակազմ մենթորների համար։
20) Մշակել դասախոսական կազմի կայունության ապահովման մեխանիզմներ՝ ձևավորելով դասախոսական կազմի ռեզերվ, ներառելով ուսումնական բեռնվածության օպտիմալացման և երիտասարդ մասնագետների զարգացմանը նպաստող միջոցառումներ։
21) Կազմակերպել դասախոսական կազմի մասնագիտական կատարելագործման դասընթացներ՝ կիրառելով ներքին ռեսուրսները և արտաքին համագործակցությունների շրջանակը։
22) Վերանայել և կատարելագործել վարչական անձնակազմի գնահատման մեխանիզմները և գնահատման արդյունքներն օգտագործել անձնակազմի զարգացման ծրագրերի մշակման համար։

Հետազոտությունը և զարգացումը

23) Ամրապնդել գործատուների հետ համագործակցությունը՝ հետազոտական աշխատանքների համաղեկավարության և թեմատիկ առաջարկությունների միջոցով։
24) Ապահովել ուսանողների և դասախոսների համատեղ հետազոտությունների իրականացման հնարավորությունները՝ խթանելով միջազգային տպագրությունները։
25) Նախատեսել պարբերական վերապատրաստման դասընթացներ՝ ուղղված երիտասարդ դասախոսների և ուսանողների գիտահետազոտական հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը։
26) Շարունակաբար խթանել գիտական խմբերի գործունեությունը՝ տրամադրելով տեխնիկական և նյութական աջակցություն և ապահովելով միջազգային համագործակցություն։

27) Մշակել և ներդնել գիտահետազոտական արդյունքների առևտրայնացման հստակ քաղաքականություն՝ գործուն մեխանիզմներով, բյուջեի մուտքերի բազմազանեցման ռազմավարական նպատակի իրականացման համար։

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

28) Գնահատել բուհում առկա ռեսուրսները՝ վերհանելու կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների անհրաժեշտությունը, միջոցներ հատկացնելու կրթական ծրագրերի համաչափ զարգացման նպատակով։
29) Քայլեր ձեռնարկել մասնագիտական գրականության համալրման ուղղությամբ և ապահովել ուսանողների ու դասախոսների հասանելիությունը գրադարանային առցանց աղբյուրներին։
30) Իրականացնել ֆինանսական մուտքերի և ծախսերի երկարաժամկետ պլանավորում՝ ուղղված ուսումնական միջավայրի շարունակական բարելավմանը և զարգացմանը։
31) Ներդնել ֆինանսական ծախսերի արդյունավետությունը գնահատելու համար անհրաժեշտ մեխանիզմներ և ցուցիչներ։
32) Շարունակաբար ընդլայնել ֆինանսական այլընտրանքային աղբյուրների ներգրավման հնարավորությունները բուհի ֆինանսական կայունությունն ապահովելու նպատակով։

Հասարակական պատասխանատվությունը

33) Գնահատել հասարակության հետ հետադարձ կապերի արդյունավետությունը և ստացված տվյալները ներառել հետագա գործընթացների պլանավորման և բարելավման մեջ։
34) Որդեգրել բաց գիտության քաղաքականություն՝ ապահովելով համալսարանի գիտական արդյունքների հասանելիությունը մարզի և տարածաշրջանի շահակիցների համար։

Արտաքին կապերը և միջազգայնացումը

35) Գնահատել արտաքին կապերի ու միջազգայնացման հարցերով զբաղվող ենթակառուցվածքի ածխատանքը՝ միջազգայնացման գործընթացների կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով։
36) Իրականացնել ներքին շահակիցների՝ օտար լեզվի իմացության գնահատում և ըստ արդյունքների իրականացնել լեզվաիմացության բարձրացմանն ուղղված պարբերական միջոցառումներ։

Որակի ներքին ապահովման համակարգը

37) Վերանայել բուհի որակի ապահովման քաղաքականությունը՝ հստակ խնդիրներ դնելով համակարգի առջև և սահմանելով արդյունավետության գնահատման ցուցիչներ։
38) Պլանավորել որակի ապահովման համակարգի գործողությունները՝ ըստ սահմանված արդյունավետության ցուցիչների։

39) Հստակեցնել տվյալների հավաքագրման մեթոդաբանությունը, մեխանիզմներն ու պարբերականությունը՝ ապահովելու բուհի գործունեությունն ընդգրկող բոլոր ոլորտների վերաբերյալ հավաստի տվյալներ կառավարչական որոշումների արդյունավետության բարձրացման նպատակով։
40) Ռեսուրսներ հատկացնել որակի ապահովման պատասխանատուների մասնագիտական կարողությունների զարգացման նպատակով։
41) Վերանայել ինքնագնահատման գործընթացները՝ դրանց հիմքում դնելով քանակական ու որակական վերլուծությունները։
42) Ընդլայնել ներքին ու արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի մեխանիզմները՝ որակի ապահովման գործընթացների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու և թափանցիկությունն ավելացնելու նպատակով։

_____

Անուշավան Մակարյան
Փորձագիտական խմբի ղեկավար

30-ը հունվարի, 2025 թ.

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Վանաձորի պետական համալսարանը կարևորում է կրթական ծրագրերի արդիականացման գործընթացը՝ դրանք համապատասխանեցնելով աշխատաշուկայի պահանջներին և եվրոպական չափանիշներին: Համալսարանը կիրառում է ներքին և արտաքին գնահատման մեխանիզմներ, որոնք ապահովում են ուսումնական ծրագրերի շարունակական բարելավումը:

ՎՊՀ-ն ունի միջազգայնացման քաղաքականություն, որը ներառում է կրթության և գիտության միջազգայնացումը, միջազգային համագործակցության զարգացումը և միջազգային վարկանիշի ամրապնդումը: ՎՊՀ-ն հաջողությամբ կիրառում է Erasmus+ ծրագրերը՝ ձևավորելով համագործակցություններ մի շարք բուհերի հետ և նպաստելով ուսանողների ու աշխատակիցների մասնագիտական զարգացմանը: Սակայն, չնայած որոշ հաջողություններին, գիտական հետազոտական համագործակցության և միջազգային գործընկերների հետ երկարաժամկետ նախագծերի զարգացման ոլորտներում առկա են թերացումներ:

Հատկապես կարևոր է ուսանողակենտրոն ուսուցման անցումը, որը համարվում է առաջնահերթություն ԵԲԿՏ շրջանակում: ՎՊՀ-ի EMI կենտրոնի ստեղծումը և SMARTI ծրագրի շրջանակներում իրականացված դասընթացները խթանել են ուսանողների ինքնավարության և ստեղծագործականության զարգացումը, սակայն ուսանողակենտրոն մոտեցման ներդրումը դեռևս պահանջում է լրացուցիչ քայլեր, ներառյալ ուսումնական գործընթացի ձևավորման և գնահատման փուլերում ուսանողների ավելի լայն ներգրավումը: Այս առումով առաջարկվում է կազմակերպել վերապատրաստման դասընթացներ բոլոր դասախոսների համար՝ ուսանողակենտրոն մեթոդների արդյունավետ կիրառման նպատակով:

Համալսարանի որակի ապահովման գործընթացները մասնակիորեն համապատասխանում են Եվրոպական որակի ապահովման ստանդարտների և ուղեցույցների (ESG) պահանջներին: Բուհին անհրաժեշտ է ESG սկզբունքների մասին իրազեկվածության մակարդակի բարձրացում և որակի ապահովման համակարգերի բարելավում՝ շահակիցների ավելի լայն ներգրավմամբ: Որակի ապահովման գործընթացների արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է ավելի ինտեգրված մոտեցում, որը կնպաստի համալսարանի ռազմավարական նպատակների իրականացմանը:

Տեղական համագործակցության առումով ՎՊՀ-ն ակտիվ կապեր ունի մարզի՝ հատկապես դպրոցների և գործատուների հետ, ինչը նպաստում է կրթության և աշխատաշուկայի միջև կապի ամրապնդմանը: Սակայն հետադարձ կապի մեխանիզմների բացակայությունը խանգարում է միջոցառումների արդյունավետության ամբողջական գնահատմանը: Այս տեսանկյունից բուհին առաջարկվում է ներդնել հստակ մեխանիզմներ, որոնք կվերլուծեն այս գործունեությունների ազդեցությունը և կաջակցեն դրանք բարելավելուն:

ՎՊՀ-ն մեծապես օգտվում է միջազգային համագործացություններից, սակայն անհրաժեշտ է զարգացնել երկարաժամկետ հետազոտական համագործակցությունները և

խթանել գիտական խմբերի ստեղծումը՝ հիմնվելով համալսարանի ուժեղ կողմերի վրա: Այս գործընթացները պահանջում են ինչպես ներքին ռեսուրսների վերաձևակերպում, այնպես էլ միջազգայնացման ռազմավարության բարելավում՝ կենտրոնանալով նորարարական ծրագրերի և նախագծերի զարգացման վրա: ՎՊՀ-ի այս քայլերը կարող են նպաստել համալսարանի կրթական, գիտական և կառավարման համակարգերի համապարփակ բարելավմանը՝ ապահովելով նրա առավելագույն ինտեգրումը ԵԲԿՏ-ին:

Խորհրդատվություններ

- **Միջազգայնացման զարգացում**
  Շարժունակության ծրագրերին դիմելու հնարավորությունը ուսանողների համար պետք է հասանելի լինի ամբողջ ուսումնական գործընթացի ընթացքում: Անհրաժեշտ է տրամադրել անհատական խորհրդատվություն շարժունության ծրագրից վերադառնալուց հետո ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ, որպեսզի ուսանողները հստակ պատկերացնեն իրենց շարժունության ծրագրերի ընթացքը:
- **Գիտական համագործակցության ամրապնդում**
  ՎՊՀ-ն պետք է կենտրոնանա իր գիտական ուժեղ կողմերի վրա՝ զարգացնելու նախագծային համագործակցություններ միջազգային գործընկերների հետ: Միջազգային կոնֆերանսների մասնակցությունը և համատեղ հետազոտական նախագծերը կարող են լինել այս ուղղությամբ հաջորդ քայլերը:
- **Հետադարձ կապի մեխանիզմների բարելավում**
  Անհրաժեշտ է ներդնել հետադարձ կապի մեխանիզմներ՝ բաց դռների միջոցառումների արդյունավետությունը գնահատելու համար: Արդյունքները պետք է վերլուծվեն ՈԱ կենտրոնից կողմից և համալսարանի ղեկավարության համար հիմք դառնան բարելավումների համար:
- **Տեղական և միջազգային համագործակցությունների ամրապնդում**
  Տեղական գործընկերների հետ կապերի խորացումը և միջազգային պայմանագրերի երկարաձգումը կարող են ապահովել կայուն համագործակցություն: ՎՊՀ-ն կարող է զարգացնել անձնակազմի և ուսանողների փոխանակման ծրագրերի հնարավորությունները և ընդլայնել շարժունությունը:
- **Լեզվական կարողությունների զարգացում**
  Համալսարանի ուսանողների և աշխատակիցների օտար լեզվի իմացության մակարդակը պետք է բարձրացվի, ինչը կնպաստի միջազգային համագործակցության հնարավորությունների ընդլայնմանը: EMI դասընթացների ներդրումը բոլոր կրթական ծրագրերում պետք է շարունակական լինի:
- **Որակի ապահովման համակարգերի հզորացում**
  ESG սկզբունքները պետք է դառնան համալսարանի քաղաքականության և որակի ապահովման գործընթացների կարևոր բաղադրիչ: Դասընթացների և պարբերական վերանայումների միջոցով անհրաժեշտ է ապահովել համալսարանի շահակիցների տեղեկացվածությունը և կարիքների վերհանումը:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[1] կողմից.

Անուշավան Մակարյան՝ Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար, փորձագիտական խմբի ղեկավար:

Գեղամ Կարոյան՝ տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալ, փորձագիտական խմբի անդամ:

Մարե Խաչատրյան՝ տնտեսագիտության թեկնածու, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ֆինանսներ» ամբիոնի դոցենտ, փորձագիտական խմբի անդամ:

Մագդալենա Լիբ՝ Ֆրիդրիխ-Ալեքսանդր Էրլանգեն-Նյուրնբերգ համալսարանի Իրավական հարցերի, դասավանդման ու հետազոտությունների որակի կառավարման բաժնի ղեկավարի տեղակալ, փորձագիտական խմբի միջազգային անդամ:

Զարուհի Հակոբյան՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Տեղեկատվական անվտանգություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման բաժնի մասնագետ **Մերի Բարսեղյանը:**

Թարգմանությունը կատարել են **Վարդանուշ Բաղդասարյանը** և **Ռոզա Բաբայանը**:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և քարտուղարությունը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանը դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը, և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը:

[1] Հավելված 1. Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականներ

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ՎՊՀ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ինքնավերլուծություն

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է ինքնավերլուծության զեկույցը՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Ինքնավերլուծությունը հետ է վերադարձվել հաստատություն՝ սահմանված պահանջներին չբավարարելու պատճառով: Խնդիրների շտկումից հետո հաստատությունը ներկայացրել է վերանայված ինքնավերլուծությունը, որը համապատասխանել է սահմանված միասնական ձևաչափին, առկա են եղել համապատասխան հիմքերը և ձևաչափով պահանջվող հավելվածները: Այնուհետև ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերի փաթեթը, համալսարանի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է համալսարանի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում՝ ըստ ձևաչափի պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց:

Առաջնորդվելով Փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և այլն:

Նախնական այց

2024 թվականի հոկտեմբերի 6-ին Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում տեղի է ունեցել հանդիպում համալսարանի ղեկավար կազմի հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը[2], ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված պայմանները:

[2] Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույց

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2024թ. հոկտեմբերի 7-ից 10-ը ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, և հստակեցնել հետագա քայլերը:

Այցին ներկա է գտնվել փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը:

Փորձագիտական այցը սկսվել է համալսարանի ռեկտորի հետ հանդիպմամբ և ավարտվել հաստատության ղեկավար կազմի հետ հանդիպմամբ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, ամբիոնի վարիչները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են բուհի կողմից նախապես տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Փորձագիտական խումբը նախատեսված այցի ընթացքում իրականացրել է նաև փաստաթղթերի ուսումնասիրություն[3], ռեսուրսների դիտարկում և դասալսումներ:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները: Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների ու ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում՝ նախատեսելով գնահատման երկաստիճան սանդղակ՝ բավարար և անբավարար:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը գնահատումն իրականացրել է համալսարանի լրացրած էլեկտրոնային հարցաշարի, ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, իրականացված դասալսումների, փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում:

Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա փորձագիտական խումբը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը:

Միջազգային փորձագետը պատրաստել է նաև գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք: Փաստաթղթերը թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբին: Գործընկերային գնահատման կարծիքը ներառվել է զեկույցի տեքստում:

Փորձագիտական խմբի անդամների հաստատումից հետո նախնական զեկույցը տրամադրվել է համալսարանին:

[3] Հավելված 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

Փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ իր դիտարկումները բուհը ներկայացրել է 2025 թ. հունվարի 15-ին: 2025 թ. հունվարի 22-ին ՈԱԱԿ-ում տեղի է ունեցել հանդիպում բուհի ղեկավար կազմի և փորձագիտական խմբի անդամների միջև: Դիտարկումների քննարկումից հետո փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը հաստատվել է խմբի բոլոր անդամների կողմից:

Մերի Բաբսեղյան
Փորձագիտական խմբի համակարգող

30-ը հունվարի, 2025 թ.

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Վանաձորի պետական համալսարանի պատմությունը սկսվում է 1969 թ.-ից: Այն Կիրովականի (հետագայում՝ Վանաձորի) պետական մանկավարժական ինստիտուտի իրավահաջորդն է: Ի սկզբանե բուհի հիմնադրումը նպատակ ուներ ապահովելու Հայաստանի հյուսիսարևելյան տարածաշրջանի կրթօջախները մանկավարժական կադրերով:

Գործունեության առաջին տարում Ինստիտուտում կրթությունը իրականացվել է ուսուցման հեռակա ձևով, և 1970 թ.-ին ներդրվել է նաև առկա ուսուցման համակարգը: 1989թ.-ին կազմավորվել և շուրջ 3 տարի գործել է Ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը:

2001 թ.-ից ՄՈՒՀ-ը կրում է հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի անունը: 2002-2014 թթ.-ին Ինստիտուտը գործել է որպես պետական ոչ առևտրային կազմակերպություն: 2014 թ.-ին ՄՈՒՀ-ը ստացել է Համալսարանի կարգավիճակ, իսկ 2016 թ.-ին վերակազմավորվել է «Վանաձորի պետական համալսարան» հիմնադրամի:

2008 թ.-ից ՎՊՄԻ ՊՈԱԿ-ին է միացել 2002թ.-ից ՀՀ կառավարության որոշմամբ գործող Զորիկ Գևորգյանի անվան վարժարանը (այժմ՝ ՎՊՀ հենակետային վարժարան), և 2011թ.-ին կազմավորվել է ՎՊՀ քոլեջը, որն իրականացնում է միջին մասնագիտական կրթություն:

Կրթություն. Համալսարանում ներդրված է կրթության եռաստիճան համակարգ: Բակալավրիատում և մագիստրատուրայում առաջին անգամ ընդունելություն է կատարվել 2008 թ.-ին, ասպիրանտուրայում՝ 2006 թ.-ին:

Ներկայումս առկա ուսուցման համակարգում բակալավրի կրթական ծրագրով ուսումնական գործընթաց է կազմակերպվում 25 մասնագիտությունների, իսկ մագիստրոսի կրթական ծրագրով՝ 15 մասնագիտությունների ուղղությամբ: Հեռակա ուսուցման համակարգում ներդրված է բակալավրի 20 կրթական ծրագիր և մագիստրոսական 1 կրթական ծրագիր: Կրեդիտային համակարգը Համալսարանում ներդրվել է 2007 թ.-ից:

Համալսարանում գործում են 3 ֆակուլտետներ՝ հասարակական գիտությունների, հումանիտար գիտությունների և բնական գիտությունների: Ուսումնագիտական գործընթացը կազմակերպվում է 8 մասնագիտական ամբիոնների միջոցով:

Հետազոտություն. Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանը կարևորում է հիմնարար և կիրառական հետազոտությունների պլանավորումը և իրականացումը: Համալսարանը ձգտում է դառնալ տարածաշրջանում գիտական գաղափարների հղացման և գիտական նվաճումների ու նորարարությունների փոխանցման (տրանսֆեր) խթանիչ կենտրոն:

Գիտահետազոտական գործունեության իրականացումը, զարգացումը և կապը ուսումնառության հետ ամրագրված է՝ «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2021-2025 թթ. ռազմավարական ծրագրում և Վանաձորի Հ.

Թումանյանի անվան պետական համալսարանի գիտության ոլորտի զարգացման 2023-2025 թթ. ռազմավարության մեջ:

Միջազգայնացում. Միջազգայնացումը Համալսարանի ռազմավարական առաջնահերթություններից է՝ ուղղված առաջատար բուհերի և միջազգային կառույցների հետ արդյունավետ համագործակցության միջոցով ժամանակակից պահանջների համաձայն բարձրորակ մասնագետների պատրաստման և հետազոտության զարգացմանը, բուհի ուսանողական, վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի միջազգային շարժունության նոր հնարավորությունների ստեղծմանը, ինչպես նաև բուհի մրցունակության բարձրացմանը ազգային և միջազգային մակարդակներում:

Որակի ապահովում. Որակի ապահովման ներքին համակարգի կատարելագործումը որպես նպատակ սահմանված է Համալսարանի 2021-25 թթ.-ի ռազմավարական ծրագրում: Նպատակի իրականացման համար կարևորվել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ որակի ապահովման քաղաքականության կատարելագործումը, որակի ապահովման մեխանիզմների և գործիքակազմի բարելավումը, շահակիցների մասնակցության մեխանիզմների կատարելագործումը, հանրային համագործակցության զարգացման որակի ապահովման մեխանիզմների բարելավումը:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր.՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

ՎՊՀ-ն առաջնորդվում է 2021-2025թթ. Ռազմավարական ծրագրով, որը մշակելիս հաշվի է առել նաև 2019 թ. ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբի կողմից տրամադրված խորհրդատվությանը՝ հստակեցնելու ՎՊՀ առաքելությունը և մշակելու առաջիկա տարիների ռազմավարական ծրագիր՝ շեշտելով հաստատության, տարածաշրջանի զարգացման առանձնահատկությունները: Հաստատության առաքելությունն է «տարածաշրջանում դառնալ կրթական, գիտական գործունեություն իրականացնող և նորարարական գաղափարների փոխանցման խթանիչ կենտրոն, որի հիմնական նպատակն է պատրաստել աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին ու մարտահրավերներին պատրաստ որակյալ և մրցունակ մասնագետներ»:

Սահմանված առաքելությանը հասնելու համար ՌԾ-ում առանձնացված է 5 նպատակ (բարձր որակավորում ունեցող և մրցունակ մասնագետների պատրաստման գործընթացի ապահովում, տարածաշրջանում գիտական գաղափարների հղացման և գիտական նվաճումների ու նորարարությունների փոխանցման (տրանսֆեր) խթանիչ կենտրոն դառնալու ձգտում, համալսարանի կառավարման համակարգի բարելավում, համալսարանի միջազգայնացման գործընթացի ընդլայնում, որակի ապահովման համակարգի կատարելագործում)՝ յուրաքանչյուրը իր խնդիրներով, միջոցառումներով և քայլերով: Բուհի կողմից սահմանված խնդիրների ուսումնասիրությունը և դրանց համադրումը նպատակներին՝ ցույց է տալիս, որ դրանք ընդգրկում են բուհի զարգացման հիմնական ուղղությունները՝ ուղղված լինելով կրթական, գիտական և կառավարման գործընթացների բարելավմանը: Այսուհանդերձ, բուհի բյուջեի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ բոլոր նպատակների իրականացման համար են հատկացված համապատասխան ֆինանսական միջոցներ: Այսպես օրինակ, փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ բուհի ներքին և արտաքին շահակիցները կարևորում են բուհի կողմից հետազոտահենք կրթություն տրամադրելու առաքելությունը, սակայն նախատեսված ֆինանսական միջոցները կազմում են բյուջեի ընդամենը 1.35 %-ը (2024 թ.-ի համար):

ՎՊՀ ՌԾ-ում տեղ են գտել նաև բուհի տեսլականը, արժեքները, իրավիճակի վերլուծությունը, ռիսկերի նվազեցմանն ուղղված աշխատանքները, առաջընթացի գնահատման ցուցիչները:

Ըստ փորձագիտական խմբի ուսումնասիրությունների՝ ՎՊՀ վարած քաղաքականության ու ծավալած գործունեության և բուհի առաքելության

համահունչությունը ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին (ՈԱՇ) հիմնավորվում է այնքանով, որ ՎՊՀ-ն իր կրթական գործունեությունը իրականացնում է ՈԱՇ-ի 4-8-րդ մակարդակներում: Հաշվի առնելով, որ բուհի առաքելությամբ սահմանված է պատրաստել աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին ու մարտահրավերներին պատրաստ որակյալ և մրցունակ մասնագետներ՝ փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ աշխատաշուկայի ամբողջական ուսումնասիրություն և ըստ դրա կրթական ծրագրերի ուղղությունների սահմանում բուհը չի իրականացրել: Այնուամենայնիվ, փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ բուհը մարզի համար պատրաստում է համապատասխան կարողություններ ունեցող մասնագետներ (հատկապես՝ մանկավարժներ), և շրջանավարտները իրենց մասնագիտական գործունեությունը հաճախ շարունակում են մարզի կազմակերպություններում:

1.2 ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

ՎՊՀ-ն իր 2021-2025 թթ. ՌԾ-ում նշում է, որ «նոր ռազմավարության նպատակն է ստեղծել համակարգ, որն ուղղված կլինի ներքին և արտաքին շահակիցների կարիքների բավարարմանը և գործունեության բոլոր ոլորտներում մատուցվող ծառայություններով կարող է դիմակայել արտաքին և ներքին մարտահրավերներին՝ հնարավորություն տալով ուսանողներին ստանալ բարձրորակ կրթություն, իսկ գործատուներին՝ ունենալ որակյալ մասնագետներ»:

Ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքային խմբում ընդգրկվել են համալսարանի ռեկտորը, գիտական աշխատանքների գծով պրոռեկտորը, չորս ՊԴ կազմի ներկայացուցիչներ, Գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժնի միջազգային համագործակցության և դրամաշնորհների խթանման մասնագետը: Հարկ է նշել, որ աշխատանքային խմբում բացակայում են արտաքին շահակիցները և ուսանողական կազմի ներկայացուցիչները: Մյուս կողմից, փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ գործատուները ներկայացրել են իրենց առաջարկությունները ՌԾ-ի տարբեր ուղղությունների վերաբերյալ ծրագրի նախնական տարբերակի մշակումից հետո: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմներն են հարցումները, կրթական ծրագրերի մշակման, վերանայման խմբերում նրանց ներգրավումը:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ բուհի ներքին և արտաքին շահակիցները բուհի զարգացման ուղղությամբ համանման պատկերացումներ ունեն՝ շեշտադրելով մարզում բուհի դերը աշխատաշուկայի համալրման նպատակով: Նախորդ հավատարմագրումից հետո աճել է նաև արտաքին շահակիցների ներգրավումը որպես դասախոսներ, պրակտիկայի ղեկավարներ, ինչը հնարավորությունն է տվել բուհին արտաքին ազդակները ստանալ նաև ոլորտային ներկայացուցիչներից (դպրոցներ, գործընկեր կազմակերպություններ, բուհեր): Այսկերպ գործատու ներկայացուցիչները բուհին առաջարկներ են ներկայացրել կրթական ծրագրերի բարելավման, պրակտիկ ուղղվածության, միջգիտակարգային հետազոտությունների իրականացման ուղղությամբ:

1.3 ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

ՎՊՀ-ն իր առաքելության ու նպատակների իրականացման, դրանց արդյունքների գնահատման և բարելավման նպատակով կարևորում է ՎՊՀ 2021-2025 թթ. ռազմավարական ծրագրի և բարելավման գործողությունների պլանների իրականացման մշտադիտարկման հանձնաժողովի ստեղծումը, որը հետևում է 2021-2025թթ. ՌԾ-ի իրականացման գործողությունների պլանի և 2021-2025թթ. բարելավման գործողությունների պլանի արդյունավետ իրականացմանը: Այս հանձնաժողովում ընդգրկված են համալսարանի ռեկտորը, որակի ապահովման կենտրոնի ղեկավարը, ուսումնական և գիտական աշխատանքների գծով պրոռեկտորները, հասարակական և բնական գիտությունների ֆակուլտետների դեկանները, կրթական բարեփոխումների և վերապատրաստման կենտրոնի ղեկավարը: Հանձնաժողովում ընդգրկված չեն ՊԴ կազմի ներկայացուցիչներ և ուսանողներ: Հանձնաժողովի կողմից մշակվել, և ներդրվել են ամբիոնների ու ստորաբաժանումների տարեկան աշխատանքային պլանների և հաշվետվությունների ձևաթղթերը, սահմանվել է աշխատանքային պլանների և հաշվետվությունների ներկայացման ժամանակացույց: Ըստ հաշվետվությունների ձևաթղթերի՝ տարբեր ստորաբաժանումների կողմից կազմված տարեկան հաշվետվությունները քննարկվում են համապատասխան մարմիններում (ամբիոնների նիստեր, ֆակուլտետների խորհուրդներ, գիտական խորհուրդներ): Սակայն, դրանցում տրված են գնահատականներ ՌԾ-ի առանձին միջոցառումների կատարման վերաբերյալ, և հստակ չէ ՌԾ համապատասխան նպատակին հասնելու չափը: Այս հաշվետվությունները միավորվում են համալսարանի տարեկան հաշվետվության մեջ, որը ռեկտորի կողմից ներկայացվում է հոգաբարձուների խորհրդին: Սակայն ինչպես ցույց են տալիս փորձագիտական խմբի կողմից այս հաշվետվությունների շուրջ կատարված վերլուծությունները, դրանք թույլ են փոխկապակցված ՌԾ նպատակների հետ, առավել շատ ներառում են ստորաբաժանումների գործառույթների շրջանակում կատարված գործունեության նկարագրությունը:

Առաքելության ու նպատակների իրականացման, դրանց արդյունքների գնահատման նպատակով կիրառվում են նաև ՎՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները: Տարեկան զեկույցներում հավաքագրված է տեղեկատվություն հետևյալ ուղղություններով՝ ընդունելություն և համակազմ, ուսումնական գործընթաց, ռեսուրսներ և կառավարում, ենթակառուցվածքներ, գիտություն և հետազոտություն, արտաքին կապեր և միջազգային համագործակցություն: Սակայն ներկայացված տվյալների ամփոփումներից չի երևում դրանց հստակ կապը ՌԾ նպատակների և դրանց հասանելիության հետ:

ՎՊՀ 2021-2025 թթ. ՌԾ իրականացման գործողությունների պլանում սահմանված է գործողությունը, դրան հասնելու քայլերը, ռեսուրսները, վերջնարդյունքը, պատասխանատուները, ժամանակահատվածը, ռիսկերը և ազդեցության գնահատման ցուցիչները: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ հստակ չեն բյուջեից տրամադրվող ֆինանսական հատկացումների չափերը, իսկ առաջընթացի գնահատման ցուցիչները երբեմն չափելի չեն: Այսպես օրինակ ցուցիչներ են սահմանված դիմորդների թվի հնարավոր ավելացումը, գիտահետազոտական ծրագրերում և դրամաշնորհներում ներգրավված ուսանողների և երիտասարդ հետազոտողների առկայությունը, ուսանողների և աշխատակիցների շարժունության կարգը և այլն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևորում է բուհի առաքելությունը հստակեցնելու ուղղությամբ նախորդ հավատարմագրումից հետո իրականացված քայլերը, ինչպես նաև գիտական գործունեություն իրականացնելու և նորարարական գաղափարների փոխանցման խթանիչ կենտրոն դառնալու, միջազգայնացման գործընթացները ընդլայնելու համալսարանի շեշտադրումը, ինչը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել բուհի զարգացման առաջիկա ուղղությունների մասին: Դրական է՝ այս պատկերացումներն ընդունելի են նաև արտաքին ու ներքին շահակիցների կողմից, նրանք կիսում են բուհի զարգացման տեսլականն ու սահմանած նպատակները: Այս համատեքստում փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է հստակորեն առանձնացնել մարզի զարգացմանն ուղղված հետազոտական ուղղությունները, ինչը թույլ կտա իրագործել բուհի առաքելությունը, ծառայեցնել բուհի ներուժը Վանաձոր քաղաքի ու մարզի կարիքների, աշխատաշուկայի պահանջների ուսումնասիրմանն ու բավարարմանը: Բուհի ռազմավարական ծրագիրը համահունչ է իր առաքելությանը, սակայն բյուջեի միջոցների բաշխումը խոչընդոտում է բոլոր նպատակների ամբողջական իրականացմանը: Արդյունքում հետազոտահենք կրթության զարգացումը թերֆինանսավորումը կարող է սահմանափակել բուհի ներուժը՝ դառնալու տարածաշրջանում գիտական կենտրոն:

Փորձագիտական խումբը մի կողմից դրական է համարում երկու կարևոր փաստաթղթերի մշակումը, մասնավորապես ՌԾ-ի իրականացման գործողությունների պլանը և նախորդ հավատարմագրման փորձագիտական խմբի խորհրդատվությունների հիման վրա ձևավորված բարելավման գործողությունների պլանը, սակայն մյուս կողմից փորձագիտական խումբը գտնում է, որ այս երկու փաստաթղթերի մեկտեղումը թույլ կտար առավել նպատակային գնալ դեպի ՌԾ նպատակների իրականացմանը: Դրական է, որ բուհը սահմանել է գործողությունները, դրանց հասնելու քայլերը, ռեսուրսները, վերջնարդյունքը, պատասխանատուները, ժամանակահատվածը, ռիսկերը և ազդեցության գնահատման ցուցիչները, սակայն մյուս կողմից փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ բյուջեի հատվածում հստակ սահմանված չեն ֆինանսական միջոցների մեծությունները, իսկ գնահատման ցուցիչները ոչ միշտ են չափելի, ինչը հնարավորություն կտար գնահատել բուհի առաջընթացը, բացահայտել դեռևս առկա խնդիրները ու դրա հիման վրա պլանավորել հաջորդ բարելավումները:

Կարևոր է համալսարանի կողմից առաքելության ու նպատակների իրականացման, դրանց արդյունքների գնահատման և բարելավման նպատակով ՌԾ-ի և բարելավման գործողությունների պլանների իրականացման մշտադիտարկման հանձնաժողովի ստեղծումը, սակայն այս հանձնաժողովի կողմից ներդրված հաշվետվությունները դեռևս թույլ չեն տալիս հստակ գնահատել բուհի գործունեության համահունչությունը ՌԾ-ի նպատակների հետ: Բացի դրանից, հանձնաժողովի աշխատանքներում ուսանողների և ՊԴ կազմի ներկայացվածության բացակայությունը կարող է սահմանափակել հանձնաժողովի կարողությունը՝ հստակ և բազմակողմանի գնահատելու ռազմավարական ծրագրի իրականացումը: Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհի կողմից հավաքագրված թվային տվյալները, որոնք ամփոփված են գնահատման առանցքային ցուցանիշներ փաստաթղթերում հետագայում թույլ կտան դրանք փոխկապակցել ռազմավարական ծրագրի նպատակների, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների հետ: Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ առաջընթացի գնահատման ցուցիչների հստակեցումը, քանակական ու որակական չափելի ցուցիչների սահմանումը

հնարավորություն կտա մշտադիտարկել ռազմավարական ծրագրի կատարման ընթացքը՝ ապահովելով ավելի ամբողջական պատկեր բուհի գործունեության և ռազմավարական առաջընթացի վերաբերյալ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո բուհը հստակեցրել է իր առաքելությունը, բուհի վարած գործունեությունը համապատասխանում է սահմանված առաքելությանը, շահակիցների պատկերացումները համընկնում են տարածաշրջանում բուհի նշանակության ու առաքելության վերաբերյալ, բուհը փորձել է ներդնել ռազմավարական ծրագրի առաջընթացի գնահատման գործիքներ, առկա են գնահատման առանցքային որոշ ցուցիչներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՎՊՀ կառավարման համակարգի բարելավումը Համալսարանի 2021-2025 թթ. ռազմավարական ծրագրի նպատակներից մեկն է: Համալսարանը կառավարման համակարգի բարելավման տեսանկյունից կարևոր է համարել կառուցվածքի փոփոխությունը և համապատասխանեցումը ՄՈՒՀ-ի 2021-2025թթ. ռազմավարությանը, կառավարման գործիքակազմի, ֆինանսատնտեսական քաղաքականության, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի, կառավարման համակարգի նյութատեխնիկական հիմքի բարեփոխումները:

2020թ. մայիսին Համալսարանի հոգաբարձուների խորհուրդը հաստատել է ՎՊՀ նոր կառուցվածքը, որն էականորեն տարբերվում է մինչ այդ գործող կառուցվածքից. 5 ֆակուլտետին փոխարինում է 3-ը, 23 բաժին-կենտրոններին՝ 14-ը, ներառյալ քոլեջը և վարժարանը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կառուցվածքի փոփոխությունների համար հիմք են հանդիսացել նախորդ հավատարմագրման խորհրդատվությունները, կառավարման արդյունավետության բարձրացման և սուղ ֆինանսական պայմանների պատճառով վարչական անձնակազմի ծախսերի նվազեցման միտումը: Առանց բոլոր շահակիցների հետ քննարկումների և ակնկալվող ռիսկերի հիմնավոր գնահատման իրականացված

կրճատումները միանշանակ չեն ընդունվել անձնակազմի կողմից[4]։ Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացված ՎՊՀ կառավարման համակարգի արդյունավետության գնահատման վերլուծությունում փոփոխությունները հիմնականում բացասական են գնահատվել։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներկայումս փոփոխություններն առավել ընկալելի են շահակիցների համար։ Այսուհանդերձ, դեռևս ստորաբաժանումների միջև համագործակցությունը և հորիզոնական կապերը թույլ են։ Հարկ է նշել, որ առկա է մեկ ստորաբաժանման կողմից խիստ տարատեսակ գործընթացների իրականացում. Գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժնում են մեկտեղված են բուհի գիտահետազոտական աշխատանքների, նորարարական նախագծերի, տեղեկատվության տարածման, հասարակայնության հետ կապի, բուհ-դպրոց կապի, միջբուհական և միջազգային համագործակցության խթանման գործառույթները[5]։

ՎՊՀ-ն կառավարվում է ՀՀ օրենսդրությամբ և «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրությամբ։ Բուհի կառավարումն իրականացվում է միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ՝ հիմնադրի, լիազոր մարմնի, Համալսարանի հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորի գործառույթների իրականացմամբ։

Ըստ կանոնադրության՝ Համալսարանի կառավարման մարմիններ են Հոգաբարձուների խորհուրդը և ռեկտորը։ Գիտական խորհուրդը կառավարման մարմին չէ, և բուհի կայքում ներկայացված ՎՊՀ կազմակերպական կառուցվածքում Գիտական խորհուրդը նշված չէ։ Այն համարվում է «պլանավորող, համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին», սակայն կայացնում է որոշումներ, որոնք կիրարկվում են ռեկտորի հրամանով։ Եթե ընթացակարգային խախտումներ չկան՝ ռեկտորը պարտավոր է ապահովել որոշումների կատարումը։

Ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որը խորհուրդների նիստերի միջև ընկած ժամանակահատվածում քննարկում է Համալսարանի գործունեությանը վերաբերող հարցերը, հետևում խորհուրդների որոշումների կատարման ընթացքին, կայացնում որոշումներ։

Կառավարման մարմնների (Հոգաբարձուների խորհրդի և ռեկտորի) իրավասությունները և պարտականությունները, ընտրության կարգը սահմանված են ՎՊՀ կանոնադրությամբ։ Հոգաբարձուների խորհուրդը գործում է իր կողմից հաստատված աշխատակարգով։ Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ խորհրդի գործունեությունը կրթական ծրագրերի ուղղությունների սահմանմանն ու նոր կրթական ծրագրերի ներդրմանը հիմնականում չի ուղղվում։ Հոգաբարձուների խորհուրդը կարևորում է կայունության ապահովումը բուհի գործունեության ոլորտներում, ուսանողների թվի աճը և ֆինանսական խնդիրների բացակայությունը։

Բուհի ստորաբաժանումները գործում են ըստ հաստատված կանոնադրությունների։ Մշակված են պաշտոնների անձնագրեր, որոնցում ներկայացված են տվյալ հաստիքի դերը, գործառույթները, իրավունքները, պարտականությունները, ենթակայությունը։ Ըստ անհրաժեշտության պաշտոնի անձնագրերը վերանայվում են ստորաբաժանումների

[4] Վերաձևակերպվել է բուհի հետ քննարկումների արդյունքում։
[5] Վերաձևակերպվել է բուհի հետ քննարկումների արդյունքում։

ղեկավարների կողմից ռեկտորի հանձնարարությամբ՝ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի հետ համատեղ:

Բուհն ունի 2017թ. հաստատված էթիկայի կանոնագիրք: Կանոնագրքում ղեկավար անձնակազմի էթիկայի կանոններ չկան սահմանված. կան ընդհանուր, դասախոսական և ուսանողական կազմի էթիկական վարքագծին վերաբերող կանոններ: Ըստ անհրաժեշտության կարող է ձևավորվել էթիկայի հանձնաժողով, որի անդամ կարող են հանդիսանալ պրոֆեսորադասախոսական և վարչական աշխատակազմերից ներկայացուցիչներ, սովորողներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ էթիկայի հանձնաժողովի ձևավորման անհրաժեշտություն բուհում չի արձանագրվել:

Ֆինանսների կառավարման նպատակով ՎՊՀ-ն մշակել է ֆինանսական քաղաքականություն, որի նպատակներն են ֆինանսների արդյունավետ կառավարումը, ֆինանսական կայունության ապահովումը, միջոցների ներգրավման բազմազանեցումը և ավելացումը, ծախսերի և ներդրումների օպտիմալացումը: Ռեկտորին կից գործում է ֆինանսատնտեսական հանձնաժողով, որն իրականացնում է Համալսարանի ֆինանսատնտեսական իրավիճակի վերլուծություն և ըստ այդմ կայացնում որոշումներ բյուջեի բաշխման վերաբերյալ: Բուհի կառուցվածքում ստեղծվել է նաև ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժին, որտեղ տարին 4 անգամ հավաքագրվում և ամփոփվում են ստորաբաժանումների կողմից ներկայացված աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների վերաբերյալ գնումների տեղեկագրերը:

Բուհի ֆինանսների կառավարման նպատակով մշակված ֆինանսական քաղաքականությունը հաստատվել է 2023թ. հոկտեմբերին և կիրառվել 2024թ. բյուջեում, որի համար հիմք են հանդիսացել նաև նախորդ տարվա բյուջեի կատարողականը, ստորաբաժանումների վերհանված կարիքները և հնարավոր մուտքերի վերլուծությունը:

2024թ. բուհի ծախսային հիմնական ուղղություններն են՝ աշխատավարձեր՝ 79%, աշխատակիցների խրախուսումներ՝ 1.03%, գիտահետազոտական աշխատանքների խթանման ֆոնդ՝ 1.35% և այլն: Այսպիսով, 2024թ. բյուջեում գործունեության հիմնական ոլորտների համար առանձնացված են ռեսուրսներ, իսկ տարեկան ծախսերի մոտ 3%-ը կազմում է պահուստային ֆոնդը: Բուհը պարբերաբար անցնում է ֆինանսական գործունեության աուդիտ, որի արդյունքները ներկայացվում են Հոգաբարձուների խորհրդին և հրապարակվում ՎՊՀ կայքում:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ բուհի վարչական կառույցների հաստիքները հիմնականում զբաղեցված են, ստորաբաժանումներն ապահովված են նյութական ռեսուրսներով և տեխնիկայով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մարզում մարդկային ռեսուրսների սղությամբ պայմանավորված՝ արտաքին միջավայրից բուհի համար երիտասարդ և որակյալ նոր վարչական աշխատակիցներ ներգրավելը բարդ է. այդ պատճառով հիմնականում փորձում են աճ ապահովել ներքին կադրերի համար՝ կազմակերպելով վերապատրաստումներ:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Համալսարանի կանոնադրության համաձայն՝ հոգաբարձուների խորհրդում ընդգրկված են պրոֆեսորադասախոսական անձնակազմից և ուսանողությունից 25-ական

տոկոս ներկայացուցիչներ: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ պրոֆեսորադասախոսական կազմից հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումները: Թեկնածուներն ընտրվում են գիտական խորհրդում և ներկայացվում լիազոր մարմին: Ուսանողների ներկայացուցիչներից հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում ֆակուլտետների ուսանողական խորհուրդները: Համալսարանի ուսանողական խորհուրդն ընտրում է առաջադրած թեկնածուներին և ներկայացնում լիազոր մարմին:

Համալսարանի կանոնադրության և գիտական խորհրդի կանոնակարգի համաձայն գիտական խորհրդի անդամների թվի 25-ական տոկոսը սովորողներ և դասավանդողներ են: Ուսանողներին առաջադրում են համապատասխան ֆակուլտետների ուսանողական խորհուրդները, իսկ ընտրությունն իրականացնում է Համալսարանի ուսանողական խորհուրդը: Դասավանդողներին առաջադրում են ամբիոնները, ընտրություններն իրականացվում են ֆակուլտետների գիտական խորհուրդներում:

Ֆակուլտետների կանոնադրության համաձայն՝ ֆակուլտետի գիտական խորհուրդներում նույնպես ընդգրկված են 25-ական տոկոս սովորողների և դասավանդողների ընտրովի ներկայացուցիչներ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ տարբեր աշխատախմբերի և գիտական խորհրդին կից գործող հանձնաժողովների աշխատանքներին մասնակցությունը բուհի կողմից նույնպես դիտարկվում է որպես ներքին շահակիցների մասնակցություն կառավարմանը և ներքին օղակներին տեղեկատվության հասանելիության մեխանիզմ: ՎՊՀ անձնակազմը և ուսանողները Համալսարանի ներքին ցանցի միջոցով հնարավորություն ունեն ծանոթանալու գիտական խորհրդի որոշումների նախագծերին և գիտական խորհրդի նիստից երեք օր առաջ ներկայացնելու իրենց առաջարկները:

Փորձագիտական ուսումնասիրություններից ու հանդիպումներից պարզ դարձավ, որ ներքին շահակիցները նախաձեռնողական չեն առաջարկներ անելու ու խնդիրներ բարձրաձայնելու հարցում: Այսուհանդերձ, առկա են կարիքների վերհանման որոշ օրինակներ. այսպես, վերջին երեք տարիներին նրանց կողմից գիտական խորհրդում բարձրացվել և բարելավվել է գնահատման համակարգը, կազմակերպվել են օտար լեզուների վերապատրաստումներ, ձեռք են բերվել մոլբերտներ:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Նախորդ հավատարմագրման շրջանակներում բուհը ստացել է խորհրդատվություն ներդնելու բուհի երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման համակարգեր:

Համալսարանն առաջնորդվում է երկու խոշոր ռազմավարական փաստաթղթերով՝ 2021-2025 թթ. ռազմավարական ծրագրով, որի իրականացման համար մշակվել է նաև 2021-2025 թթ. գործողությունների պլան, և 2019թ. հավատարմագրման փորձագիտական զեկույցի խորհրդատվությունների հիման վրա մշակված 2021-2025 թթ. բարելավման գործողությունների պլանով: Ըստ բուհի դիտարկման՝ դրանք ստորաբաժանումների

կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի համար հիմք պետք է ծառայեն, իսկ միջնաժամկետ պլանավորում բուհը հիմնականում չի իրականացնում:

Նշված երկարաժամկետ պլաններն ունեն նմանատիպ կառուցվածքներ՝ ներառելով գործողություններ, քայլեր, ռեսուրսներ, վերջնարդյունքներ, պատասխանատուներ, ժամանակահատված և ռիսկեր: Պլանների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ շատ դեպքերում քայլերի պատասխանատուները և ժամկետները հստակ չեն սահմանված. գործողության կատարման համար որպես պատասխանատու կարող են նշված լինել բուհի գրեթե բոլոր ստորաբաժանումները և որպես գործողության իրականացման ժամկետ՝ ծրագրի իրականացման ողջ ընթացքը: Տրամադրվող ֆինանսական ռեսուրսները ևս հստակեցված չեն . բուհը նշում է, որ գործընթացի համար պատրաստ է բյուջեից ֆինանսական միջոցներ տրամադրել, սակայն չի հստակեցնում պլանավորված ֆինանսների չափը:

ՎՊՀ ֆակուլտետները և ամբիոնները կազմում են իրենց ռազմավարությունները և կարճաժամկետ ամենամյա աշխատանքային պլանները: Համալսարանի կառուցվածքային մյուս ստորաբաժանումները կազմում են տարեկան աշխատանքային պլաններ: Փորձագիտական ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ բուհում չկա միատեսակ մոտեցում պլանավորման և հաշվետվողականության գործընթացների նկատմամբ: Նախ՝ տարբեր ֆակուլտետների ռազմավարություններ տարբեր ժամկետների համար են մշակված /բնագիտական ֆակուլտետ՝ 2022-2025թթ., հասարակական գիտությունների ֆակուլտետ՝ 2022-2027թթ., հումանիտար գիտությունների՝ 2023-2025թթ./: Տարբեր են ներկայացված ռազմավարությունների ձևաչափերը, իրականացման ժամկետները կամ անորոշ են, կամ ընդհանրապես բացակայում են:

Հարկ է նշել նաև, որ պրոռեկտորների և ֆակուլտետների տարեկան հաշվետվությունները չեն արտահայտում ոլորտների համար պլաններում նախատեսված ռազմավարական նպատակների և գործողությունների վերջնարդյունքների ձեռքբերման չափը: Հիմնականում նույնն է պատկերը նաև ստորաբաժանումների աշխատանքների պլանավորման և հաշվետվությունների դեպքում: Շատ դեպքերում ստորաբաժանումները նշում են իրենց գործառութային շրջանակից բխող աշխատանքները՝ որպես պլանի կետեր, սակայն դրանք չեն փոխկապակցվում ռազմավարական պլանավորմանը:

Համալսարանի ՌԾ և բարելավման գործողությունների պլանների իրականացման մշտադիտարկման նպատակով ստեղծվել է հանձնաժողով, որի կողմից ներդրվել են Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների տարեկան աշխատանքային պլանների և ռազմավարության գործողությունների պլանի կատարողականի հաշվետվությունների ձևաչափեր, հաշվետվությունների ներկայացման ժամանակացույց: Հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք հիմնականում վերլուծական չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հանձնաժողովը նիստերի ժամանակ ուսումնասիրում է տարին երկու անգամ ստորաբաժանումների կողմից ներկայացրած տարեկան աշխատանքային պլանների և ՌԾ գործողությունների պլանի համապատասխանությունը, հաշվետվություններում՝ դրանց կատարողականը:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական խումբը տրամադրել է խորհրդատվություն՝ ներդնել ՎՊՀ գործունեության վրա ազդող գործոնների

ուսումնասիրության մեխանիզմներ և կիրառել հավաքագրված տեղեկատվությունը հետագա որոշումների կայացման ընթացքում:

Բուհն իր գործունեության վրա ազդող ուսումնասիրության ենթակա արտաքին և ներքին գործոնների հստակ ցանկ չի առանձնացրել: Ըստ բուհի դիտարկումների՝ դրանք վերհանվում են հիմնականում Համալսարանի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների /ԳԱՑ-երի/՝ ըստ տարիների համեմատությունների հիման վրա:

Որպես ազդեցության ներքին գործոններ ԳԱՑ-երից ըստ ցուցանիշների դիտարկվում են յուրաքանչյուր տարվա համար դիմորդների շարժը, ուսանողական համակազմը, աշխատողները, շրջանավարտները, առաջադիմությունը, բյուջեն, տարածքը, նյութատեխնիկական բազան, ուսումնական գործընթացը, գիտությունը և հետազոտությունը, արտաքին կապերը և միջազգային համագործակցությունը: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ բյուջեի վերլուծության հիման վրա հնարավոր է եղել ֆինանսներ խնայել և կրթաթոշակներ հատկացնել. աշխատավարձի ցուցանիշների ուսումնասիրության հիման վրա դրանք բարձրացվել են:

Բուհը նշում է, որ արտաքին գործոններից դիտարկում են մարզի աղքատության ցուցանիշները, որոշ մասնագետների (հատկապես՝ մանկավարժների) աշխատավարձի հարաբերական ցածր լինելը և աշխատանքի անընդհատ բարդացումը, ներքին արտագաղթի միտումները, աշխատաշուկայում մասնագիտությունների բևեռացումը: Այսուհանդերձ, որպես արտաքին գործոն դիտարկելով մարզի աղքատության ցուցանիշները՝ բուհը երկու անգամ իրականացրել է ուսման վարձավճարի բարձրացում՝ 30 և 15 տոկոսով:

Նաև բուհը նշում է, որ հաշվի է առնում որոշ մասնագետների (հատկապես՝ մանկավարժների) աշխատավարձի հարաբերական ցածր լինելը և աշխատանքի անընդհատ բարդացումը, միևնույն ժամանակ փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ բուհում ներդրվել է մանկավարժի որակավորմամբ նոր մագիստրոսական ծրագիր:

Հարկ է նշել, որ հստակ չեն բուհի գործունեության վրա ազդող գործոնների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման աղբյուրները և մեխանիզմները, որտեղ դրանք կարող են կիրառվել: Փորձագիտական խմբի հետ հանդիպումների ժամանակ պարզվեց, որ բուհի ղեկավար կազմի կողմից որակի ապահովման համակարգի առաջ հստակ խնդիրներ չեն դրվում կոնկրետ ոլորտների վերաբերյալ տվյալների հավաքագրման մասին: Ավելին, բուհի կողմից չի սահմանվել, թե հավաքագրված ինչ տվյալների վերլուծությունների հիման վրա է իրականացվելու աշխատանքի արդյունավետության գնահատումը:

2.5. Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

2018թ. հրապարակված «ՎՊՀ որակի ապահովման քաղաքականություն» ձեռնարկում ՊԻԳԲ-ը բուհի կողմից դիտարկվում է որպես գործունեության հիմնարար սկզբունքներից մեկը:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ՎՊՀ-ն ՊԻԳԲ շրջափուլը կիրառում է հետևյալ կերպ. պլանավորման փուլը մեկնաբանվում է որպես փաստաթղթերի /քաղաքականություններ, կարգեր, ընթակարգեր և այլն/ մշակման և

վերանայման գործընթաց՝ ներքին շահակիցների մասնակցությամբ: Փաստաթղթերի մշակման և վերանայման աշխատանքներն իրականացվում են գիտական խորհրդին և ռեկտորին առընթեր աշխատախմբերում կամ ռեկտորի հրամանով նպատակային ձևավորված խմբերում: Փաստաթղթերն ամբիոններին հասանելի են դառնում ներքին ցանցի միջոցով՝ փոփոխությունների առաջարկությունների ներկայացման համար:

Իրականացման փուլ է համարվում ոչ թե պլանավորված գործընթացների կատարումը ըստ մշակված ընթացակարգերի, այլ, երբ «ռեկտորը, պրոռեկտորները, պատասխանատու ստորաբաժանումները իրենց լիազորությունների շրջանակներում մշտադիտարկում են գործընթացների զարգացումը ըստ ակնկալվող արդյունքների»: Այս փուլում փոփոխության պատճառներ են դիտարկվում շահակիցների կողմից եկող արձագանքները, ստացված և ակնկալվող արդյունքների անհամապատասխանությունը:

Գնահատման փուլում ստացված արդյունքները համեմատվում են Համալսարանի 2021-2025 թթ. ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի ցուցիչների հետ, դիտարկում են շահակիցները բավարարվածությունը, նոր կարիքները (իրականացված հարցումների, ֆոկուս խմբային քննարկումների, փաստաթղթերի վերլուծության արդյունքներ): Խնդիրների պատճառները հիմնականում քննարկվում են Հանձնաժողովների շրջանակներում:

Ըստ բուհի՝ բարելավման փուլում բացթողումների պատճառների քննարկումները, SWOT վերլուծությունները հնարավորություն են ընձեռում իրականացնել փոփոխություններ և բարելավումներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համալսարանում որակի ապահովման այս մոտեցմամբ են վերանայվել մի շարք փաստաթղթեր՝

- դասալսումների անցկացման և քննարկման կազմակերպման կարգը,
- ուսանողների գիտելիքների գնահատման և արդյունքների բողոքարկման կարգը,
- պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և վերապատրաստման,
- ուսումնաօժանդակ և վարչական կազմի որակավորման բարձրացման ընթացակարգը,
- պրոֆեսորադասախոսական կազմի բեռնվածության չափորոշիչները և այլն:

ՊԻԳԲ սկզբունքի կիրառում է նախատեսված նաև կրթական ծրագրերի մշակման, ներդրման և վերանայման գործընթացները կարգավորող փաստաթղթերում:

Այս սկզբունքը դրված է նաև ՎՊՀ 2021-25 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման հիմքում:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվում է ՎՊՀ ամբիոնների և բուհի Որակի ապահովման կենտրոնի կողմից:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ամբիոնների կողմից ծրագրերի գնահատումն իրականացվում է համալսարանում ներդրված կրթական ծրագրերի մշակման, ներդրման, մշտադիտարկման և գնահատման, ինչպես նաև կրթական ծրագրերի ներքին աուդիտի կազմակերպման ընթացակարգերի համաձայն: Տվյալների հավաքագրման

և ծրագրերի արդյունավետության գնահատման մյուս կիրառվող մեխանիզմը կրթական ծրագրերի ինքնավերլուծություններն են, որոնք իրականացվում են ծրագրային հավատարմագրման չափանիշներին և չափորոշիչներին համապատասխան՝ ՈԱԱԿ-ի կողմից մշակված ձևաչափով:

Համալսարանի որակի ապահովման կենտրոնը պարբերաբար իրականացնում է կրթական ծրագրերի ընդհանրական գնահատում ըստ արտաքին և ներքին շահակիցների բավարարվածության և կարիքների վերհանման: Վերլուծությունները և շահակիցների կարծիքի հիման վրա ձևավորված առաջարկությունները որակի ապահովման կենտրոնի ղեկավարը ներկայացնում է գիտական խորհրդի նիստերում:

Բուհի ՈԱԿ-ի կողմից իրականացվում է նաև կառավարման գործընթացների արդյունավետության, ուսումնաօժանդակ և վարչական աշխատակազմի բավարարվածության ուսումնասիրություններ, որոնց արդյունքները քննարկվում են ռեկտորի, պրոռեկտորների, ստորաբաժանումների ղեկավարների հետ: Ուսումնասիրությունների համար կիրառվում են առցանց և հարցաթերթիկային հարցումներ, SWOT վերլուծություններ, ֆոկուս խմբային քննարկումներ, հարցազրույցներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցումների վերլուծությունները, ըստ ոլորտի պատասխանատուների, տրամադրվում են բուհի ղեկավարությանը: Վերլուծություններին հաջորդող քայլերը դեռևս տեսանելի չեն: Տեղեկատվության հավաքագրման և վերլուծության կիրառվող մեխանիզմների արդյունավետության ուսումնասիրման խնդիրը բուհն իր առջև դեռևս չի դրել:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

2024թ. ներդրվել է «ՎՊՀ համացանցային պաշտոնական կայքի և սոցիալական ցանցերի աշխատանքների կազմակերպման կարգը», որով սահմանվում են համացանցային գործիքների գործածության նպատակները և Համալսարանի ստորաբաժանումների հետ փոխհարաբերությունները: Պաշտոնական կայքի, սոցիալական ցանցերի, տելեգրամ ալիքի և տելեգրամ բոտի միջոցով Համալսարանը նպատակ ունի ապահովել իրականացվող գործընթացների թափանցիկությունը և հրապարակայնությունը:

Կայքում հասանելի են ՎՊՀ հիմնական պաշտոնական փաստաթղթերը, կրթական ծրագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն (ուսումնական պլան, դասընթացների տեղեկագիրք, դասընթացների մասնագիր, դասընթացների ուսումնամեթոդական փաթեթներ, դասընթացների համառոտ նկարագրիչներ):

Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի գնահատման կոնկրետ վերլուծություններ և դրանց վերաբերյալ հրապարակումներ կայքում առկա չեն:

Տեղեկատվության հրապարակումների գնահատումն իրականացվում է կայքի այցելությունների հաշվարկի և հարցադրումների քանակի, սոցիալական ցանցերի հետևորդների թվի մշտադիտարկման արդյունքում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհը, հիմք ընդունելով նախորդ հավատարմագրման արդյունքում ստացած խորհրդատվությունները, քայլեր է իրականացրել կազմակերպական կառուցվածքի բարելավման ու գործառույթների

հստակեցման ուղղությամբ: Սակայն կառուցվածքի բարեփոխումներն այս դեպքում ավելի վաղ են իրականացվել, քան դրանց վերաբերյալ խնդիրները հստակեցվել են ռազմավարական ծրագրում: Բուհի ռազմավարական նպատակների ու խնդիրների և դրանց լուծման համար ձևավորված նոր կառուցվածքի համապատասխանության վերլուծությունը կօգներ բուհին լավարկելու գործող կառուցվածքը, հստակեցնելու ռազմավարական գործողությունների իրականցման պատասխանատուներին, կնպաստեր ստորաբաժանումների պլանավորված աշխատանքին:

Իրականացված կառուցվածքային փոփոխությունները հանգեցրել են հաստիքների կրճատման, տնտեսված միջոցների վերաբաշխման բյուջեում և աշխատավարձերի բարձրացման: Փորձագիտական խումբը գտնում է, որ առանց հստակ տվյալների փոփոխությունների իրականացումը խոչընդոտել է հորիզոնական կապերի ձևավորմանը, առաջացրել մեկ ստորաբաժանման կողմից խիստ տարատեսակ գործընթացների իրականացմանը, կադրերի վարչական կարողությունների անհամապատասխանության զբաղեցրած պաշտոններին: Որոշ ոլորտներում դիտվող դրական փոփոխությունները տարիների ընթացքում վստահություն են ավելացրել կառավարման համակարգի նկատմամբ, ինչը աճի կարիք ունի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման համար:

Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհն անհրաժեշտություն ունի վերլուծելու Կառավարման մարմինների գործառույթները՝ հաշվի առնելով, որ Հոգաբարձուների խորհրդի նիստերն ունեն տարեկան առնվազն մեկ անգամ տեղի ունենալու պահանջ, մնացած ժամանակահատվածներում Համալսարանի գործունեությունը բոլոր ոլորտներում /գիտական, կրթական, արտադրական, տնտեսական, ֆինանսական, միջազգային և այլն/ փաստացի միանձնյա ղեկավարում է ռեկտորը: Փորձագիտական խումբը շեշտադրում է այն հանգամանքը, որ կառավարման մարմին չհանդիսացող Գիտական խորհուրդը իրավասու է կայացնել որոշումներ, որոնց կատարումը պարտավոր է ապահովել ռեկտորը: Անհրաժեշտ է ուսումնասիրել այս մոտեցման արդյունավետությունը, դիտարկել Գիտական խորհուրդի գործառութային շրջանակը, ինչպես նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ ՎՊՀ կառուցվածքում Գիտական խորհուրդը որպես ստորաբաժանում բացակայում է: Գործառույթների հստակեցումը, որպես Կառավարման մարմին Գիտական խորհուրդը համալրելու դեպքում, դրա ներառումը կազմակերպական կառուցվածքում՝ ավելի հասկանալի կդարձնի խորհուրդների գործունեությունն ու լիազորությունների շրջանակը: Փորձագիտական խումբը գտնում է, որ կառավարման մարմինների գործունեության շրջանակների վերլուծությունը ու հստակեցումը թույլ կտա ապահովել միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների փաստացի համադրումը Համալսարանում:

Դրական է, որ նոր կառուցվածքին համապատասխան գործող բուհի ստորաբաժանումներն ունեն հաստատված կանոնադրություններ, մշակված են պաշտոնների անձնագրեր, ինչն օգնում է կանոնակարգել գործընթացները և իրականացնել աշխատանքի բաժանում: Դրական է, որ բուհի ղեկավարությունը նպատակ է դրել ապակենտրոնացնել կառավարումը, կառուցվածքով ու կանոնակարգերով սահմանված են ուղղահայաց ենթակայությունները, սակայն հորիզոնական կապերը դեռևս թույլ են, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ համագործակցության ու փորձի փոխանակման համար:

2023թ. ներդրված ֆինանսական քաղաքականության արդյունավետության վերլուծությունը ՎՊՀ-ն կիրականացնի 2024թ. ավարտին, սակայն այժմ էլ որոշ խնդիրներ

երևում են. ուղղությունների համար հատկացված ռեսուրսների բաշխումը կատարվել է ելնելով բյուջեի սակավ հնարավորություններից, այլ ոչ թե անհրաժեշտությունից. 3%-ի չափով պահուստային ֆոնդը չի կարող ֆինանսական կայունության հիմք ապահովել բուհի համար, ձեռնարկատիրական գործունեության միջոցով մուտքերի բազմազանեցումը չի ապահովում զգալի կայունություն, քանի դեռ հիմնական ֆինանսական մուտքերը ուսանողների վարձավճարներից են ձևավորվում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհի վարչական կառույցների հաստիքները զբաղեցված են, սակայն բուհի համար դեռևս խնդիր է մնում վարչական աշխատակազմի երիտասարդացումը և աշխատակազմի շրջանում կառավարման փորձառության զարգացումը: Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհում պետք է ներդրվեն մեխանիզմներ և ստեղծվեն պայմաններ բացի ներքին առաջխաղացումից նաև արտաքին միջավայրից որակյալ մասնագետներ ներգրավելու համար:

Փորձագիտական խումբը նշում է, որ ՎՊՀ-ն իրավական տեսակետից պայմաններ է ստեղծել, որպեսզի դասախոսները և ուսանողները մասնակցեն իրենց առնչվող որոշումների կայացմանը: Սակայն մյուս կողմից էլ ակնհայտ է նրանց պասիվությունը խնդիրների վերհանման և բարձրաձայնման առումով: Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհն ուշադրության կենտրոնում պետք է պահի կառավարման համակարգի արդյունավետությանը խոչընդոտող գործոնները, ուսումնասիրի շահակիցների նախաձեռնողականության պակասի պատճառները և քայլեր ձեռնարկի նրանք ներգարվելու որոշումների կայացման գործընթացներում, ինչը կբարձարցնի նրանց վստահության մակարդակը և կնպաստի մասնակցային որոշումների կայացմանը:

Անդրադառնալով երկարաժամկետ ու կարճաժամկետ պլանավորմանը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ բուհին անհրաժեշտ է մշակել միասնական մոտեցում պլանավորման և հաշվետվողականության գործընթացների համար՝ ապահովելու ռազմավարական ծրագրերի, գործողությունների պլանների և հաշվետվությունների կառուցվածքային և բովանդակային համահունչությունը: Միատեսակ մեթոդաբանությունը թույլ կտա նվազեցնել պլանավորման խնդիրները և ապահովել ֆակուլտետների ու ստորաբաժանումների գործողությունների ներդաշնակությունը: Առկա թերացումների պատճառների խորքային վերլուծությունը և դրանց հիման վրա լուծումներ առաջարկելը ոչ միայն կբարելավի հաշվետվողականության համակարգի արդյունավետությունը, այլև կհստակեցնի ռազմավարական նպատակներին հասնելու ուղղությամբ բուհի ձեռնարկած քայլերի իրատեսականությունը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ պլանավորման ու հաշվետվողականության գործընթացների արդյունավետության բարձրացման համար ստորաբաժանումների պլաններն ուղղակիորեն պետք է բխեն ռազմավարություններից, իսկ հաշվետվություններն արտահայտեն բուհի իրական ձեռքբերումները և առկա մարտահրավերները:

Կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատկով փորձագիտական խումբը գտնում է, որ բուհի գործունեության վրա ազդող գործոնների ցանկը պետք է ամբողջականացվի, հստակեցվեն դրանց վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման աղբյուրները և մեխանիզմները, դրանց կիրառումները: Ավելին, բուհի որակի ապահովման համակարգը ղեկավար կազմի կողմից կոնկրետ ոլորտների վերաբերյալ տվյալների հավաքագրման առաջադրանքներ պետք է ստանա՝ այնուհետև դրանք դնելու որոշումների կայացման հիմքում և ապահովելու բուհի երկարաժամկետ զարգացումը:

Փորձագիտական խումբը շեշտադրում է, որ բուհը կարիք ունի ճշգրտելու ՊԻԳԲ սկզբունքը և փուլերի ըմբռնումը, իսկ հետևողականորեն ՊԻԳԲ շրջափուլի կիրառմամբ գնահատման և բարելավման գործընթացների վերանայումը և շրջափուլի ամբողջական կիրառումը կնպաստի ոչ միայն կառավարման համակարգի կայուն գործունեությանը, այլև ռազմավարական խնդիրների և ստորաբաժանումների գործունեության հստակ համակցմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում բուհում կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և գնահատման մեխանիզմի՝ ինքնավերլուծությունների ներդրումը: Ինքնավերլուծությունների արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ապահովել ամբիոնների կողմից ուսանողների և արտաքին շահակիցների ակտիվ ներգրավումը վերլուծության գործընթացում, ինչպես նաև դրանք ներկայացնել արտաքին փորձագիտական գնահատման: Այս քայլերը կօգնեն ապահովել ծրագրերի որակի մասին առավել օբյեկտիվ և հիմնավոր պատկեր:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհը կանոնակարգել է պաշտոնական կայքի և սոցիալական ցանցերի հետ առնչվող աշխատանքները, որոնց միջոցով նպատակ ունի ապահովել իրականացվող գործընթացների թափանցիկությունը և հրապարակայնությունը: Ընդունելի է, որ կայքի այցելությունների հաշվարկի և սոցիալական ցանցերի հետևորդների թվի մշտադիտարկման միջոցով որոշ եզրակացություններ կարելի է անել հրապարակումների նկատմամբ շահակիցների հետաքրքրությունների մասին: Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը պետք է հետևողական լինի կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի վերաբերյալ քանակական և որակական տեղեկատվության պարբերական հավաքագրման, վերլուծության և տարածման հարցում և գնահատի, թե տարածման համար ընտրված մեխանիզմները որքանով են արդյունավետ գործում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո բուհում տեղի ունեցած փոփոխությունները չեն հանգեցրել կառավարման համակարգի վերաբերյալ բուհի կողմից սահմանված նպատակների ամբողջական իրականացմանը, համալսարանում արդյունավետորեն համադրված չեն միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքները, հիմնավորված չեն մարդկային ռեսուրսների բաշխվածությունը և գործառույթների բաշխումը ըստ ՌԾ նպատակների, հստակ չէ միջնաժամկետ պլանավորումը, իսկ կարճաժամկետ պլանավորման կապը ռազմավարական ծրագրի հետ թույլ է, հիմնականում բացակայում են բուհի գործունեության վրա ազդող գործոնների խորը ուսումնասիրությունները, ՊԻԳԲ շրջափուլը դեռև դրված չէ կառավարչական և վարչարարության բոլոր գործընթացների կատարման հիմքում, թերի են տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմները՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՊՀ-ն չի բավարարում չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ՎՊՀ-ն առկա ուսուցման համակարգում բակալավրի կրթական ծրագրով ուսումնական գործընթաց է կազմակերպում 25 մասնագիտություններով, իսկ մագիստրոսի կրթական ծրագրով՝ 15 մասնագիտություններով: Հեռակա ուսուցման համակարգում ներդրված է բակալավրական 20 և մագիստրոսական 1 կրթական ծրագիր: Դրանք բազմաբնույթ ոլորտներ են ներառում՝ կրթությունից մինչև ծառայությունների ոլորտ: Առաքելության մեջ ՎՊՀ-ն չի հստակեցրել առաջարկվող ծրագրերի մասնագիտական ոլորտները, այլ միայն նշում է «մրցունակ և որակյալ մասնագետների» պատրաստումը:

Բուհն առաջնորդվում է գործընթացները կարգավորող մի շարք փաստաթղթերով՝ ՄԿԾ-ների հաստատման կարգ (2017թ.), ՄԿԾ մշակման, ներդրման, ներդրվածների վերանայման ռազմավարության իրականացման ընթացակարգ (2018թ.) և ՄԿԾ-ների մշակման և ներդրման ռազմավարություն (2018թ.):

Նախորդ հավատարմագրումից հետո ՎՊՀ-ում էականորեն վերանայվել են կրթական ծրագրերը: Վերանայված բոլոր կրթական ծրագրերում առանձնացված են հետևյալ կառուցամասերը՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական, ընդհանուր մասնագիտական դասընթացներ, հատուկ մասնագիտական դասընթացներ:

Հստակեցվել են նշված կառուցամասերին հատկացվող կրեդիտների քանակները, և յուրաքանչյուր կրեդիտին համապատասխանեցվող լսարանային բեռնվածության ժամաքանակը. բակալավրիատի ուսումնական պլաններում մեկ կրեդիտի դեպքում իրականացվում է 14 լսարանային ժամ, մագիստրատուրայի պլաններում՝ 10-12 ժամ: Ֆակուլտետների դեկաններն իրականացնում են կամընտրական դասընթացների ընտրության կազմակերպումը:

ՄԿԾ-ների համար մշակված են կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիր, իսկ ուսումնական պլանում ներառված բոլոր դասընթացների համար մշակված են մասնագրեր, համառոտ նկարագրիչներ և ուսումնամեթոդական փաթեթներ /ԴՈՒՓ/, որոնք ներառում են դասընթացի վերջնարդյունքները, գնահատման կարգը, առաջադրանքները, քննական հարցաշարը, անհրաժեշտ գրականությունը և այլն: Հարկ է նշել նաև, որ կրթական ծրագրերի մասնագրերում սահմանված են ծրագրի խնդիրները, շրջանավարտների հնարավոր աշխատատեղերի և մասնագիտական գործունեության ոլորտները, ռեսուրսները՝ մարդկային և նյութական, վերջնարդյունքները:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում առկա է եղել խորհրդատվություն՝ կրթական ծրագրերի արտաքին /հնարավորության դեպքում՝

միջազգային/ գնահատման կազմակերպման անհրաժեշտության վերաբերյալ: Բուհն իր բարելավման գործողությունների պլանում նախատեսել է այս խորհրդատվության իրականացումը, սակայն նախատեսել է գնահատում հիմնականում ներքին և գործատուների ուժերով: Բուհն իրականացրել է կրթական ծրագրերի ինքնագնահատում և վերլուծություն, սակայն տարբեր կրթական ծրագրերում տարբեր մոտեցումներ են կիրառվել, իսկ բարելավումների կոնկրետ օրինակներ այս գործընթացների հիման վրա առկա չեն:

Բոլոր ՄԿԾ-ներում ավելացվել է մասնագիտական օտար լեզու դասընթացը, ինչպես նաև ավելացել են օտար լեզվի դասընթացների կրեդիտները: Միաժամանակ, առարկաների շրջանակներում ուսանողներին տրվող առաջադրանքներն ու գնահատումը անմիջականորեն կապվել է տվյալ առարկայի կրեդիտների քանակի հետ: Այսուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ օրինակ, Ֆիզդաստիարակություն և սպորտային մարզումներ կրթական ծրագրի շրջանակներում, որը շնորհում է մանկավարժի որակավորում, ուսանողներն անհրաժեշտություն են տեսնում ծանոթանալու ավելի շատ սպորտաձևերի, քան ներառված է կրթական ծրագրում, հետագայում դպրոցներում դասավանդելիս խոչընդոտներ չունենալու համար:

Մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ մանկավարժության որակավորում շնորհող կրթական ծրագրերը մշակելիս հաշվի են առնվում նաև Հանրակրթական պետական չափորոշիչների պահանջները և դրանցում առկա փոփոխությունները ներառվում են նաև ՎՊՀ կրթական ծրագրերում:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ վերանայման գործընթացներում ՎՊՀ-ն կարևորել է իր կողմից իրականացվող ծրագրերի համապատասխանությունը նմանատիպ ծրագրերի հետ և օգտվել է «Առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման քաղաքականություն և ընթացակարգ» փաստաթղթից /մշակվել է 2018թ. և փոփոխվել 2024թ. հունվարին/, որտեղ ներկայացված են բենչմարքինգի ձևերը, գործողությունները, քայլերը և ակնկալվող արդյունքները:

Կրթական ծրագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» 2022թ. կրթական ծրագիրը կազմվել է՝ համեմատելով Դուբլինյան համալսարանական քոլեջի հետ, որի արդյունքում, օրինակ՝ ներդրել են Կյանքի ապահովագրություն առարկան, ինչը ներդրվել է նաև աշխատաշուկայի ներկայիս պահանջները հաշվի առնելով: Զգալիորեն ավելացվել են տեղեկատվական, վերլուծական, ծրագրային դասընթացները, օրինակ՝ արհեստական բանականության կիրառման հմտություններ, սակայն փորձագիտական խմբի այցի կողմից դասալսումների իրականացումը և մասնագիտական հանդիպումները ցույց տվեցին, որ դեռևս ոչ բոլոր դասընթացներում են կիրառվում այս մոտեցումները, ինչը երբեմն պայմանավորված է նաև դասախոսների՝ նորագույն տեխնոլոգիաների կիրառման հմտությունների պակասով:

Մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ բուհում հաճախ փորձ է արվել կամընտրական առարկաներով լրացնել որոշ հմտությունների ձևավորման պակասը, ինչպես նաև կա ճկունություն ՄԿԾ-ներում մինչև 10% առարկաների փոփոխություն կատարել մինչև շրջափուլի ավարտը: Հարկ է նշել, որ ԱՖՄ մասնագիտության դասախոսները ճշգրտում են իրենց թեմաները՝ խուսափելով կրկնություններից և համաձայնեցնում են նմանատիպ թեմաների ուսումնասիրման կամ դրանց գործնական մասի այլ առարկայի շրջանակում համակարգչային ծրագրերով անցկացումը: Մասնագիտական հանդիպումներից պարզ

դարձավ, որ առկա է դեպք, երբ ուսանողը պրակտիկայի է մեկնել ապահովագրական ընկերություն և ուսումնասիրել ապահովագրական ոլորտը, որին ծանոթացել է և տեսական գիտելիքներ ձեռք բերել միայն փորձառության ավարտից հետո, ուսումնառության հաջորդ կիսամյակում: Միաժամանակ պետք է նշել, որ դասընթացներում տեսական նյութի մատուցման և գործնական պարապմունքների հարաբերակցությունը թողնված է դասախոսի հայեցողությանը:

ՎՊՀ «Պատմություն» մասնագիտության համար որպես առաջավոր փորձ դիտարկվել են Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի /որպես հանրապետության միակ մանկավարժական բուհ/, Ռումինիայի Յաշ քաղաքի համալսարանի /որի հետ ՎՊՀ-ն ունի համագործակցության պայմանագիր/ և ՌԴ բուհերից՝ Կազանի Դաշնային համալսարանի /այդ բուհի «Պատմություն» մասնագիտության ուսումնական պլանները համահունչ են ՎՊՀ «Պատմություն» մասնագիտության ուսումնական պլանին/ կրթական ծրագրերը: Համեմատական վերլուծության են ենթարկվել ծրագրերի ուսումնական պլանները, կրթական վերջնարդյունքները /միայն ՀՊՄՀ հետ/, ուսուցման մեթոդները և գնահատման համակարգը: Սակայն վերլուծությունում լավ փորձի դուրսբերումն ու բարելավումների առաջարկությունները բացակայում են:

Գործնական կարողությունների զարգացման տեսակետից, որպես կրթական ծրագրերի առարձին կառուցամաս, կարևորվում է պրակտիկաների կազմակերպումը: Բուհն ունի պրակտիկայի կազմակերպման նպատակով կնքված պայմանագրեր բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում, պարբերաբար դիտարկում է նաև դրանց շրջանակի ընդլայնման հնարավորությունը: Ուսումնական հաստատությունը տրամադրում է պրակտիկայի տարբեր ծրագրեր՝ ելնելով պրակտիկայի վայր հանդիսացող կազմակերպության գործունեության առանձնահատկություններից:

Պրակտիկաներն ունեն հստակ վերահսկման մեխանիզմներ, որոնք ներառում են բուհական և գործատու-ղեկավարների համատեղ մասնակցություն: Անբավարար գնահատականների կամ ուսանողների դժգոհությունների դեպքում պրակտիկաների վայրերը փոխվում են, ինչպես դա տեղի է ունեցել ԱՖՄ-ում, երբ ուսանողների առաջարկների հիման վրա փոխվել են պրակտիկայի վայրերը, ներառվել են բանկեր, ապահովագրական կազմակերպություններ:

Կրթական ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսումնական պլանները կազմելիս բուհը հաշվի է առնում պրակտիկաների իրականացման ժամկետները և դրանք նախատեսում ավարտական աշխատանքների իրականացումից առաջ: Պրակտիկաների վայրերը հաճախ նաև կապվում են ավարտական աշխատանքների թեմաների հետ՝ հնարավորություն տալու ուսանողներին ավարտական աշխատանքի գործնական մասի ու տվյալների վերհանումն իրականացնել գործատուի միջավայրում:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում բուհին տրվել էին խորհրդատվություններ դասավանդման մեթոդները վերջնարդյունքների ձեռքբերմանը համապատասխանեցնելու, դասավանդումը արդի պահանջներին համապատասխանեցնելու

նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաներով համալրելու և ՎՊՀ-ի բոլոր ծրագրերի դասավանդման մեթոդների արդիականացման վերաբերյալ:

ՎՊՀ Գիտական խորհրդի 2024թ. փետրվարի 29-ի նիստում ուսումնասիրվել է մասնագիտական վերջնարդյունքների ձևավորմանն ուղղված դասավանդման և ուսումնառության կիրառվող մեթոդների շարունակական վերանայումը և ընդլայնումը, որտեղ մի շարք դրույթներ ընդունվել են կիրառման համար, այդ թվում՝ Բլումի և Թյունինգի մոտեցումները գիտելիքի ձևավորման և գնահատման գործընթացում:

Նախորդ հավատարմագրումից հետո առարկայական նկարագրերում ավելացվել են դասավանդման մեթոդները, ինչպես նաև անհրաժեշտ ռեսուրսները: Կրթական ծրագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք երբեմն շատ ընդհանրական են և չեն արտահայտում վերջնարդյուքնների ձեռքբերման համար անհրաժեշտ պահանջները. այսպես, օրինակ, թվարկվում են հնարավոր բոլոր տարբերակները՝ գրադարան, ընթերցասրահ, կահավորված լսարաններ, տեխնոլոգիապես հագեցած լսարաններ, համակարգիչներ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, աուդիոդասախոսություններ, էլեկտրոնային ուսուցման հարթակներ և այլն: Դասավանդման և ուսումնառության մեթոդները ՄԿԾ-ներում նկարագրված են, սակայն առկա չէ մեթոդների ընտրության հստակ քաղաքականություն: Դասախոսներն իրենք են ընտրում դասավանդման մեթոդները՝ կախված առարկայի առանձանահատկությունից:

Կրթական ծագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց նաև, որ ոչ բոլոր դասընթացների պարագայում է ակնհայտ «Վերջնարդյունք–Դասավանդման մեթոդ–Գնահատում» կապը, քանի որ դարձյալ թվարկված են կիրառելի հնարավոր մեթոդները՝ առանց առանձնացման:

Մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ որոշ թեմաներ ուսանողները հնարավորություն ունեն անցկացնել գործատուների միջավայրում, ինչը հնարավորություն է տալիս նյութի ավելի խորքային ընկալման ու մասնագիտական հմտությունների ձևավորման: Այսպես օրինակ՝ ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ծրագրում բանկային, ապահովագրական, ֆինանսական ոլորտի որոշ դասեր անցկացվում են բանկերում և ֆինանսական այլ կազմակերպություններում:

Մանկավարժի որակավորում շնորհող ծրագրերում առանձնակի ուշադրություն է դարձվում մասնագիտական առարկաների դասավանդման մեթոդներին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Պատմության կրթական ծրագրում պատմության դասավանդման մեթոդիկայի դասընթացի շրջանակներում առանձնացվում են տեսական մաս և գործնական աշխատանքներ: Տեսական դասերին քննարկվում են դպրոցական պրակտիկայից բերված օրինակներ, ուսանողները ծանոթանում են դասավանդման տեխնոլոգիաներին: Գործնական դասերի ընթացքում ուսանողները պատրաստում են դասեր և ներկայացնում իրենց դասընկերներին, որոնք հանդես են գալիս որպես աշակերտներ: Հետագայում խումբը քննարկում է դասի կառուցվածքը և տրամադրում հետադարձ կապ:

Առաջադրանքների ուսումնասիրությունից և դասալսումներից պարզ դարձավ, որ ուսանողներին տրվում են առաջադրանքներ, որոնք ներառում են իրավիճակային խնդիրներ, թեստեր, ինքնուրույն և խմբային աշխատանքներ: Ուսանողների հետազոտական-վերլուծական կարողությունների զարգացման նպատակով ՎՊՀ կրթական ծրագրերի շրջանակներում Պատմություն կրթական ծրագրից հանձնարարվում են նաև փաստերի վերլուծություն, դեպքերի ուսումնասիրություն, պատմական աղբյուրների համեմատական

ուսումնասիրություն: Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողներն իրականացնում են ֆինանսական վերլուծություններ, ներդրումային պորտֆելների կառավարման առաջադրանքներ, իսկ Հոգեբանություն կրթական ծրագրում ուսանողներն անցկացնում են հոգեբանական ախտորոշիչ թեստեր, հարցումներ, կիրառում են դիտման մեթոդներ և վերլուծում արդյունքները:

ՄԿԾ-ներում որոշ չափով զարգացած են նաև միջառարկայական կապերը: Այսպես օրինակ՝ Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ՄԿԾ-ում ներդրվել է դիֆերենցիալ հավասարումների դասընթացը, որն օգտագործվում է տնտեսագիտական վերլուծություններում: Պատմություն ՄԿԾ-ում ուսանողները կատարում են ժամանակագրական վերլուծություններ, որոնք հաճախ զուգորդվում են քաղաքական վերլուծությունների և իրավական հետազոտությունների հետ:

Այնուամենայնիվ, փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ամբիոնների միջև համագործակցությունը սահմանափակ է կրթական պլանների միջառարկայական կապերի հաստատման տեսանկյունից՝ ուսումնական ծրագրերը միմյանց ավելի սերտորեն կապելու համար:

Անդրադառնալով տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ մասնագիտական առաջադրանքների իրականացմանը՝ փորձագիտական խումբը նշում է, որ ուսանողներն իրենց կրթական ծրագրերում ուսումնասիրում են նաև SS կիրառումը, MS Office փաթեթը: Մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ոչ միշտ են այս ծրագրերը կիրառվում մասնագիտական առարկաների շրջանակում առաջադրանքներ իրականացնելիս: Հարկ է նշել, որ Հոգեբանություն կրթական ծրագրի շրջանակներում ուսանողներն օգտագործում են վիճակագրական վերլուծության էլեկտրոնային գործիքները իրականացված հարցումների պատասխանները վերլուծելու համար:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունները հիմք ընդունելով՝ համալսարանը կատարել է գործող գնահատման համակարգի վերլուծություն և գնահատման կանոնակարգի ու ձևերի փոփոխություն: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ՎՊՀ-ում ուսանողների գնահատման գործընթացի կառավարման համար 2022թ. հաստատվել է «ՎՊՀ Ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգը», որը վերանայվել է չորս անգամ մինչև 2023թ. դեկտեմբեր: Գնահատման համակարգը դարձել է բազմաբաղադրիչ՝ ներառելով ընթացիկ ստուգումներ, քննություններ, խմբային և անհատական առաջադրանքներ: Կատարվել է գնահատականի անցողիկ շեմի փոփոխություն. շեմը 50 միավորից իջեցվել է մինչև 40: Հաճախումների վերահսկումը գնահատման համակարգից հանվել է, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որոշ դասախոսներ կարևորում են ուսանողների մասնակցության վերահսկողությունը՝ ելնելով դասընթացների նյութի լիարժեք ընկալման կարևորությունից:

Առաջադրանքների ուսումնասիրությունից պարզ դարաձվ, որ դրանք կազմվում են հերթականությամբ բարդացող սկզբունքով, ինչը հնարավորություն է տալիս աստիճանաբար զարգացնել ուսանողների մասնագիտական և հետազոտական կարողությունները: Դասախոսները տրամադրում են հետադարձ կապ ուսանողների առաջադիմությունն ապահովելու համար: Առաջադրանքները ներառում են ինչպես անհատական, այնպես էլ

խմբային ձևաչափեր՝ ուղղված վերլուծական, հետազոտական և ստեղծագործական հմտությունների զարգացմանը։ Օրինակ, Պատմության կրթական ծրագրում ուսանողները կատարում են պատմական փաստերի համեմատական վերլուծություններ և տվյալների աղբյուրների ուսումնասիրություններ, ԱՖՄ ծրագրում գնահատման մեջ ներառվում են ֆինանսական վերլուծություններ, ներդրումային պորտֆելների կառավարման աշխատանքներ և ապահովագրական հաշվարկներ։ Ընթացիկ առաջադրանքների գնահատման մեթոդներն ընտրում են դասախոսները։ Մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ բուհում գնահատման չափանիշները դեռևս հստակ չեն։ Հատկապես համատեղող դասախոսների պարագայում, քանի որ սահմանափակ է համագործակցությունը դասախոսների միջև, չափանիշները չեն քննարկվում նախապես, և յուրաքանչյուր դասախոս կիրառում է առանձին գնահատման մեթոդներ։

Ընթացիկ քննությունների անցկացման եղանակն ընտրվում է ամբիոնի որոշմամբ (մինչև ուսումնական տարվա սկիզբը)՝ կարող է լինել գրավոր, բանավոր կամ թեստային՝ դասախոսի հիմնավորված առաջարկության հիման վրա։ Դասընթացները, ըստ ամփոփիչ ստուգման կազմակերպման ձևի, ամփոփվում են.

1. ընթացիկ 2 քննությունով (4 և ավելի կրեդիտ ունեցող դասընթացներ, առավելագույն գումարային 40 միավոր),

2. ստուգարքով ավարտվող դասընթացների դեպքում ընթացիկ 2 ստուգումով (մինչև 4 կրեդիտ ունեցող դասընթացներ, առավելագույն գումարային 40 միավոր)։

Ուսանողների բավարարվածության առցանց հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների կողմից գնահատման օբյեկտիվության միջին ցուցանիշը 2023թ. կազմում է 3.1 միավոր (5 միավորանոց սանդղակով)։

2024թ. հաստատվել է նոր «Ակադեմիական ազնվության կարգը», որը փոխարինել է 2015թ. կարգին՝ սահմանելով ակադեմիական ազնվության սկզբունքները։ Սակայն խախտումների համար հստակ պատժամիջոցներ սահմանված չեն։ Գրավոր քննություններն անցկացվում են կնքված հատուկ տետրերով, իսկ ամփոփիչ քննությունները ձայնագրվում են։ Գրագողության դեպքերի բացահայտման դեպքում աշխատանքները վերադարձվում են ուսանողներին՝ վերամշակման նպատակով։

Նախորդ հավատարմագրումից հետո որոշակիորեն բարելավվել է նաև պրակտիկայի գնահատումը՝ այն կատարվում է միաժամանակ ինչպես բուհական, այնպես էլ պրակտիկայի վայրի ղեկավարի կողմից։ Պրակտիկայի գնահատումն իրականացվում է բազմագործոնային համակարգով, որի բաղադրիչներն են պրակտիկայի ընթացքում կիրառած գիտելիքները, ձեռք բերած կարողությունները, հմտությունները, կոմպետենցիաները, ինչպես նաև պրակտիկային ուսանողի հաճախումը և պրակտիկայի պաշտպանության մասնակցությունը։

Որակավորումների շնորհման համար ՎՊՀ-ն առաջնարդվում է Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգով, որը սահմանում է ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների բաշխման, ղեկավարման, կազմակերպման պայմանները։ ԱՖՄ մասնագիտությունում ավարտական աշխատանքների թեմաները հաճախ առաջարկվում են գործատուների պահանջների հիման վրա՝ ապահովելով համապատասխանություն աշխատաշուկայի կարիքներին։

Ավարտական աշխատանքների ղեկավարումը ՎՊՀ-ում իրականացվում է ինչպես դասախոսների, այնպես էլ գործատուների կողմից։ Համաղեկավարության մոդելը կիրառվում է այն դեպքերում, երբ աշխատանքները ներառում են ինչպես տեսական

ուսումնասիրություններ, այնպես էլ գործնական բաղադրիչներ: Այնուամենայնիվ, ղեկավարության ժամաքանակի սահմանումը դեռևս արդյունավետորեն չի կարգավորվում, քանի որ ղեկավարման համար սահմանված ժամերը կիսվում են, այլ ոչ կրկնապատկվում:

Ավարտական աշախատանքների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանց թեմաները չեն կրկնվում: Մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ Պատմություն ՄԿԾ-ի պարագայում ավարտական աշխատանքները մեծ մասամբ պատմությունից են, իսկ ավարտական աշխատանքում ուսանողներն ունեն միայն որոշ հատված, որ կարողանան դրա դասավանդման մեթոդիկան ներկայացնել: Այսուհանդերձ, դրանց ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դպրոցում գործնական մասի փորձարկումը և դրա արդյունքների արտացոլումը պարտադիր պահանջ չէ: Ուսանողներն իրենց հետազոտությունների համար տվյալներ հավաքագրելու նպատակով երբեմն դպրոցներում անցկացնում են հարցումներ:

Ավարտական աշխատանքների հետազոտական բաղադրիչը խթանելու նպատակով արվեստի ոլորտի մասնագիտություններում (Կերպարվեստ) ուսանողները բացի վերջնական կտավը ներկայացնելուց, ներկայացնում են նաև դրա վերլուծությունը:

Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանության արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար»՝ Համալսարանում ընդունված գնահատման սանդղակի միավորներով, թվային ու տառային համարժեքներով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գնահատականների բողոքարկման կարգը վերանայվել է 2024թ., ուսանողները ծանոթ են բողոքարկման իրենց իրավունքներին: Սակայն նման դեպքեր համեմատաբար քիչ են լինում:

Հարցումների միջոցով ուսանողները գնահատում են կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքների գնահատման գործընթացների օբյեկտիվությունը 0-5 միավորանոց սանդղակով: Օրինակ, հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսանողների դեպքում պատկերը հետևյալն է. կուրսային աշխատանքների գնահատման օբյեկտիվությունը միջինում գնահատվել է 2.8 միավոր, ավարտաճառերի գնահատման օբյեկտիվությունը՝ 3.3 միավոր, թեզերի գնահատման օբյեկտիվությունը՝ 3.5 միավոր:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը, միջազգայնացմանը:

ՎՊՀ-ում կրթական ծրագրերի բարելավման նպատակով իրականացվել է բենչմարքինգ: ԱՖՄ մասնագիտացման ՄԿԾ-ները կազմվել են՝ հաշվի առնելով Դուբլինյան համալսարանական քոլեջի փորձը, ԵՊՀ, ՀՊՏՀ, ՀՌՀ համապատասխան ծրագրերի ուսումնասիրությունները: Արդյունքում, ներդրվել են առարկաներ, փոփոխվել են գնահատման չափորոշիչները, առաջադրանքները, դասավարման մոտեցումները: Այսպես օրինակ՝ «Ապահովագրական մաթեմատիկա» դասընթացի մեջ ավելացվել է կյանքի ապահովագրության բաղադրիչը, ներդրվել է կամընտրական «Դիֆերենցիալ հավասարումները տնտեսագիտության մեջ» առարկան, գործնական դասերն առավել ուսանողակենտրոն են դարձել՝ քննարկումների, ուսանողների կողմից դասանցկացման, մասնագիտական խաղերի, իրավիճակային վերլուծությունների արդյունքում:

ՎՊՀ Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Պատմություն» կրթական ծրագիրը բենչմարքինգ է արվել ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի Հայոց

պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի, Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնների «Պատմություն» կրթական ծրագրի հետ: Ռումինիայի Յաշ քաղաքի համալսարանը ընտրվել է այն պատճառով, որ այն ՎՊՀ հետ ունի համագործակցության պայմանագիր: ՌԴ բուհերից նախապատվությունը տվել է Կազանի Դաշնային համալսարանին՝ հաշվի առնելով, որ այդ բուհի «Պատմություն» մասնագիտության ուսումնական պլանները համահունչ են ՎՊՀ «Պատմություն» մասնագիտության ուսումնական պլանին: Կրթական ծրագրերի և դրանց առանձին բաղադրիչների համեմատական վերլուծության արդյունքում փաստել են, որ ՎՊՀ կրթական ծրագիրը ճկուն է և համադրելի ՀՊՄՀ, Կազանի դաշնային համալսարանի և Յաշի համալսարանի կրթական ծրագրերի հետ և ապահովում է ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունություն:

Կրթական ծրագրերի ուսումնասիրությունից և մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսումնական պլանների բոլոր կրթամասերում պարտադիր են կամընտրական դասընթացները, որոնք աջակցում են ուսանողների շարժունությանը՝ հնարավորություն տալով փոխանցել ակադեմիական շարժունության ծրագրերով արտերկրի գործընկեր բուհերում ձեռք բերած կրեդիտները՝ այդ դասընթացներին հատկացրած կրեդիտների հաշվին: ՀՊՄՀ և ՌԴ Կազանի համալսարանների հետ շարժունության դեպքեր չեն եղել, իսկ 2022-24թթ.2 ուսանողի և 1 դասախոսի շարժունություն է եղել Ռումինիայի Յաշ քաղաքի Ալեքսանդրու Իոան Կուզա համալսարանի հետ:

Բուհի ներկայացրած տվյալների համաձայն՝ 2019-2024թթ. շարժունությանը մասնակցել են 18 ուսանող և 10 աշխատակից: Այդ ժամանակատվածում համալսարանը ընդունել է շարժունությամբ 9 դասախոս, որոնք նաև դասընթացներ են անցկացրել համալսարանի ուսանողների և դասախոսների համար:

3.5 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ՎՊՀ-ում գործում են 27.02.2015թ. ընդունված՝ Մասնագիտության կրթական ծրագրի ներքին աուդիտի կազմակերպման ընթացակարգը, ՄԿԾ-ների մշակման և ներդրման, ներդրված ծրագրերի վերանայման ռազմավարության իրականացման ընթացակարգը, որը մշակվել է 2018թ.: Նախորդ փորձագիտական զեկույցի դիտարկումների արդյունքում բուհում վերանայվել են ՄԿԾ-ների մշտադիտարկման և աուդիտի իրականացման գործընթացները բակալավրիատի համար չորս, մագիստրատուրայի համար երկու տարվա ցիկլով:

Նախորդ հավատարմագրումից հետո ՎՊՀ-ում ներդրվել է կրթական ծրագրերի ինքնավերլուծությունների պահանջ, որոնք իրականացվում են ամբիոնների կողմից՝ բուհի ՈԱԿ-ի աջակցությամբ: Ինքնավերլուծություններն իրականացվում են ՀՀ կառավարության հաստատած մասնագիտական կրթական ծրագրերի հավատարմագրման չափանիշներին համապատասխան և ՈԱԱԿ ինքնավերլուծության ձևաչափով:

Փորձագիտական հանդիպումներից պարզվեց, որ ամբիոններում և ֆակուլտետային խորհուրդներում պարբերաբար կատարվում են առարկաների բովանդակությունների քննարկումներ, կիրառվում է ՄԿԾ-ները գործընկեր բուհեր արտաքին կարծիքի ուղարկման փորձը: Այսպես օրինակ, ԱՖՄ մասնագիտական կրթական ծրագիրը ուղարկվել է գրախոսման Գորիսի պետական համալսարան: ՄԿԾ-ների մշտադիտարկման և աուդիտի իրականացման արդյունքում նոր ուսումնական պլաններում կատարվել են

փոփոխություններ՝ կապված կամընտրական առարկաների կրեդիտների փոփոխության, գործնական և սեմինար պարապմունքների ժամաքանակների ավելացման, նոր դասընթացների ներդրման հետ:

Մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ մեծ ուշադրություն է դարձվում գործատուների պահանջին, որը ևս արտահայտվում է կրթական ծրագրերում ու առանձին առարկաների մասնագրերում: Այսպես, օրինակ, Հոգեբանություն կրթական ծրագրում գործատուների արձագանքների արդյունքում առաջադրանքներում ավելացվել են իրավիճակային խնդիրները, հոգեբանական վերլուծության մեթոդները:

Գործատուները պարտադիր ներգրավվում են նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում, ղեկավարում են ավարտական աշխատանքներ, վարում դասընթացներ, ինչի միջոցով բուհը փորձում է վերհանել կրթական ծրագրերի կարիքները: Հանձնաժողովի հաշվետվությունների ամփոփ վերլուծություն բուհը չի իրականացրել, սակայն գործատուների առաջարկների հիման վրա առաջադրվել են հետազոտական թեմաներ՝ կոնկրետ կազմակերպության օրինակով գործնական հետազոտություններ իրականացնելու հնարավորությամբ, ընդլայնվել են պրակտիկաների վայրերը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՎՊՀ ջանքերը կրթական ծրագրերի կառուցվածքի և բովանդակության բարելավման ուղղությամբ: Մասնագիտական կրթական ծրագրերի ակնկալվող ուսումնառության արդյունքների հստակեցումը և դրանց համահունչությունը որակավորումների ազգային շրջանակի բնութագրիչներին կարևոր են բուհի առաքելության իրականացման համար: Այնուամենայնիվ, առաքելության մեջ ծրագրերի մասնագիտական ոլորտների հստակեցման բացակայությունը բարդացնում է բուհի ռազմավարական նպատակների և կրթական ծրագրերի զարգացման ուղղությունների լիարժեք համադրումը և համահնչեցումը տարածաշրջանի զարգացման ուղղություններին: ՎՊՀ-ն առաջընթաց է գրանցել կրթական ծրագրերի բովանդակության հստակեցման և կառուցվածքային միասնականության ապահովման հարցում: Այսուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ գործնական և տեսական բաղադրիչների բաշխման հարցում միասնական մոտեցման ներդրումը կարևոր է կրթական ծրագրերի վերջնարդյունքների լիարժեք ձեռքբերման համար:

Կրթական ծրագրերը բարելավելիս բուհը կարևոր քայլեր է ձեռնարկել համեմատական վերլուծությունների կիրառման ուղղությամբ՝ կրթական ծրագրերը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար: Այնուամենայնիվ, բենչմարքինգի արդյունքները հաճախ չեն վերածվել գործնական կիրառական լուծումների կամ բարելավման հստակ առաջարկների, ինչը բուհին թույլ կտար միջազգային առաջավոր փորձի հիման վրա իր կրթական ծրագրերի բարելավումներն իրականացնել ու պատրաստել նաև միջազգային աշխատաշուկայի համար պատրաստ շրջանավարտներ:

Փորձագիտական խումբը գտնում է, որ կրթական ծրագրերում ճկունությունը և կամընտրական բաղադրիչների ավելացումը խրախուսելի է, սակայն ուսուցման գործընթացում տեսական և գործնական գիտելիքների միջև ժամանակային անհամապատասխանությունը կարող է խաթարել ուսանողների ուսումնառության ընդհանուր արդյունավետությունը:

Փորձագիտական խմբի գնահատմամբ ՎՊՀ-ն առաջընթաց է գրանցել դասավանդման մեթոդների արդիականացման ուղղությամբ, մասնավորապես՝ նախորդ հավատարմագրման

խորհրդատվությունների հիման վրա բազմազանեցվել են դասավանդման մեթոդները և հստակեցվել են անհրաժեշտ ռեսուրսները ինտերակտիվ ուսուցման իրականացման համար։ Դրական է, որ ուսումնական գործընթացում որոշ դեպքերում ապահովվում է գործնական և տեսական բաղադրիչների ինտեգրումը, ինչպիսին է մասնագիտական դասընթացների կազմակերպումը գործատուների մոտ։ Որոշ դասընթացներում ակնհայտ չէ «Վերջնարդյունք–Դասավանդման մեթոդ–Գնահատում» կապը, ինչը կարող էր թույլ տալ բուհին հետևել ուսանողների կրթական վերջնարդյունքների ձեռքբերման և մասնագիտական պատրաստվածության մակարդակի շարունակական գնահատմանը։

Իրականացվող առաջադրանքների ձևաչափերը և միջառարկայական կապերի որոշակի զարգացումները դրական են, սակայն ամբիոնների միջև համագործակցության սահմանափակ լինելը խոչընդոտում է ուսումնական պլանների ինտեգրումը և բազմակողմանի մասնագիտական հմտությունների ձևավորումը։ Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հմտությունների ձևավորմանն ուղղված բուհի քայլերը կարևոր են, սակայն դրանց առավել լայն օգտագործումը մասնագիտական առարկաների առաջադրանքների իրականացման շրջանակներում կնպաստի ուսանողների գործնական կարողությունների զարգացումը։

Ուսանողների գնահատականները դասավանդման մեթոդների վերաբերյալ վկայում են ուսուցման մեթոդների արդիականացման և ուսանողակենտրոն մոտեցման պակասի մասին։ Դասավանդման մեթոդների մեծ մասի դեպքում ուսանողները դասախոսի ներկայացրած թեմայի պասիվ ունկնդիր են, ինչը նվազեցնում է ուսանողների ներգրավվածությունը և հետադարձ կապի արդյունավետությունը։ Փորձագիտական խումբը կարևորում է դասավանդման մեթոդների ավելի բազմազան և ինտերակտիվ ձևերի կիրառումը՝ ուսանողների վերլուծական և ստեղծագործական կարողությունները խթանելու համար։

ՎՊՀ-ն կատարել է գնահատման համակարգի փոփոխություններ՝ բազմաբաղադրիչ մոտեցում ներդնելով և ամրապնդելով գնահատման մեխանիզմները։ Այնուամենայնիվ, գնահատման չափանիշների հստակեցման պակասը, հատկապես համատեղող դասախոսների պարագայում, հանգեցնում է գնահատման չափորոշիչների ոչ համաչափ կիրառմանը։ Գնահատման գործընթացների հաճախակի փոփոխությունները բարդացնում են դասախոսների և ուսանողների ադապտացումն այս փոփոխություններին։ Պրակտիկայի գնահատման բազմագործոնային համակարգի ներդրումը դրական է, ինչը թույլ է տալիս գնահատել պրակտիկայի բոլոր բաղադրիչները և ուսանողների մոտ կարողությունների ձեռքբերումը և տրամադրել համապատասխան հետադարձ կապ։

Դրական է նաև ավարտական աշխատաքնների թեմաների փոխյապակցումը պրակտիկայի վայրերին, ինչը լրացուցիչ հնարավորություն է տալիս ուսանողներին իրենց հետազոտությունների գործնական մասն իրականացնել կոնկրետ կազմակերպության օրինակով տվյալների վերլուծությամբ։ Փորձագիտական խումբը գտնում է, որ այս մոտեցման կիրառումը բոլոր կրթական ծրագրերի պարագայում՝ հաշվի առնելով շրջանավարտների հետագա աշխավայրերի հնարավոր ուղղությունները, կդարձնեն ավարտական աշխատանքների առավել կիրառական և հնարավորություն կստեղծեն իրականացնելու բուհի հետազոտական աշխատանքները գործատուների պահանջների հիման վրա։

Անդրադառնալով կրթական ծրագրերի շարունակական բարելավմանն ու համահունչության ապահովմանն ուղղված բուհի ջանքերին՝ փորձագիտական խումբը նշում

է, որ ՎՊՀ-ն որոշ ծրագրերում, ինչպիսին է «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» ծրագիրը, արդյունավետորեն իրականացրել է բենչմարքինգ՝ կիրառելով միջազգային առաջավոր փորձ: Այս ծրագրերում բովանդակային բարելավումներն ակնհայտ են և նպաստում են ուսանողների մասնագիտական պատրաստվածության բարձրացմանը: Այնուամենայնիվ, բենչմարքինգի արդյունքների համապարփակ վերլուծության և լավագույն փորձի դուրսբերման բացակայությունը սահմանափակում է դրա առավել լայն կիրառումը մյուս կրթական ծրագրերում: Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհի կողմից կրթական ծրագրերի համահունչությանն ուղղված քայլերի ակտիվացումը կապահովի միջազգային գործընկերների հետ ավելի լայն համագործակցություն և շարժունության ծրագրերի խթանում, ինչը կնպաստի ուսանողների փորձի ընդլայնմանը և դասախոսների մասնագիտական աճին:

Նախորդ հավատարմագրումից հետո ՎՊՀ-ում ներդրվել են կրթական ծրագրերի մշտադիտարկման և ինքնավերլուծության մեխանիզմներ, որոնք նպաստում են ծրագրերի արդիականացմանը: Այնուամենայնիվ, կրթական ծրագրերի բարելավման գործընթացը ոչ միշտ է տվյալահենք, և ամփոփ վերլուծությունները բավարար հիմք չեն հանդիսանում բարելավման ուղղությունները հստակեցնելու համար: Գործատուների հետ պարբերական հանդիպումների արդյունքների վերլուծությունը, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների ուսումնասիրության հիման վրա կրթական ծրագրերում փոփոխությունների իրականացումը թույլ կտան բուհին արձագանքելու աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո բուհը քայլեր է ձեռնարկել ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ, իրականացրել է բենչմարքինգ, ավելացրել է կամընտրական առարկաներ՝ աշխատաշուկայի պահանջների հիման վրա, բոլոր դասընթացների համար մշակվել են ուսումնամեթոդական փաթեթներ, դասախոսները կիրառում են դասավանդման բազմազան մեթոդներ, բարելավվել է գնահատման համակարգը՝ ներառելով բազմաբաղադրիչ մոտեցումներ և որոշակիորեն հստակեցնելով բաղադրիչները, ուսանողների ավարտական աշխատանքները հաճախ իրականացվում են գործատուների մասնակցությամբ և պահանջներից ելնելով, ինչպես նաև ներդրվել են կրթական ծրագրերի վերանայման ու գնահատման մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՊՀ-ն բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

Վանաձորի պետական համալսարանում ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության համար սահմանված են հստակ մեխանիզմներ: Դիմորդների ընդունելությունն իրականացվում է համաձայն ՀՀ կառավարության N 597-Ն որոշմամբ հաստատված կարգի, որը կարգավորում է պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա ուսուցմամբ բակալավրի և անընդհատ ու ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելությունը: Հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրերով ընդունելությունը 2022 թվականից սկսած ևս կազմակերպվում է միասնական քննություններով՝ Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից: Որոշակի մասնագիտությունների դեպքում, մասնավորապես՝ ֆիզիկական դաստիարակության, կերպարվեստի և երաժշտական կրթության կրթական ծրագրերով, ընդունելությունն իրականացվում է ներբուհական քննություններով: Մագիստրատուրայում ընդունելությունը կազմակերպվում է՝ հիմք ընդունելով բակալավրի մակարդակի միջին որակական գնահատականը տվյալ մասնագիտությամբ կրթությունը մագիստրատուրայում շարունակելու դեպքում, իսկ այլ բուհերի այլ մասնագիտություններից մագիստարուրա դիմելիս դիմորդները հանձնում են մասնագիտական ընդունելության քննություններ:

Դիմորդների մասնագիտական կողմնորոշման և հավաքագրման նպատակով համալսարանում պարբերաբար կազմակերպվում են «Բաց դռների օր» և «Մասնագիտությունների տոնավաճառ» միջոցառումները: Բացի այդ, համալսարանը կազմակերպում է այցեր դպրոցներ, որտեղ ներկայացվում են համալսարանի կրթական հնարավորությունները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՎՊՀ հենակետային վարժարանի աշակերտների 30-40%-ը շարունակում է կրթությունը Վանաձորի պետական համալսարանում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները ևս ակտիվ մասնակցում են «Բաց դռների օր» և «Մասնագիտությունների տոնավաճառ» միջոցառումներին, դիմորդներին ներկայացնում իրենց համալսարանի հնարավորությունները:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում՝ հոկտեմբերից մինչև մայիս, համալսարանը կազմակերպում է ընդունելության քննությունների առարկայական անվճար դասընթացներ՝ դիմորդներին աջակցելու նպատակով: Դասընթացների մասնակիցների մոտ 50%-ը այնուհետև կրթությունը շարունակում է ՎՊՀ-ում: Ուսանողների թվաքանակի վերջին հինգ տարիների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ուսանողների թիվը հիմնականում կայուն է: Ներկայումս բուհում սովորում է 1668 ուսանող:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների ընտրության և հավաքագրման մեխանիզմների արդյունավետության գնահատում բուհը չի իրականացրել:

Բուհից ուսանողների հեռացումների պատճառներն են ակադեմիական ցածր առաջադիմությունը (59.60%), պայմանագրային պարտականությունները չկատարելու պատճառով հեռացումները (28.40%), անհարգելի բացակայությունները (10.80%), ավարտական աշխատանքի պաշտպանությանը չներկայանալը (1.20%): Հեռացումների տոկոսը տատանվում է 1-2%-ի, վերականգնվողներինը՝ 1-4%-ի միջակայքում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ վերջին տարիներին նվազել են ակադեմիական առաջադիմության պատճառով հեռացումները բուհում իրականացվող խորհրդատվական աջակցության շնորհիվ:

4.2 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Վանաձորի պետական համալսարանում ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով օգտագործվում են որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացվող հարցումները, ֆոկուս խմբային հանդիպումները և ուսանողների հետ կազմակերպվող հանդիպումները: Ուսանողների կարիքների ուսումնասիրությունն ու արդյունքները պարբերաբար ներկայացվում են համալսարանի Գիտական խորհրդում, քննարկվում ռեկտորատում, ինչպես նաև Ուսանողական խորհրդում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ օրինակ՝ Ուսանողական խորհուրդը, ստանալով Կերպարվեստ բաժնի ուսանողների արձագանքը՝ օգտագործվող գույքի հին լինելու մասին, բարձրացրել է այս հարցը Գիտական խորհրդում, որի արդյունքում թարմացվել են նկարակալները և պահարանները:

Բուհի Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացվում են հարցումներ դասընթացների որակի և դասավանդման գործընթացի, համալսարանի ռեսուրսային բազայի, կրթական ծառայությունների գնահատման նպատակով: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ կիրառվող մեխանիզմների շնորհիվ հիմնականում բարձրացվել են ռեսուրսային բազայի համալրման վերաբերյալ հարցերը, որից հետո բուհի կողմից քայլեր են իրականացվել լսարանների բարելավման, տեխնիկական միջոցների համալրման ու թարմացման ուղղությամբ:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ նաև, որ կուրսղեկները ևս կարևոր դեր են խաղում ուսանողների կարիքների բարձրացման հարցում: Այսպես օրինակ, ուսանողների պահանջներից ելնելով՝ կուրսղեկների հետ քննարկումների արդյունքում քննաշրջանից առաջ դասախոսները կազմակերպել են խորհրդատվական հանդիպումներ, որոնք ուսանողներին օգնել են պատրաստվել քննություններին: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ կարիքների վերհանման արդյունքում իրականացվել է նաև Գնահատման կարգի վերանայում, որից հետո ուսանողների ներկայությունը միավորային գնահատման վրա չի ազդում, կարևորվում է նրանց մասնակցությունը և ակտիվությունը:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Վանաձորի պետական համալսարանն ուսանողների համար ստեղծում է լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվության տրամադրման հնարավորություններ: Քննաշրջաններին ընդառաջ դասախոսները սահմանում են հատուկ խորհրդատվական ժամեր, որոնց ընթացքում ուսանողները հնարավորություն են ստանում անհատապես կամ խմբային ձևաչափով քննարկել իրենց հարցերը, ստանալ գնահատման չափանիշների վերաբերյալ տեղեկատվություն: Այս խորհրդատվությունները նպատակ ունեն օգնելու ուսանողներին հաղթահարելու ուսումնական բարդությունները և բարելավելու նրանց ակադեմիական առաջադիմությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները միշտ պատրաստակամ են աջակցելու ուսանողներին և նրանց տրամադրելու անհրաժեշտ ուղղորդում նաև սահմանված խորհրդատվական պարապմունքներից դուրս:

Բացի քննական խորհրդատվություններից, ելնելով ուսանողների պահանջներից, բուհը պարբերաբար կազմակերպում է նաև լրացուցիչ դասընթացներ տարբեր թեմաներով: Օրինակ, ուսանողների պահանջի հիման վրա կազմակերպվել է մեդիագրագիտության վերաբերյալ դասընթաց՝ նպատակ ունենալով զարգացնել ուսանողների հմտությունները մեդիայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ կրթական ծրագրերի ուղղություններին համապատասխան այլ լրացուցիչ պարապմունքներ առկա չեն:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

Վանաձորի պետական համալսարանում ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու համար ռեկտորը և վարչական աշխատակազմի անդամները նախատեսել են հատուկ ժամեր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները հնարավորություն ունեն դիմելու վարչական կազմին իրենց հուզող հարցերով նաև սահմանված ժամերից դուրս և ստանալ համապատասխան աջակցություն:

Ուսանողները կարող են դիմել վարչական անձնակազմին նաև առցանց հարթակների՝ սոցիալական ցանցերի, բուհի կայքէջի միջոցով: Այս տարբերակը հատկապես լայնորեն կիրառվում է հեռակա համակարգում սովորող ուսանողների կողմից, ովքեր հաճախ օգտվում են առցանց միջոցներից իրենց հարցերով դիմելու համար:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ուսանողները հիմնականում իրենց խնդիրներով դիմում են դեկանատներին: Փոխանակման ծրագրերով ուսումնառություն ստացած ուսանողները ևս դիմել են դեկանատ՝ կրեդիտների համապատասխանության հետ կապված հարցերով:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Վանաձորի պետական համալսարանում ուսանողների կարիերայի աջակցումն իրականացնում է շրջանավարտների հետ աշխատանքների համակարգողը: Համալսարանն ունի շրջանավարտների և գործատուների բազաներ: Պարբերաբար կազմակերպվում են աշխատանքի տոնավաճառներ, որոնք ուսանողներին հնարավորություն են տալիս ծանոթանալ աշխատաշուկայի հնարավորություններին և ուղղորդում ստանալ իրենց մասնագիտական կարիերայում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրումից հետո համալսարանում ձևավորվել է նաև շրջանավարտների ակումբ, որը նախատեսված է շրջանավարտների հետ կապը պահելու և փորձի փախանակում իրականացնելու համար բուհի ուսանողների և շրջանավարտների հետ: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ակումբը դեռևս ակտիվ չի գործում, և ընդգրկված շրջանավարտների թիվը փոքր է:

Ուսանողական խորհուրդը կազմակերպում է հանդիպումներ և դասախոսություններ փորձառու հրավիրյալ մասնագետների հետ, ովքեր ուսանողներին ծանոթացնում են ոլորտային նորարարություններին և կարիերայի հնարավորություններին: Հրավիրյալ դասախոսների շարքում ընդգրկված են ոլորտի մասնագետներ, ովքեր մասնակից են ինչպես ավարտական աշխատանքների հանձնաժողովներին, այնպես էլ ընդգրկված են կրթական

ծրագրերի մշակման գործընթացում: Ոլորտի մասնագետները ոչ միայն դասավանդում են համալսարանում, այլև աշխատանքի հնարավորություններ առաջարկում ուսանողներին:

Շրջանավարտների զբաղվածության տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ըստ 2023-2024 թթ. տվյալների՝ նախքան բակալավրիատն ավարտելն աշխատանք ստացած շրջանավարտների տոկոսը կազմում է 34.62%, մասնագիտությամբ աշխատող շրջանավարտներինը՝ 23.08%, իսկ առկա համակարգի մագիստրատուրայում կան 100% աշխատանքային զբաղվածություն ունեցող կուրսեր, իսկ ընդհանուր առմամբ մագիստրատուրայում սովորողների մոտ 60%-ն է աշխատում:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Համալսարանը կարևորում է ուսանողների ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում և քայլեր ձեռնարկում նրանց աջակցելու համար: Համալսարանում գործում է Ուսանողական գիտական ընկերությունը (ՈԻԳԸ), որը պարբերաբար կազմակերպում է գիտական և մշակութային միջոցառումներ բոլոր ֆակուլտետներում՝ փորձելով առաջին կուրսից սկսած ուսանողներին ներգրավել հետազոտական գործընթացներում: Յուրաքանչյուր տարի կազմակերպվում են ՈԻԳԸ գիտաժողովներ, որտեղ իրենց զեկույցներով են հանդես գալիս ինչպես ՎՊՀ ուսանողները, այնպես էլ տարբեր մասնակիցներ այլ համալսարաններից: ՈԻԳԸ կազմակերպած գիտաժողովներին 2019-2024 թթ. ընթացքում մասնակցել են համալսարանի բոլոր ֆակուլտետներից 198 ուսանողներ:

Համալսարանում կազմակերպվում են նաև երիտասարդ գիտնականների գիտաժողովներ, որտեղ ևս ներգրավվում են ուսանողներ ՎՊՀ-ից և այլ բուհերից: Ուսանողները հնարավորություն են ստանում ներկայացնելու իրենց գիտական աշխատանքները և տպագրելու դրանք ՎՊՀ գիտաժողովի նյութերում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համալսարանն ուսանողներին տեղեկացնում է գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու հնարավորությունների մասին, սակայն ուսանողների մեծ մասը չունի բավարար հետաքրքրություն ներգրավվելու այս գործընթացներում:

Չնայած համալսարանի աջակցությանը, ուսանողները չունեն կոնկրետ համակարգողներ, ում կարող են դիմել գիտահետազոտական աշխատանքներին առնչվող հարցերով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ անհրաժեշտության դեպքում ուսնաողներին աջակցում են դասախոսները՝ տրամադրելով տեղեկատվություն կիրառվող ձևաչափերի մասին, օգնելով գտնել համապատասխան մասնագիտական գրականություն:

Համալսարանն աջակցում է ուսանողների հոդվածների տպագրությանը՝ տրամադրելով 20000 դրամ խրախուսման նպատակով: Այսուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների մեծամասնությունը տեղեկացված չէ խրախուսման մեխանիզմներից:

Համալսարանն ունի ուսանողների համար նախատեսված «Մագիստրոս» ժողովածու, որի աշխատանքները կազմակերպվում են «Մագիստրոս» ժողովածուի հրատարակման կանոնակարգով: «Մագիստրոս» և ՈԻԳԸ գիտաժողովների ժողովածուների բոլոր համարները տեղադրված են կայքում:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ վերջին երկու տարիներին որոշակիորեն նվազել են դասախոսների հետ համահեղինակությամբ (19-ից 7), ՈՒԳԸ գիտաժողովի ժողովածուներում տպագրված (58-ից 30) հոդվածների թիվը, ինչը բուհի ներկայացմամբ պայմանավորված է պահանջների խստացմամբ՝ հաշվի առնելով ուսումնասիրված տվյալները, շեշտադրելով կատարված եզրահանգումները:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

ՄՈՒՀ-ում ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմինը Ուսանողական խորհուրդն է, որը հանդիսանում է բուհի ուսանողների ինքնակառավարման և ընտրովի ներկայացուցչական մարմինը: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ Ուսանողական խորհուրդն ունի տարեկան կատարվելիք աշխատանքների և միջոցառումների պլան, որի մեջ ներառված են նաև ճանաչողական միջոցառումները, էքսկուրսիաները, որոնք ավելացվել են՝ ելնելով ուսանողների առաջարկներից: Ուսանողական խորհուրդն ունի բյուջե, որի միջոցով պլանավորվում են տարեկան միջոցառումները:

Ուսանողական խորհրդի ներկայացուցիչները ներգրավված են համալսարանի կառավարման մարմիններում, այդ թվում՝ Հոգաբարձուների խորհրդում, Գիտական խորհրդում, Ֆակուլտետային գիտական խորհուրդներում, ինչպես նաև Գիտական խորհրդի տարբեր հանձնաժողովներում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ Ուսանողական խորհրդին դիմելու միջոցով բարձրացվել են ռեսուրսների համալրմանն ուղղված հարցերը, որի արդյունքում արվեստանոցները համալրվել են նկարակալներով, ձեռք են բերվել նկարչական նյութեր:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ իրենց առնչվող հարցերով ուսանողներն ավելի շատ դիմում են կուրսղեկներին, իսկ Ուսանողական խորհուրդը զբաղվում է համալսարանական միջոցառումների կազմակերպմամբ, տեղեկատվության տարածմամբ:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Համալսարանի Որակի ապահովման կենտրոնը պարբերաբար իրականացնում է հարցումներ ուսանողների, շրջանավարտների շրջանում՝ գնահատելու ուսումնական ծրագրերի և մատուցվող ծառայությունների որակը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների մասնակցությունը հարցումներին, քննարկումներին ապահովելու նպատակով 4 տարի առաջ ձևավորվել են ուսանող-համակարգողների խմբեր, որոնք ներառում են 7-10 անդամ: Նրանք ներգրավվում են տեղեկատվության տարածման գործընթացներում՝ օգնելով ապահովել ուսանողների մասնակցությունը և կարծիքների հավաքագրումը:

Համալսարանի ուսանողներին տրվում են հարցաթերթիկներ՝ դասընթացների և մատուցվող ծառայությունների վերաբերյալ իրենց կարծիքը հայտնելու համար: Սակայն,

փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցաթերթերի կիրառման մակարդակը դեռևս շատ ցածր է՝ կազմելով մոտ 15%[6]:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ուսանողների բավարարվածության գնահատման արդյունքում տեղի են ունեցել փոփոխություններ պրակտիկաների վայրերի շրջանակի ընդլայնման և ուսումնառության նյութերի մեջ, վերանայվել են որոշ կրթական ծրագրեր, ուսանողներին հնարավորություն է տրվել գնահատել դասախոսների մատուցած նյութի և դասապրոցեսի արդյունավետությունը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում Վանաձորի պետական համալսարանի ջանքերն ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության գործընթացների բարելավման ուղղությամբ, ինչի արդյունքում բուհը կարողանում է ապահովել դիմորդների կայուն ներհոսք: Բուհի կողմից կազմակերպվող նախապատրաստական առարկայական դասընթացները ևս նպաստում են դիմորդների հետաքրքրության աճին ու խթանում ընդունելության գործընթացն ու ուսանողների թվաքանակի պահպանումը: Այնուամենայնիվ, ընդունելության գործընթացների արդյունավետության պարբերական գնահատման բացակայությունը սահմանափակում է բուհի կարողությունը՝ համակարգված ձևով բարելավելու դիմորդների հավաքագրման ռազմավարությունը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողների կարիքների ուսումնասիրման նպատակով կիրառվող հարցումները, ֆոկուս խմբային հանդիպումները նպաստում են կրթական միջավայրի շարունակական բարելավմանը: Բուհի կողմից տրամադրվող լրացուցիչ պարապմունքներն ու խորհրդատվությունները նպաստում են ուսանողների առաջադիմությանը: Դասախոսների հետ անհատական կամ խմբային խորհրդատվությունները քննաշրջաններին նախորդող ժամանակահատվածում էական աջակցություն են ուսանողների համար: Սակայն թեմատիկ լրացուցիչ պարապմունքների շրջանակն ընդլայնման անհրաժեշտության ունի՝ ուսանողների բազմաբնույթ կարիքներին արձագանքելու, դրանց հիման վրա մասնագիտական լրացուցիչ պարապմունքներ, այդ թվում օտար լեզվի իմացության բարձրացմանն ուղղված դասընթացներ իրականացնելու համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ուսանողներին տրամադրվող աջակցությունը վարչական անձնակազմի կողմից՝ այդ թվում առցանց տարբերակով, ինչը թույլ է տալիս ուսանողներին օպերատիվ կերպով արձագանք ստանալ իրենց հուզող հարցերի վերաբերյալ:

Փորձագիտական խմբի դիտարկմամբ շրջանավարտների և գործատուների բազաների առկայությունը կարևոր են աշխատաշուկայի պահանջների ուսումնասիրության և կարիերային ուղղորդման առումով: Այնուամենայնիվ, համալսարանը չի կիրառում բազաների տվյալների վերլուծության համակարգված մոտեցում, ինչը սահմանափակում է կայացված որոշումների հիմնավորվածությունը: Աշխատանքի տոնավաճառների պարբերական կազմակերպումը հնարավորություն է տալիս ուսանողներին ծանոթանալու իրենց ոլորտի պահանջներին և գործատուների հետ ուղիղ կապ հաստատելու: Նման միջոցառումների արդյունավետության վերաբերյալ վերլուծության առկայությունը թույլ

[6] Վերաձևակերպվել է բուհի հետ քննարկումների արդյունքում:

կտար գնահատել դրանց իրական ազդեցությունը ուսանողների զբաղվածության մակարդակի վրա և ըստ այդմ պլանավորել հետագա միջոցառումները:

Չնայած շրջանավարտների ակումբի ստեղծմանը՝ նրա ակտիվ գործունեության բացակայությունը, ինչպես նաև ընդգրկված շրջանավարտների փոքր թիվը վկայում են այս կառույցի ներուժի լիարժեք չօգտագործման մասին: Ակումբի ակտիվացումն ու պարբերական միջոցառումների կազմակերպումը կարող են բարելավել ուսանողների և շրջանավարտների միջև կապը՝ նպաստելով փորձի փոխանակմանը և մասնագիտական աճին:

Վանաձորի պետական համալսարանը կարևորում է ուսանողների գիտահետազոտական ներուժի զարգացումը՝ ստեղծելով տարբեր հարթակներ և հնարավորություններ: Ուսանողական գիտական ընկերության գործունեությունը և կազմակերպվող գիտաժողովները վկայում են հետազոտական գործընթացներում ուսանողներին ներգրավելու բուհի ջանքերի մասին: Այնուամենայնիվ, չնայած բուհի կողմից տրամադրվող հոդվածների տպագրման խրախուսմանը՝ ուսանողների մեծամասնության տեղեկացվածության պակասը և կոնկրետ համակարգողների բացակայությունը սահմանափակում են ուսանողների մասնակցության ընդլայնման հնարավորությունները: Մասնագիտական գրականության որոնման և հետազոտական մեթոդների վերաբերյալ աջակցության տրամադրումը կարևոր քայլ է, որը կարող է բարելավվել՝ ստեղծելով հետազոտական ուղղությամբ խորհրդատվության ֆորմալ համակարգ: Հաշվի առնելով գիտական միջոցառումների կազմակերպման փորձը՝ բուհը կարող է զարգացնել ուսանողների ներգրավման քաղաքականությունը՝ ուսումնական գործընթացներում հետազոտական բաղադրիչի ընդլայնմամբ, ինչը կուժեղացնի ուսանողների հետաքրքրվածությունը և կնպաստի նրանց գիտական ներուժի զարգացմանը՝ համապատասխան հստակ կառուցվածքային և խրախուսման համակարգի կիրառմամբ:

Ուսանողական խորհուրդը կարևոր դեր է խաղում բուհի կառավարման գործընթացներում՝ ապահովելով ուսանողների իրավունքների պաշտպանությունն ու մասնակցությունը: Սակայն նրա գործունեության հիմնական ուշադրությունը միջոցառումների կազմակերպման վրա կենտրոնանալը սահմանափակում է խորհրդի գործառույթների ամբողջական իրացումը: Անհրաժեշտ է ընդլայնել նախաձեռնությունները, որոնք ուղղված են ուսանողների իրավունքների պաշտպանությանը:

Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացվող հարցումները հնարավորություն են տալիս հասկանալու ուսանողների բավարարվածության մակարդակը: Սակայն հարցումների մասնակցության ցածր մակարդակը սահմանափակում է հավաքագրված տվյալների ներկայացուցչականությունը: Անհրաժեշտ է խթանել ուսանողների մասնակցությունը և բարձրացնել տեղեկացվածության մակարդակը, որպեսզի բուհը կարողանա ավելի ամբողջական պատկեր ստանալ ուսանողների կարիքների վերաբերյալ և իրականացնել միջավայրի շարունակական բարելավում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհը, հիմք ընդունելով ուսանողների կարիքները, շարունակաբար բարելավում է կրթական միջավայրը, գործում են ուսանողների հավաքագրման ու ընդունեության գործուն մեխանիզմներ, դասախոսներն աջակցում են ուսանողներին և տրամադրում խորհրդատվություն, ուսանողներն ազատ են իրենց հուզող հարցերով դիմելու վարչական անձնակազմին, առկա են ուսանողներին կարիերային պատրաստելու միջոցառումներ, առկա են ուսանողներին բուհի գիտահետազոտական

աշխատանքներում ներգրավման մեխանիզմներ, բուհի Ուսանողական խորհուրդը պատրաստակամ է աջակցելու ուսանողների կարիքների վերհանմանը, ներդրված են ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման որոշ մեխանզիմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը բավարարում է չափանիշ 4-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ՎՊՀ-ն իր 2021-2025թթ. ՌԾ-ում կարևորում է ՊԴ կազմի մասնագիտական աճի ապահովումը, մասնավորապես մասնագիտական վերապատրաստմանն օժանդակող աշխատանքների խթանումը, ատեստավորման գործընթացների կատարելագործումը, ՊԴ կազմի և ուսումնաօժանդակ անձնակազմի գործունեության գնահատման համակարգերի կատարելագործումը, ՊԴ կազմի կայունության ապահովմանն ուղղված մեխանիզմների և սերնդափոխության համակարգի կատարելագործումը:

ՎՊՀ-ն ՊԴ կազմի ձևավորման համար առաջնորդվում է ՊԴ կազմի մրցույթային ընտրության և պաշտոնների տեղակալման կանոնակարգով (վերջինս ընդունվել է 2017թ.-ին և 3 անգամ վերանայվել, վերջինը՝ 2024թ.-ին): Ըստ այս կանոնակարգի՝ սահմանվում են ՊԴ կազմի հետևյալ պաշտոնները՝ պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս, ասիստենտ: Այստեղ սահմանվում են պաշտոնների տեղակալման չափանիշները, հավակնորդների մրցույթային ընտրության անցկացումը, ՊԴ կազմի պաշտոնում նշանակելու կարգը և ժամկետները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մրցույթի հավակնորդների փաստաթղթերն ուսումնասիրվում են գիտական խորհրդին կամ ֆակուլտետային խորհրդին կից մրցույթային հանձնաժողովի կողմից և զուգահեռաբար ուղարկվում համապատասխան ամբիոնի քննարկմանը: Ամբիոնի վարիչը ամբիոնի որոշման համաձայն մրցույթին առաջին անգամ մասնակցող հավակնորդին կարող է առաջարկել վարել փորձնական դասախոսություն կամ գործնական պարապմունք: Դրա հիման վրա ամբիոնի եզրակացությունը հավակնորդի մյուս փաստաթղթերի հետ ներկայացվում է համապատասխան մրցույթային հանձնաժողովին: Իր հերթին մրցույթային հանձնաժողովը թեկնածուների վերաբերյալ եզրակացությունները ներկայացվում է գիտխորհրդին: Պրոֆեսորների թափուր պաշտոնների ընտրությունները կազմակերպվում են ՎՊՀ գիտխորհրդում, իսկ դոցենտների, ավագ դասախոսների, ասիստենտների թափուր պաշտոնների ընտրությունները՝ համապատասխան ֆակուլտետի գիտխորհրդում:

Մրցույթով ընտրված թեկնածուի հետ տվյալ պաշտոնի համար նախատեսված ժամկետով կնքվում է աշխատանքային պայմանագիր:

ՊԴ կազմը համալրվում է նաև նախորդ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո գիտամանկավարժական գործունեության արդյունքների դրական գնահատման հիման վրա ևս մեկ անգամ նոր աշխատանքային պայմանագիր կնքելու միջոցով՝ մինչև 5 տարի ժամկետով:

Փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՎՊՀ ՊԴԿ-ում աշխատում են 182 հիմնական (որից 133-ը անցել են մրցույթով) և 77 համատեղությամբ աշխատակիցներ:

ՎՊՀ-ում գործում է նաև վարչական ուսումնաօժանդակ և վարչատնտեսական պաշտոնների ընտրության և նշանակման կարգը, որը հաստատվել է 2019թ.-ին: Այստեղ ևս աշխատանքները կազմակերպվում են մրցույթային հանձնաժողովի կողմից. հանձնաժողովի անդամներից մեկը մարդկային ռեսուրսների բաժնի ներկայացուցիչ է: Մրցույթը եռափուլ է. առաջին փուլում հանձնաժողովի կողմից ուսումնասիրվում են փաստաթղթերը և դրական եզրակացության դեպքում թեկնածուն հրավիրվում է երկրորդ փուլին: Այս փուլում հաստիքին ներկայացվող պահանջների առանձնահատկությամբ պայմանավորված անց է կացվում թեստավորման և/կամ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման որևէ ձևով՝ պաշտոնի անձնագրից բխող սահմանված չափանիշների հիման վրա: Երկրորդ փուլի արդյունքով հավակնորդը հաղթահարած է համարվում, եթե հավաքել է հանձնարարությունների առնվազն 50 տոկոսը: Երրորդ փուլը հանդիսանում է հարցազրույց, որի նախապատրաստման, անցկացման և հարցերի շրջանակի պատասխանատուն հանձնաժողովի նախագահն է:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՎՊՀ-ում դեռևս 2018թ.-ից հաստատված են պրոֆեսորի, դոցենտի, ասիստենտի և դասախոսի համար նախատեսված պաշտոնների անձնագրերը: Այս փաստաթղթերում սահմանված են համապատասխան պաշտոնների կազմակերպակառավարչական աշխատանքները, մասնագիտական գործունեության իրականացումը, իրավունքներն և պարտականությունները, պատասխանատվությունը, աշխատանքային գիտելիքները և կարողությունները: Մյուս կողմից անձնագրերի ուսումնասիրությունից հստակ չի երևում դասախոսի և ասիստենտի պարտականությունների սահմանազատումը:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Հիմք ընդունելով նախորդ փորձագիտական զեկույցի դիտարկումները՝ բուհի համապատասխան ամբիոնները աշխատանքներ են իրականացրել կրթական ծրագրերում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների ձևավորման ուղղությամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակներում ուսումնասիրված կրթական ծրագրերի դիատրկումից պարզ դարձավ, որ «Պատմություն» կրթական ծրագրի մասնագրի 16-րդ կետում սահմանված են «կրթական ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող պահանջները», որտեղ արտացոլված են մասնագիտական կարողություններ, հմտություններ և ընդհանրական կարողություններ: Մյուս կրթական ծրագրերում սահմանված պահանջներն առավել ընդհանրական են: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ

բակալավրի կրթական ծրագրերն իրականացնում են դասընթացների դասավանդման ուղղվածությանը համապատասխանող բազային կրթություն ունեցող դասավանդողները: Հատուկ մասնագիտական դասընթացներ դասավանդող մասնագետներին ընտրելիս բուհը կարևորում է գիտական աստիճանի (կամ գիտական կոչում, արվեստի ոլորտի պատվավոր կոչում և այլն) առկայությունը և/կամ գործունեության համապատասխան ոլորտում աշխատանքային փորձը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ պաշտոնների անձնագրերի 6-րդ և 7-րդ կետերում յուրաքանչյուր տարակարգի համար սահմանված են հիմնական և լրացուցիչ գիտելիքները, կարողությունները, ինչպես նաև աշխատանքային գործառույթները՝ ըստ կազմակերպակառավարչական, մասնագիտական գործունեության, իրավունքների և պարտականությունների:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Նախորդ հավատարմագրման արդյունքում ստացած խորհրդատվությունների հիման վրա բուհն իրականացրել է ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի գնահատման մեխանիզմների բազմազանեցում: Այս նպատակով ՎՊՀ-ն կարևորում է ուսանողական հարցումները և դասալսումները: Մասնավորապես բուհում գործում է «Դասախոսը ուսանողի աչքերով» հարցման անցկացման կանոնակարգ, որը մշակված է եղել 2015թ.-ին և վերանայվել 2019 և 2023 թվականներին: Ըստ այս կանոնակարգի հարցման նպատակն է պարզել ՊԴ կազմի դասավանդման որակը և արդյունավետությունը, հետագայում համապատասխան մեխանիզմների միջոցով տեղ գտած սխալները և թերությունները շտկելու, դասավանդման որակը և արդյունավետությունը բարձրացնելու համար:

Փորձագիտական այցի պարզ դարձավ, որ հարցումն իրականացվում է տվյալ առարկայի ամփոփիչ ստուգումից հետո՝ պարտքերի մարմանը հաջորդող ամիսներին: Հրավիրված դասախոսների համար հարցումն անցկացվում է համալսարանում առնվազն մեկ տարի աշխատելուց հետո: Ըստ հարցաթերթի ուսանողները գհահատում են դասախոսի ինչպես մանկավարժական պրոֆեսիոնալիզմը, այնպես էլ ակադեմիական ազնվությունը և էթիկայի նորմերը 1-5 բալային սանդղակով: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ հարցման արդյունքները քննարկվում են ամբիոնների և ֆակուլտետի խորհրդի նիստերում: Քննարկումներից հետո ամբիոնի վարիչը ներկայացնում է ցածր միավորներ հավաքած դասախոսների դասավանդման որակի բարելավմանն ուղղված քայլերը, արդյունքները: Մրցույթների ժամանակ հարցման արդյունքները տրամադրվում են մրցույթային հանձնաժողովին և օգտագործվում են պաշտոնում ընտրվելու և առաջխաղացման գործընթացում:

Հարցաթերթիկների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հարցաշարերը ներառում են տարաբնույթ, երբեմն նաև ուսանողի գնահատման տեսանկյունից ոչ թիրախային հարցեր: Այսպիսով, ուսանողները գնահատում են նյութի մատուցումը, դասավանդման տարբեր մեթոդների կիրառումը, գնահատման օբյեկտիվությունը, լսարանային ժամանակի օգտագործման արդյունավետությունը և այլ պարամետրեր 1-5 միավորանոց սանդղակով: Այսհուհանդերձ, պարզ չէ, թե ինչ չափանիշի հիման վրա են գնահատվում դասախոսի կողմից առարկայի իմացությունը, հարգալից վերաբերմունքը, հղկված խոսքը: Պարզ չէ նաև, թե դասախոսի նման որակների գնահատման վերաբերյալ

տվյալները որքանով են արժանահավատ և կիրառելի կրթական ծրագրերի հետագա բարելավումների իրականացման համար։

Հարցաշարերի վերլուծությունները ներկայացնում են թվային տվյալները, սակայն դրանք հաճախ չեն արտացոլում դասավանդման և ուսումնառության գործընթացի լիարժեք պատկերը՝ որակական վերլուծությունների պակասի պատճառով։

Դասախոսների գնահատման մյուս ընթացակարգը ՎՊՀ-ն համարում է ամբիոններում իրականացվող դասալսումները։ 2015թ.-ից գործում է դասալսումների անցկացման և քննարկման կազմակերպման կարգը, որը վերջին անգամ վերանայվել է 2023թ.-ին։ Ըստ կանոնակարգի դասալսումներ կարող են իրականացնել ինչպես ամբիոնի վարիչների, այնպես էլ ռեկտորի, պրոռեկտորների, դեկանների կողմից։ Դասալսման ընթացքում գնահատվում են դասախոսի մասնագիտական, մանկավարժական և մեթոդական պատրաստվածության աստիճանը, կազմակերպական, դասախոս-ուսանող հարաբերությունների ձևավորման և դասը վարելու համար ժամանակակից մեթոդներ կիրառելու, նոր տեխնոլոգիաներ ներդնելու ունակությունները, բացթողումները, մատնանշվում են դրական կողմերը, առաջարկությունները և տրվում եզրակացություն։ Դասալսումների արդյունքները ևս ըստ կանոնակարգի քննարկվում են ամբիոնների նիստերում։ Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քննարկումները հիմնականում վերաբերել են կիրառվող մեթոդների արդյունավետությանը, գնահատման համակարգի բարելավմանը։ Դրա արդյունքում ամբիոններում նորից քննարկվել են դասավանդման մեթոդների բարելավման ուղղությունները, փոփոխություններ են կատարվել գնահատման մեթոդներում, վերանայվել են առարկաների ուսումնամեթոդական փաթեթները։ Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ առկա են նաև փոխադարձ դասալսումներ՝ հաշվի առնելով նեղ մասնագիտական առարկաների շրջանակում փորձի փոխանակման հնարավորությունները։

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ։

ՊԴ կազմի կատարելագործման աշխատանքները կազմակերպում է Կրթական բարեփոխումների և վերապատրաստման կենտրոնը՝ համապատասխան ամբիոնի/ների/ հետ համատեղ։ ՎՊՀ-ում գործում է ՊԴ կազմի որակավորման բարձրացման և վերապատրաստման, ուսումնաօժանդակ և վարչական կազմի որակավորման բարձրացման ընթացակարգ, որը հաստատվել է 2024թ. հունվարին։ Ըստ ընթացակարգի՝ ամբիոնը Կենտրոնի և աշխատախմբի հետ համատեղ կարիքների վերհանման արդյունքում մշակում է որակավորման բարձրացման դասընթացի ծրագիր։ Դասընթացի ընդհանուր աշխատածավալը սահմանվում է 72 ժամ, որից 36 ժամը մասնագիտական ուղղվածությամբ։ Դասախոսը ծանոթանալով առաջարկվող դասընթացների ցանկին ընտրում է իր նախընտրած դասընթացը կամ դասընթացները և մասնակցում այդ գործընթացին։ Մասնագիտական որակավորման բարձրացման կամ վերապատրաստման դասընթաց կազմակերպելու նպատակով հրավիրվում է ամբիոնի գիտական ուղղվածությամբ, գիտական կոչում ունեցող կամ ոլորտի երկարամյա փորձառություն ունեցող մասնագետ այլ հաստատությունից 36 ժամաքանակով։ Համալսարանի աշխատակիցների որակավորման

բարձրացման և վերապատրաստման դասընթացները ֆինանսավորվում են համալսարանի բյուջեից:

2024թ.-ի համար նախատեսված ՊԴ, վարչական և ուսումնաօժանդակ կազմի որակավորման բարձրացման դասընթացների ժամանակացույցի համաձայն բուհում իրականացվել են հետևյալ դասընթացները՝ «Գիտական հետազոտության մեթոդաբանություն», «Մանկավարժահոգեբանական կարողություններ», «Նախագծերի կառավարում», ««Moodle» հեռավար ուսուցման համակարգի հմտություններ», «Համակարգչային հմտություններ 1,2»: Ըստ ինքնավերլուծության՝ վերապատրաստում անցած դասախոսների թիվը կազմում է 172: Ինչպես երևում է դասընթացների ներկայացված ցանկից, բացակայում են նեղ մասնագիտական ուղղվածության վերապատրաստումները:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ բուհի ՊԴ կազմի ներկայացուցիչները Erasmus+ կարողությունների զարգացման ծրագրերի շրջանակում ունենում են վերապատրաստման հնարավորություններ:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Փորձագիտական խմբի կողմից իրականացված փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց են տալիս որ ՎՊՀ-ն գիտակցում է ՄԿԾ-ների համապատասխան ՊԴ կազմով ապահովվածության կայունության խնդիրները: Մասնավորապես, օրինակ, բուհը որպես խնդիրներ նշում է մայրաքաղաքից հեռավորության վրա գտնվելու պատճառով կադրերի ներգրավման դժվարությունները, մեկ դասախոսի կողմից մի քանի առարկա դասավանդելու պրակտիկան, տվյալ դասընթացի շրջանակում փոխարինող դասախոսի բացակայությամբ պայմանավորված դասապրոցեսի կազմակերպման ռիսկերը և այլն:

ՊԴ անձնակազմի աշխատանքի արդյունավետ կազմակերպման և կայունության ապահովվածության բարձրացման նպատակով ՎՊՀ-ն վերջին երեք տարիների ընթացքում պարբերաբար լրամշակվել, վերանայել և փոփոխություններ է կատարել դասախոսների տարեկան ուսումնական բեռնվածության աշխատածավալի չափորոշիչներում՝ արտահայտված լսարանային և արտալսարանային ժամաքանակների հարաբերակցությամբ: Ըստ ՊԴ անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման 2024թ. կանոնակարգի 5 տարակարգերի համար սահմանվել են հետևյալ ժամաքանակները՝ պրոֆոսոր՝ 700 ժամ, դոցենտ՝ 720 ժամ, ավագ դասախոս՝ 740 ժամ, դասախոս՝ 760 ժամ և ասիստենտ՝ 780 ժամ: Ըստ ինքնավերլուծության ՎՊՀ-ում հիմնական դասախոսական կազմը հետևյալն է՝ պրոֆեսոր՝ 7, դոցենտ՝ 70, ասիստենտ և դասախոս՝ 49: Հիմնական դասախոսական կազմի 126 անդամներից 102-ը ունեն գիտական աստիճան և կոչում: ՊԴ կազմի ընդհանուր թիվը կազմում է 249 է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհը խրախուսում է նաև իր շրջանավարտներով դասախոսական կազմի համալրումը: Ներկայումս բուհում որպես դասախոս աշխատում է ՎՊՀ 189 շրջանավարտ: ՎՊՀ-ում ՊԴ կազմի միջին տարիքը 55 է:

ՊԴ կազմով ապահովվածության կայունության տեսանկյունից ՎՊՀ-ն կարևորում է նաև ասպիրանտական դպրոցի առկայությունը և սկսնակ երիտասարդ դասախոսների հետ տարվող աշխատանքները: 2019-2023թթ. ՎՊՀ-ում բարձրագույն կրթության երրորդ

մակարդակում ներգրավվել են 3 առկա, 8 հեռակա ասպիրանտ և 47 հայցորդ: Ներկայումս բուհում սովորում են 6 հայցորդ և 2 ասպիրանտ:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՎՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրությունը և պաշտոնների աստիճանական տեղակալումը (պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս, ասիստենտ) կարգավորում է դասախոսների մասնագիտական առաջընթացը, նկատի ունենալով, որ այստեղ հստակ սահմանված են պրոֆեսորադասախոսական համակազմի հինգ տարակարգերին ներկայացվող պահանջները:

Սկսնակ, երիտասարդ դասախոսների մասնագիտական և մանկավարժական կարողությունների զարգացման տեսանկյունից ՎՊՀ-ն կարևորում է «Երիտասարդ դասախոսների (աշխատակիցների) մենթորության կազմակերպման կարգը», որը հաստավել է 2018թ. -ին և պարբերաբար վերանայվել (վերջին վերանայումը 2024թ.): Կարգում սահմանված է մենթորության նպատակները և խնդիրները, մենթորության իրականացման առանձնահատկությունները (մենթորին ներկայացվող պահանջները, ժամկետներ, վարձատրություն,փաստաթղթային փաթեթը), մենթորի և սկսնակ երիտասարդ իրավունքները և պարտականությունները: Այսուհանդերձ, կարգը դեռևս գործուն կիրառություն չունի բուհում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ամբիոնների վարիչների ուղղորդմամբ առավել փորձառու դասախոսներն աջակցում են սկսնակ մասնագետներին, քննարկում նրանց հետ ուսումնառության ու դասավանդման մեթոդները, իրականացնում փոխադարձ դասալսումներ փորձի փոխանցման նպատակով:

ՎՊՀ-ն ՊԴ կազմի մասնագիտական առաջընթացի կարևոր մեխանիզմ է դիտարկում նաև աշխատողներին գիտական, ուսումնական մշակույթային, մարզական և կազմակերպական աշխատանքների համար խրախուսման կարգի դրույթների իրականացումը: Մասնավորապես, փորձագիտական այցի պարզ դարձավ, որ բուհը գիտական աշխատաքների համար դրամական խրախուսում տրամադրում է բարձր վարկանիշային պարբերականներում տպագրության, ինչպես նաև գիտական աստիճաններ և կոչումների ստացման և գյուտերի, հեղինակային իրավունքների և արտոնագրերի համար: Ուսումնական աշխատանքների իրականացման ժամանակ խրախուսվում են դասագրքերի, ուսումնամեթոդական աշխատանքերի իրականացումը, ինչպես նաև նոր կրթական ծրագրերի և վերապատրաստման դասընթացների կազմումը և իրականացումը:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

ՎՊՀ ինքնավերլուծության համաձայն՝ ուսումնաօժանդակ, վարչական և վարչատնտեսական անձնակազմի ընդհանուր թիվը 117 է, որից ուսումնաօժանդակը՝ 30: ՎՊՀ-ում վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ պաշտոնների տեղակալումը նույնպես իրականացվում է մրցույթային եղանակով «Վարչական ուսումնաօժանդակ և վարչատնտեսական պաշտոնների ընտրության և նշանակման կարգ»-ի համաձայն: Առկա են նաև վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ պաշտոնի անձնագրեր:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՎՊՀ-ում գործում են անհրաժեշտ որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք ապահովում են կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ դասախոսական և ուսումնաօժանդակ կազմով բուհի համալրումը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՎՊՀ-ն մշտապես վերանայում է ՊԴ կազմի մրցութային ընտրության կարգը, ինչը նպաստում է ընթացակարգի շարունակական բարելավմանը: Մրցութային գործընթացի բազմափուլ բնույթը հնարավորություն է տալիս երաշխավորել մասնագիտական համապատասխանությունը կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձեռքբերմանը: Միևնույն ժամանակ, կարևոր է, որ բուհը հստակեցնի դասախոսների և ասիստենտների պաշտոնների անձնագրերում սահմանված պարտականությունները՝ դասավանդման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհն աշխատանքներ է տարել կրթական ծրագրերում պրոֆեսորադասախոսական կազմի որակներին ներկայացվող պահանջների ձևավորման ուղղությամբ: Այս համատեքստում կարևոր է բոլոր կրթական ծրագրերում հստակեցնել դասախոսներին ներկայացված պահանջները, ինչը հնարավորություն կտա լիարժեքորեն գնահատել դասախոսների մասնագիտական համապատասխանությունը կրթական ծրագրերին:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում դասախոսական կազմի պարբերական գնահատման գործընթացների համակարգումը: Դրական է, որ բուհն իրականացնում է ուսանողական հարցումներ և դասալսումներ, սակայն հարցումների թիրախայնության և որակական վերլուծության պակասը նվազեցնում է դրանց արդյունավետությունը: Հարցաշարերի վերանայումը և դրանցում ուսանողների ու դասախոսների իրական կարիքները վերհանող հարցերի ներառումը հնարավորություն կտան բուհին վերհանելու դասավանդման և ուսումնառության խնդիրները և նպաստել դասախոսական կազմի մասնագիտական որակների զարգացմանը:

Դասախոսական կազմի մասնագիտական զարգացման ու վերապատրաստումների իրականացման համատեքստում դրական է, որ ՎՊՀ-ն ուշադրության կենտրոնում է պահում մանկավարժահոգեբանական հմտությունների, նախագծերի կառավարման և տեխնոլոգիական հմտությունների զարգացումը: Erasmus+ ծրագրերի շրջանակում վերապատրաստումները բուհի միջազգային համագործակցության շրջանակներում ևս նպաստել են դասախոսական կազմի կարողությունների զարգացմանը: Այնուամենայնիվ, նեղ մասնագիտական վերապատրաստումների բացակայությունը սահմանափակում է որոշակի ոլորտների մասնագետների զարգացման հնարավորությունները, այս ուղղությամբ ռեսուրսների հատկացումը, գործընկերային կապերի հաստատումը կարող են նպաստել նաև մասնագիտական նեղ ուղղություններով ժամանակակից պահանջներին ծանոթանալուն ու դրանց ինտեգրմանը դասավանդման գործընթացում:

Դրական է, որ բուհն իր ռազմավարական նպատակների իրագործման համար ձեռնարկում է քայլեր՝ դասախոսական բեռնվածության չափորոշիչների վերանայման ուղղությամբ: Այնուամենայնիվ, ոլորտային լավագույն կադրերի ներգրավման դժվարությունները պահանջում են լրացուցիչ միջոցառումներ, ինչպիսիք են արտոնյալ պայմանների ստեղծումը և խրախուսական համակարգերի ներդրումը: ՎՊՀ-ն կարևորում է երիտասարդ դասախոսների մասնագիտական աճը: Միևնույն ժամանակ, մենթորության

գործընթացը պահանջում է առավել կանոնակարգված մոտեցում, կարգի լիարժեք գործածում, ինչը կնպաստի փորձի փոխանցմանը և դասավանդման մեթոդների կատարելագործմանը:

Դասախոսական կազմի կայունության ապահովման տեսանկյունից շրջանավարտների ներգրավման խրախուսումը կարևոր քայլ է, սակայն անհրաժեշտ է ամրապնդել ասպիրանտական դպրոցի արդյունավետությունը երիտասարդ մասնագետների պատրաստման գործում: Դրական է, որ բուհը խրախուսում է գիտական գործունեությունը: Այս ուղղությամբ քայլերի շարունակական իրականացումը, հետազոտական գործունեությամբ զբաղվող դասախոսական շրջանակի ընդլայնումը կարևոր են հետազոտության ուղղությամբ բուհի սահմանած նպատակներին հասնելու համար:

Բուհն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ կազմ, ինչը հնարավորություն է տալիս իրականացնել բուհի ռազմավարական նպատակները: Միևնույն ժամանակ, կարևոր է անձնակազմի կարիքների գնահատման մեխանիզմների մշակումն ու կարողությունների զարգացման ծրագրերի արդյունավետ կազմակերպումը, ինչը կնպաստի բուհի գործունեության որակի և գրավչության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհն իր կրթական ծրագրերի իրականացման համար ունի համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ և ներգրավել է գործնական փորձառություն ունեցող դասախոսներ, ինչպես նաև աշխատանքներ է տարել կրթական ծրագրերի մասնագրերում դասախոսական կազմին ներկայացվող պահանջների հստակեցման ուղղությամբ, բուհում գործում են դասախոսական կազմի գնահատման որոշ մեխանիզմներ և ներքին առաջխաղացման միջոցառումներ, բուհն ունի համապատասխան վարչական ու ուսումնաօժանդակ կազմ՝ փորձագիտական խումբը գնահատում է, որ բուհը հիմնականում բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ՎՊՀ-ն գիտությունը համարում է իր առաջնային զարգացման ուղղություններից մեկը՝ հաշվի առնելով աշխատաշուկայի կողմից հետազոտահենք գիտելիքի պահանջը: Նախորդ փորձաքննության արդյունքում բուհին խորհրդատվություն է տրվել հստակեցնել ՎՊՀ հետազոտական ուղղությունները՝ մշակելով և կիրառելով հետազոտական գործունեության արդյունավետ ռազմավարություն: 2023թ. բուհի Գիտական խորհրդի կողմից հաստատվել է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտության ոլորտի զարգացման

2023-2025 թթ. ռազմավարությունը» (ռազմավարության ավարտի ժամկետը համահնչեցվել է ՌԾ ավարտին), որում նախանշված են համալսարանում գիտության զարգացման գերակայությունները՝ հայագիտություն, գիտություններ կյանքի և առողջության մասին, նորագույն արդյունավետ տեխնոլոգիաներ, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, այդ թվում՝ արհեստական բանականության օգտագործմամբ տեխնոլոգիաներ, տնտեսության և հասարակության զարգացման կարևորագույն հիմնախնդիրների լուծմանն ուղղված հիմնարար և կիրառական հետազոտություններ:

Բուհի ռազմավարությամբ կարևորվում են հիմնարար և կիրառական հետազոտությունների պլանավորումը և իրականացումը, գիտահետազոտական գործունեության ծավալումը միջազգային ասպարեզում՝ ոչ միայն գիտաժողովների մասնակցությամբ, այլև համատեղ ծրագրերի իրականացմամբ: Մի շարք այլ գործողությունների հետ միասին՝ բուհն անհրաժեշտ է համարում կատարելագործել գիտահետազոտական աշխատանքներին դասախոսների և ուսանողների ներգրավման մեխանիզմները, խթանել միջճյուղային հետազոտությունները, զարգացնել Համալսարանի գիտելիքահենք նորարարական ձեռնարկատիրական գործունեությունը: Հետազոտական աշխատանքներում ուսանողների և դասախոսների ներգրավման նպատակով բուհում ներդրվել են խրախուսման միջոցառումներ հոդվածների տպագրության, ձեռնարկների, մենագրությունների հեղինակման համար: Հետազոտության ոլորտում ձեռնարկատիրական գործունեության իրականացման դեպքեր բուհում դեռևս առկա չեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրումից հետո բուհում ձևավորվել են գիտական խմբեր կենսաբանության, հայոց լեզվի, տնտեսագիտության, պատմության ուղղությամբ: Գիտական խմբերը բաղկացած են երեք-չորս ներկայացուցիչներից, որոնցից մեկն ուսանող է կամ ասպիրանտ: 2022 թ. ձևավորվել է 5 գիտական խումբ, 2023 թ. և 2024 թ.՝ 4-ական գիտական խումբ: Գիտական խմբերի ստեղծումը հնարավորություն է տալիս հետազոտությունների արդյունքում ձևավորվել խմբեր ներպետական և միջազգային դրամաշնորհային հայտեր ներկայացնելու համար: Ֆինանսներ հատկացվում է հետազոտության համար անհրաժեշտ նյութերի, սարքերի, միջոցների ձեռք բերման համար, գործուղման, հոդվածի թարգմանության և տպագրման համար: Գիտական խմբերի աշխատանքներն ամփոփվել են հոդվածների, վերլուծությունների հրատարակմամբ:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Գիտության ոլորտում ՎՊՀ ռազմավարությունն ընդգրկում է բուհի ռազմավարական ծրագրի իրականացման 2023-2025 թվականները, որը կարելի է դիտարկել միջնաժամկետ պլանավորում: Բուհը գիտության ուղղությամբ հաջորդ ռազմավարության պլանավորումը նախատեսում է իրականացնել Ռազմավարական ծրագրի հետ համատեղ ժամկետների ու նպատակների համահունչությունն ապահովելու համար: ՎՊՀ գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունում հստակեցված են հոտազոտական ուղղությունները:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրումից հետո բուհի բոլոր ամբիոններն ունեն իրենց երկարաժամկետ և կարճաժամկետ հետազոտական ուղղությունները: Այսպես, 8 ամբիոնի գիտահետազոտական ուղղություններում առանձնացված են հետազոտությունների 24 երկարաժամկետ և 50

կարճաժամկետ ուղղություններ։ Բուհը դեռևս գտնվում է այս ուղղությունների հստակեցման փուլում և ոչ միշտ են բոլոր ուղղությունների համար սահմանված համապատասխան հետազոտական կարճաժամկետ ուղղություններ։ Երբեմն կարճաժամկետ ուղղությունները համընկնում են դասախոսների մասնագիտական նեղ ոլորտային ուղղություններին։

Գիտական խմբերի ձևավորումը ևս ամբիոնային հետազոտական ուղղությունների զարգացմանն աջակցելուն ուղղված քայլ է։ Վերջին տարիներին բուհը ֆինանսներ է հատկացնում գիտական խմբերի ձևավորման ու գործունեության իրականացման համար, որի նպատակն է նաև բարձրացնել բուհի հետազոտական ուղղությունների շնորհիվ բուհի տեսանելիությունը, ներգրավել դրամաշնորհային ծրագրեր և ունենալ հրատարակումներ միջազգային վարկանիշ ունեցող ամսագրերում։

Բուհում 2023թ. մշակվել է ամբիոնի գիտական գործունեության արդյունավետության գործակիցը որոշելու բանաձև՝ հաշվի առնելով յուրաքանչյուր դասախոսի ունեցած գիտական աշխատանքները և տպագրված հոդվածների ամսագրերի վարկանիշները։ Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին այդ բանաձևով իրականացվում է ամբիոնների գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության վերլուծություն, և արդյունքները ներկայացվում են գիտխորհրդի նիստերին։ Վերլուծության ընթացքում պարզվել է, որ միջազգային ամսագերում տպագրված որոշ հոդվածներ տպագրված են ցածր վարկանիշ ունեցող կամ չգրախոսվող ամսագրերում։ Այդ նպատակով վերանայվել է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան հիմնադրամի աշխատողներին գիտական, ուսումնական, մշակութային, մարզական և կազմակերպական աշխատանքների համար խրախուսման կարգը», որտեղ հստակեցվել է, որ խրախուսման ենթարկվում են միայն բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում տպագրված հոդվածների համար։

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Հետազոտական ծրագրերը ՎՊՀ-ում իրականացվում են գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում, ներբուհական դրամաշնորհների գիտական խմբերի կողմից և դասախոսական կազմի անձնական նախաձեռնությամբ՝ ամբիոնային թեմաների շրջանակներում։ Բուհի գիտահետազոտական կառույցներն են բնագիտական համալիր գիտահետազոտական լաբորատորիան և ամբիոնները, բուհի կառուցվածքում ընդգրկված է նաև Ս. Մերգելյանի անվան հեռանկարային հետազոտությունների կենտրոնը։

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ 2021-2023 թթ. համալսարանի բնագիտական համալիր լաբորատորիայում իրականացվել է «Թանթրվենի սև բուսատեսակի գեներատիվ օրգաններից էկոլոգիապես մաքուր բնամթերքի և բնական ներկի ստացման մեխանիզմների առանձնահատկությունները» նախագիծը, որը ստացել է պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում ԿԳՄՄՆ Գիտության պետական կոմիտեի կողմից, իսկ գիտական խումբը ձեռք է բերել գյուտի կարճաժամկետ արտոնագիր։

2024թ.-ին Գիտության պետական կոմիտեի «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթին համալսարանից ներկայացվել է երկու հայտ, որոնց արդյունքները փորձագիտական այցի ժամանակահատվածում դեռևս հայտնի չէին։

2022 թվականից Համալսարանի նախահաշվում առանձնացվել է Աշխատակիցների խրախուսման ֆոնդ՝ ՎՊՀ հիմնադրամի աշխատողներին գիտական, ուսումնական, մշակութային, մարզական և կազմակերպական աշխատանքների համար: Բուհը նախատեսում է ֆինանսական խրախուսում գիտական արդյունքների և այլ ձեռքբերումների համար /ատենախոսության պաշտպանություն, գիտական կոչման ստացում և այլն/, ինչպես նաև՝ ուսումնամեթոդական աշխատանքների համար՝ ձեռնարկների հրատարակում, կրթական ծրագրի ներդրում և այլն: Ըստ ինքնավերլուծության՝ 2022 թ. գիտության համար հատկացված գումարը կազմել է բյուջեի 1,67%, 2023թ.՝ 1,2 %, իսկ 2024 թ. նախատեսված գումարը կազմում է բյուջեի 1.35 %:

ՎՊՀ Գիտական խմբերի կանոնակարգում նախատեսված է մինչև 35 տարեկան անդամի պարտադիր առկայությունը: Գիտական խմբի մեջ պետք է ներառված լինեն կամ բակալավրի և մագիստրատուրայի ուսանողներ կամ ասպիրանտ և հայցորդ: Լրավճար է տրամադրվում վերջին երկու տարում Համալսարանում աշխատող և 36 տարին չլրացած հայցորդի (ասպիրանտի) ատենախոսության պաշտպանության համար, իսկ ՎՊՀ աշխատակից հայցորդներին և ասպիրանտներին տրամադրվում է ուսման վճարների 50% զեղչ:

Նախորդ հավատարամագրման փորձագիտական զեկույցում որպես բուհի թույլ կողմ նշվել է իրականացվող հետազոտությունները առևտրայնացնելու քաղաքականության բացակայությունը: Համալսարանում 2022 թ. բացվել է Ձեռներեցության և նորարարությունների զարգացման կենտրոնը (SMART CAFFE), որը հնարավորություն է տալիս բուհի ուսանողներին և դասախոսներին ստեղծել և զարգացնել գաղափարներ, այդ թվում՝ բիզնես ուղղվածության: SMART CAFFE-ում տեղի են ունենում տարբեր հանդիպումներ ուսանողների հետ, քննարկվում նրանց հետ նոր բիզնես-գաղափարներ և աշխատում այդ գաղափարների շուրջ: Երկու ստարտափ գաղափարներ 2023 թ.-ին ուսանողները ներկայացրել են Բուլղարիայի Սոֆիա քաղաքում կազմակերպված բիզնես գաղափարների եզրափակիչ մրցույթին: Գիտական արդյունքների առևտրայնացման կոնկրետ օրինակներ բուհում դեռևս առկա չեն:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Գիտության միջազգայնացումը ՎՊՀ 2024-2025թթ. միջազգայնացման ռազմավարության 4 հիմնական ուղղություններից երկրորդն է կրթության միջազգայնացումից հետո: Ըստ այդ ռազմավարության՝ Համալսարանը նպաստում է հետազոտական ծրագրերի միջազգայնացմանը, խթանում է օտարերկրյա համալսարանների միջազգային հետազոտական կենտրոնների հետ համագործակցությանը համատեղ հետազոտական նախագծերի, ասպիրանտական, դոկտորական ծրագրերի իրականացմանը, միջազգային գիտաժողովների կազմակերպմանը:

Ներկայումս համալսարանը ներգրավված չէ որևէ միջազգային գիտահետազոտական ծրագրում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ 2019-2024 թթ. ընթացքում կնքվել են 27 համագործակցության պայմանագրեր օտարերկրյա բուհերի հետ: Օտարերկրյա համալսարանների աշխատակիցները մասնակցություն են ունենում ՎՊՀ-ում կազմակերպվող միջազգային գիտաժողովներին ոչ միայն որպես զեկուցողներ, այլև ընդգրկված են լինում գիտաժողովների կազմկոմիտեներում:

Գիտական արդյունքների միջազգայնացման և դրանց որակի բարձրացման նպատակով խրախուսվում են միջազգային հրապարակումները և մասնակցությունները միջազգային գիտաժողովներին: ՎՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի հաշվետվության համաձայն՝ 2021թ. ամբիոնների աշխատակիցների կողմից տպագրված հոդվածների 33% տպագրված է արտասահմանյան ամսագրերում: Փորձագիտական ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հոդվածների մեծ մասը տպագրված է ազդեցության գործակից չունեցող ամսագրերում: 3 դասախոսների հոդվածներ տպագրված են ամսագրերում, որոնք ընդգրկված են Web of science շտեմարանում: 2023թ. ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի կողմից տպագրված 131 գիտական աշխատանքի արդեն 19,5%-ն է հրապարակվել միջազգային ամսագրերում, իսկ Scopus և Web of Science շտեմարաններում ընդգրկված բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում հրապարակված հոդվածները կազմում են ընդհանուր հոդվածների 12,5%: Այսպես, ՎՊՀ դասախոսները 2019-2023 թթ. տպագրել են գիտական 22 աշխատանք Scopus և Web of Science շտեմարաններում ընդգրկված բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում, որոնցից 2021թ.-ին տպագրվել է 3 հոդված, 2022 թ.՝ 5 հոդված և 2023 թ-ին՝ 11 հոդված:

Միջազգային գրախոսվող ամսագրերում հրապարակումներն ավելացնելու նպատակով բուհի 58 դասախոսի համար կազմակերպել է «Գիտական հետազոտության մեթոդաբանություն» վերապատրաստման դասընթաց, որի ընթացքում մասնակիցները ծանոթացել են մի շարք կարևոր հարցերի. ինչպես պլանավորել և իրականացնել գիտական հետազոտության գործընթացները, ինչպես փնտրել բարձր վարկանիշ ունեցող ամսագրեր Scopus և Web of Science գիտատեղեկատվական շտեմարաններում, ձևակերպել և այնտեղ հրատարակման ներկայացնել գիտական հոդված: Առանձին թեմաներ վերաբերել են դրամաշնորհային արդյունավետ ծրագրեր գրելու սկզբունքներին:

2022 թ.-ից փոփոխություն է կատարվել ՎՊՀ գիտական տեղեկագրերի խմբագրական խորհուրդների կազմերում, և ընդգրկվել են գիտնականներ արտասահմանից. յուրաքանչյուր խմբագրական խորհրդում ներգրավվել են 4-ական գիտնականներ Ռուսաստանի Դաշնությունից: Այս ճանապարհով բուհը հնարավորություն է ստեղծել հրապարակելու օտարալեզու հոդվածներ՝ դրանք նախօրոք գրախոսման ուղարկելով խմբագրական կազմի արտասահմանյան անդամներին:

ՎՊՀ գիտական տեղեկագրերում տպագրվող բոլոր հոդվածներն ունեն թվային օբյեկտի նույնականացուցիչ (Digital Object Identifier — DOI), որը հնարավորություն է տալիս տպագրվող նյութերը ավելի հասանելի դարձնել: Բացի այդ, 2023 թ. դեկտեմբերից համալսարանի և e-Library գիտական էլեկտրոնային գրադարանի հետ կնքված պայմանագրի հիման վրա համալսարանի գիտական տեղեկագրերը՝ Հումանիտար և հասարակական գիտություններ ու Բնական և ճշգրիտ գիտություններ, գրանցվել են e-Library գիտական էլեկտրոնային գրադարանում: Այժմ ՎՊՀ-ն քայլեր է իրականացնում՝ տեղեկագրերը РИНЦ համակարգում ներառելու ուղղությամբ:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում ՎՊՀ-ին տրվել էր խորհրդատվություն բարելավել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմները:

ՎՊՀ զարգացման ռազմավարական պլանում խնդիր է դրված ապահովել ուսումնական և գիտական գործընթացների միասնությունը, որի իրականացման համար 2022-2025թթ. համար նախատեսված է 2 միջոցառում.

- ապահովել գիտահետազոտական ծրագրերում և դրամաշնորհներում ուսանողների մասնակցությունը,
- ուսումնական գործընթացում գիտական հետազոտությունների արդյունքների կիրառման հիմքեր ստեղծել:

Նշված միջոցառումների իրականացման արդյունքում որպես վերջնարդյունք, ակնկալվում էր գիտահետազոտական ծրագրերում և դրամաշնորհներում ուսանողների և երիտասարդ հետազոտողների ներգրավում, ուսումնական գործընթացում գիտական հետազոտությունների արդյունքների կիրառման նախագծերի առկայություն:

Վերոնշյալ խնդիրների ուղղությամբ ՎՊՀ-ում ներդրվել են ամբիոնների գիտահետազոտական ուղղություններով դասընթացներ ուսումնական պլաններում: Այսպես, 49 պարտադիր և կամընտրական դասընթացներ են ներդրվել 16 կրթական ծրագրերում. օրինակ՝ «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրում ներդրվել են «Մաթեմատիկական լեզվաբանություն», «Հատկանվանագիտություն», «Տեղանվանագիտություն» առարկաները, «Ծրագրային ճարտարագիտություն» կրթական ծրագրում՝ «Արհեստական ինտելեկտի արդի լեզուներ», «Բնական լեզվի մշակում» առարկաները:

Մագիստրատուրայի ուսումնական պլաններում ներդրվել է «Գիտական հետազոտության մեթոդաբանություն» առարկան, որի շրջանակներում ուսանողները ձեռք են բերում գիտելիքներ՝ ինչպես պլանավորել և իրականացնել գիտական հետազոտություն, ինչպես գրել արդյունավետ դրամաշնորհային ծրագրեր:

Փորձագիտական խմբի կողմից կուրսային, ավարտական աշխատանքների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ թեմաներն ընտրվում են ամբիոնների գիտահետազոտական ուղղություններին համապատասխան: Բացի այդ ավելացել են հանձնարարվող ինքնուրույն աշխատանքները, և ուսանողներին տրվում են վերլուծական կարողությունների զարգացմանը ուղղված առաջադրանքներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ավարտական և վերլուծական աշխատանքները որոշ դեպքերում ուսանողներն իրականացնում են համաղեկավարությամբ, երբ ղեկավարներից մեկը գործատուն է:

Հաջորդ ուղղությունը գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավումն է և ուսանողների հետ համատեղ հոդվածների տպագրումը: Բուհի դասախոսներն իրենց ուսումնասիրության թեմաների շրջանակում ուսանողների հետ տպագրել են 79 համատեղ աշխատանք, ինչպես նաև ղեկավարել են ուսանողների 200-ից ավել զեկուցումներ ուսանողական գիտական ընկերության գիտաժողովներին: Մագիստրատուրայի ուսանողի հետ համատեղ տպագրված աշխատանքներից մեկը տպագրված է Scopus շտեմարանում ընդգրկված ամսագրում:

Մագիստրատուրայի 5 և բակալավրատի 3 ուսանող ընդգրկված են եղել 2021-24 թթ. համալսարանում գործող գիտական խմբերում: Սա էլ գիտական և ուսումնական գործընթացների փոխկապակցվածությունն ապահովող բուհի կողմից նախատեսված մեկ այլ գործողության արդյունք է:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՎՊՀ-ի կողմից ձևավորված հետազոտական ռազմավարությունը, որը համադրում է բուհի գիտական հետաքրքրություններն ու հավակնությունները: Ռազմավարությունն ընդգրկում է հիմնարար և կիրառական հետազոտությունների իրականացումը, խրախուսում է գիտության և բիզնեսի կապի ամրապնդումը, ինչպես նաև գիտելիքահենք ձեռնարկատիրական կառույցների զարգացումը՝ նպաստելով բուհի գիտական ներուժի շարունակական աճին և ֆինանսական անկախությանը:

Բուհն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում միջազգային համագործակցության զարգացմանը: Ռազմավարական ծրագրում ամրագրված են գիտաժողովներին մասնակցության, համատեղ ծրագրերի իրականացման և միջազգային գիտահետազոտական խմբերում դասախոսների ներգրավման նպատակները: Չնայած որոշակի առաջընթացին՝ բուհը դեռևս չի իրականացնում միջազգային գիտահետազոտական ծրագրեր, ինչը հետագա զարգացման առաջնահերթ խնդիրներից է:

Գիտական խմբերի ձևավորումը և դրանց ֆինանսավորումը կարևոր քայլ են բուհի գիտական գործունեության համար: Այս խմբերը նպաստել են միջազգային ամսագրերում տպագրությունների թվի աճին և հետազոտական նախագծերի ընդլայնմանը: Ֆինանսական աջակցությունը ներառում է հետազոտական սարքերի, նյութերի, թարգմանության և տպագրության ծախսերը, ինչը մեծացնում է հետազոտությունների որակը և արդյունավետությունը:

Գիտական գործունեության խրախուսման շրջանակում բուհը վերանայել է չափանիշները, որոնք խթանում են դասախոսների մասնակցությունը հետազոտական աշխատանքներում: Ամբիոնների արդյունավետության գործակցի մշակումը հնարավորություն է տալիս բացահայտել զարգացման կարիք ունեցող ոլորտները և ապահովում է գիտական աշխատանքի համակարգվածություն:

Բուհը քայլեր է ձեռնարկել գիտական արդյունքների առևտրայնացման ուղղությամբ, ներառյալ SMART CAFFE կենտրոնի ստեղծումը, որը խթանում է նորարարական գաղափարների և բիզնես նախագծերի իրականացումը: Այնուամենայնիվ, առևտրայնացման կոնկրետ օրինակների բացակայությունը պահանջում է ավելի խորքային քաղաքականություն և ռեսուրսների ուղղորդում:

ՎՊՀ-ն կարևորում է ուսումնական և գիտահետազոտական գործընթացների ինտեգրումը: Ուսումնական պլաններում ներդրվել են գիտահետազոտական բաղադրիչներ, ինչպես նաև համաղեկավարմամբ իրականացվող ավարտական աշխատանքների մոդել, որը ուսանողներին թույլ է տալիս կիրառել իրենց գիտելիքները իրական աշխատաշուկայում: Գործատուների ներգրավմամբ հետազոտական թեմաների ձևավորումը և մարզի կարիքներին համապատասխան հետազոտությունների իրականացումը կնպաստեն բուհի՝ որպես տարածաշրջանի հետազոտական կենտրոնի դիրքի ամրապնդմանը: Փորձագիտական խումբը դրական հանգամանք է համարում, որ բուհը ներդրել է համաղեկավարմամբ իրականացվող ավարտական աշխատանքների իրականացման մոտեցումը, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին իրենց գիտելիքները կիրառելու իրական աշխատաշուկայում: Այս համատեքստում կարևոր է ընդլայնել այս փորձը՝ գործատուների պահանջների հիման վրա հետազոտական թեմաները հավաքագրելով և նրանց ներգրավելով հետազոտական աշխատանքների իրականացման գործընթացում, ինչը հնարավորություն կտա մարզի կարիքներին համահունչ հետազոտություններ

իրականացնելու և կնպաստի բուհի՝ տարածաշրջանի հետազոտական կենտրոն լինելու հանձնառության իրականացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո բուհը քայլեր է ձեռնարկել հետազոտական գործունեության պլանավորման համար, սահմանվել են հետազոտական ուղղություններ, ներդրվել են մեխանիզմներ դասախոսներին և ուսանողներին ներգրավելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում, բուհն աջակցում է դասախոսների և ուսանողների կողմից հրատարակությունների իրականացմանը, փորձում է խթանել դասախոսների կողմից իրականացված հետազոտությունների հրապարակումը միջազգային գիտատեղեկատվական համակարգերում, ուսանողներին տրվող առաջադրանքներում ներդրել է հետազոտական բաղադրիչը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՊՀ-ն բավարարում է չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

ՎՊՀ 2021-2025թթ. ռազմավարական ծրագրի խնդիրներից են կրթական ծրագրերի ապահովումը ժամանակակից նյութատեխնիկական միջոցներով և կրթական միջավայրի բարելավումը: Բուհի բակալավրական կրթական ծրագրերի կառուցվածքում առկա է ռեսուրսներին առնչվող առանձին կետ՝ «Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը», որտեղ նշվում են ծրագրի հաջող իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները: Կրթական ծրագրերի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ որոշ կրթական ծրագրերում կոնկրետ նկարագրված են անհրաժեշտ ռեսուրսները: Օրինակ, «Կենսաբանություն» բակալավրական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովման ցանկն իր մեջ ընդգրկում է տեսալսողական կաբինետներ, ուսումնական լսարաններ՝ կահավորված մուլտիմեդիական ցուցադրական համալիրներով, համակարգչային լսարան՝ գլոբալ որոնողական համակարգեր մտնելու հնարավորությամբ, մասնագիտությանը համապատասխան հատուկ կահավորված լաբորատորիաներ, ուսումնամեթոդական կաբինետներ:

Մյուս կողմից, որոշ ծրագրերում նշված չեն անհրաժեշտ ամբողջական ռեսուրսները, այլ գրված է՝ ինչ է առկա համալսարանում: Օրինակ, «Կերպարվեստ» ծրագրում նշված չեն անհրաժեշտ նյութերի, նկարակալների, գործիքների, արվեստանոցների և այլ ուսումնական ռեսուրսների ցանկը և նկարագրությունը:

Մագիստրոսական կրթական ծրագրերում բացի հանձնարավող գրականությունից՝ այլ ուսումնական ռեսուրսների անհրաժեշտության մասին պահանջներ ներառված չեն։

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ ՎՊՀ ուսումնական և մյուս գործընթացներն իրականացվում են 4 մասնաշենքերում՝ 2 ուսումնական, համակարգչային և վարչական։ Դասապրոցեսի համար ուսումնական 1-ին մասնաշենքում առանձնացված է 22 լսարան, 2-րդ մասնաշենքում՝ 21, առկա են նյութերով և սարքավորումներով տարբեր աստիճանի հագեցվածության 18 լաբորատորիա և մասնագիտական կաբինետներ։ Նախորդ հավատարմագրումից հետո վերանորգվել են լսարանները, մի մասը կահավորվել է էլ. գրատախտակներով, տեսասարքերով և համակարգիչներով։ Համալսարանի ներքին ցանցը ներառում է 300-ից ավել համակարգիչ՝ ներառյալ բուհի ստորաբաժանումների տեխնիկան, մասնաշենքերում տրամադրվում է WiFi հասանելիություն։

Բուհի ստորաբաժանումները, ամբիոնները և դասախոսական անձնակազմը, ուսանողական խորհուրդը ապահովված են աշխատասենյակներով և անհրաժեշտ տեխնիկայով։

Այսուհանդերձ, ինքնավերլուծության համաձայն՝ ՎՊՀ-ն իր թույլ կողմերից է համարում լաբորատորիաների արդիականացման դեռևս ոչ բավարար մակարդակը և համակարգչային տեխնիկայի մաշվածության խնդիրը։

Բուհի մասնաշենքերի 2 սրահներից մեկը ծառայում է որպես հրաձգարան, մյուսը՝ աերոբիկայի և շախմատի դահլիճ, իսկ ֆիզկուլտուրայի և սպորտի դասերի համար վարձակալվում է 3 մարզադահլիճ։ Բուհի տարածքում չկա գործող սննդի կետ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ավարտվել են համալսարանի տարածքում նախատեսվող ունիվերսալ մարզադահլիճի նախագծանախահաշվային աշխատանքները։

Ուսումնական միջավայրի կարևոր բաղադրիչներից է բուհի գրադարանը, որն ունի 777 բաժանորդ։ Գրադարանն ունի 70 հոգու համար նախատեսված ընթերցասրահ, իսկ երեք գրապահոցներում առկա է 139 714 միավոր գիրք։ Գրքերից մոտ 3000-ը ներառված են հնատիպ և հազվագյուտ գրքերի առանձնացված հավաքածոուում՝ «Ոսկե ֆոնդ»-ում։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2020-2021 ուսումնական տարվանից սկսած գրադարանն ընթերցողներին սպասարկում է բացառապես էլեկտրոնային պատվերի հիման վրա, իսկ 2023 թ.-ից բուհը ձեռնամուխ է եղել KOHA գրադարանային-տեղեկատվական համակարգի ներդրմանը։

Իրականացնելով ՄՈՒՀ-ի 2021-2025թթ. բարելավման պլանով նախատեսված գործողությունները՝ ՎՊՀ կայքէջում ստեղծվել է լոկալ էլեկտրոնային գրադարան՝ 53 մասնագիտությունների հայերեն և օտարալեզու 11235 էլ. մասնագիտական գրքերով. այստեղ գրանցված է 1470 ընթերցող։

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ վերջին երկու տարում գրադարանը նոր գրքերի հայտեր ամբիոններից ընդունել է, սակայն բուհը գնումներ դեռ չի կատարել։ Փաստացի նոր գրականության հիմնական աղբյուր են դարձել անհատների նվիրատվությունները։ Գրադարանի ղեկավարությունը հիմնական խնդիր է տեսնում հայալեզու գրականության սակավությունը, նոր օտարալեզու գրականության գրեթե բացակայությունը, համացանցային վճարովի գրադարանային կայքէջերին անհասանելիությունը, իսկ իր աշխատանքի արդյունավետության ցուցիչ է դիտարկում օգտատերերի բավարարվածության մակարդակը։

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ համալսարանի ռեսուրսները մեծապես համալրվել են տարբեր տարիների միջազգային համագործակցության ծրագրերի շրջանակներում /TEMPUS, ERASMUS, ERASMUS+ և այլն/: ՎՊՀ-ն կարողացել է բարելավել ռեսուրսները՝ առաջին հերթին բուհի տեխնիկական հագեցվածության առումով: Վերջինը Erasmus+ CONNECT նախագծի շրջանակներում ՎՊՀ համաֆինանսավորմամբ վերկառուցված, արդիական տեխնիկայով և գույքով կահավորված Ձեռներեցության և նորարարությունների զարգացման կենտրոնն է (SMART CAFFE):

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարման, թափանցիկությունը և հաշվետվողականությունը խթանելու, ռազմավարական նպատակներին աջակցելու նպատակով ՎՊՀ-ն 2023թ. ներդրել է ֆինանսական քաղաքականություն: Ըստ քաղաքականության՝ համալսարանի ֆինանսների բաշխումը պետք է սկսվի ռազմավարական պլանավորումից հետևյալ քայլերի իրականացումով.

1. առաջնահերթությունների սահմանում,
2. բյուջեի պլանավորում,
3. ռեսուրսների բաշխում,
4. արդյունքների հետևում:

ՎՊՀ ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանում նշված ռեսուրսներում հստակեցված չեն տրամադրվող ֆինանսների չափերը, որոշ տեղերում նշված է Բյուջե, սակայն հստակեցված չէ նախատեսված գումարային չափը: Ստորաբաժանումների աշխատանքային պլանների ուսումնասիրությունը ևս ցույց տվեց, որ դրանցում ևս գործողությունների համար ֆինանսներ նախատեսված չեն:

ֆինանսական ռեսուրսների կառավարումը Համալսարանում իրականացվում է մեկ տարվա կտրվածքով բյուջեի նախահաշվի կազմման, նախորդ տարվա վերջին բյուջեի փաստացի կատարողականի դիտարկման, առանձին կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացվող նյութական ռեսուրսների ձեռք բերման հայտերի հիման վրա: Ներկայացված կարիքների ուղղությամբ ՄՈՒՀ-ի կողմից ֆինանսական ռեսուրսները բաշխվում են ըստ առաջնահերթության:

Համալսարանի ֆինանսական միջոցները ձևավորվում են պետական ֆինանսավորումից, ուսման վարձավճարներից և այլ վճարովի ծառայություններից: Պետական բյուջեից մուտքերը հետևյալ հիմնական ուղղություններից են՝ ուսման վարձի փոխհատուցում, կրթաթոշակ, հանրակրթական ուսուցման ֆինանսավորում: Այլընտրանքային ֆինանսական հոսքեր են ապահովվում լրացուցիչ ծառայությունների մատուցումից /ուսուցիչների վերապատրաստման, հաշվապահական հաշվառման դասընթացների իրականացման և ընդունելության հայտերի համար դիմորդի կողմից վճարվող գումարներից/ և դրամաշնորհային ծրագրերից:

Վերջին 5 տարիների ՎՊՀ բյուջեի եկամուտների ուսումնասիրություններն ըստ աղբյուրների ցույց են տալիս, որ որոշակի նվազումից հետո 2022թ. նկատմամբ 2023թ.-ին աճել են ուսման վարձերից /3.7%/, դրամաշնորհներից /51%/ ձևավորվող մուտքերը: Բուհի բյուջեի մյուս աղբյուրների մասով դիտարկվում է մուտքերի նվազում: Ըստ ռեկտորի

տարեկան հաշվետվությունների՝ բուհի փաստացի ֆինանսական մուտքերը 2019թ.-ից մինչև 2022թ. աճել են 839.5 մլն դրամից մինչև 898.3 մլն դրամ, իսկ 2023թ. դրանք նվազել են 23.6 մլն դրամով: Դրամաշնորհներից և վերապատրաստումներից ստացվող մուտքերի տոկոսային մեծ աճը իրականում էական ազդեցություն չունի բուհի բյուջեի ձևավորման վրա: ՎՊՀ 2024թ. բյուջեի նախահաշվի ակնկալվող մուտքերի 98.6%-ը սպասվում էր գործառնական գործունեությունից և միայն 1.39%-ը՝ ոչ գործառնական գործունեությունից՝ վերապատրաստման դասընթացներ, ձեռնարկատիրական գործունեություն և այլն:

2024թ. բյուջեի ծախսային հիմնական հոդվածներն են՝ աշխատավարձեր՝ 79%, աշխատակիցների խրախուսումներ՝ 1.03%, գիտահետազոտական աշխատանքների խթանման ֆոնդ՝ 1.35%, ղեկավարի ֆոնդ՝ 0.11% և այլն: Ավելացել է, «պահուստաֆոնդը», որը կազմում է ընդհանուր ծախսերի մոտ 3%-ը:

Բուհի առաքելության հիմնական ուղղությանը /Դասավանդում և ուսումնառություն/ տրամադրվում են բյուջեի հիմնական՝ ուսումնական և օժանդակ ծախսերը, որոնք կազմում են մինչև 94%, և որի մեծ մասը հասնում է աշխատավարձին և աշխատակիցների խրախուսման վճարներին. տարբեր տարիների աշխատավարձին տրամադրվող միջոցները եղել են տարբեր, բայց միշտ մնացել են առաջնայինը. 2021թ. դրանք կազմել են 80.4%, 2022թ.-ին՝ 72.7%, իսկ 2023թ.՝ 78.7%: Մյուս հոդվածներով ծախսերը էապես փոքր են եղել. օրինակ, 2023թ. բյուջեով գրադարանային ծախսերը կազմել են 0.03%, դասախոսների մասնագիտական զարգացման ծախսերը՝ 0.02%, ուսումնական սարքավորումների և գույքի ձեռքբերման ծախսերը՝ 0.55%:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Համալսարանի բյուջեի նախագծի մուտքային մասը կազմվում է՝ հիմքում ունենալով ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժնի կողմից հաշվարկված եկամուտները՝ ելնելով հիմնականում ուսանողների թվի կանխատեսումից: Ծախսային մասի համար հիմք են հանդիսանում ստորաբաժանումների կողմից ներկայացված գնումների հայտերը և զեկուցագրերը, այլ փաստաթղթեր: Բյուջեի նախագիծը քննարկվում է բուհի Գիտխորհրդում և հավանության արժանանալու դեպքում՝ ներկայացվում Հոգաբարձուների խորհրդի հաստատմանը:

Ֆինանսական միջոցների բաշխումը, ըստ ՎՊՀ ֆինանսական քաղաքականության, որևէ կերպ չի կապվում կրթական ծրագրերի նպատակների և շարունակականության ապահովման հետ, սակայն փաստացի ծախսերի միջոցով փորձ է արվում ամբողջական ուսումնական միջավայրն ապահովել անհրաժեշտ ռեսուրսներով: Բուհը նաև ընթացիկ ծախսերի համար ֆակուլտետներին տրամադրում է 1 մլն դրամ առանձին ֆոնդ /ՄՈՒՀ-ի տարեկան ծախսերի 0.11%-ի չափով/՝ նախատեսված հիմնականում շրջայցերի, կազմակերպչական և այլ աշխատանքների համար:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ֆինանսական միջոցների բաշխման և մոնիթորինգի ընթացակարգ ՎՊՀ-ն չի հաստատել, ինչպես նաև մեխանիզմներ և ցուցիչներ՝ բաշխման արդյունավետությունը գնահատելու համար: Սակայն բուհում ներդրված են որոշակի գործընթացներ այդ ուղղություններով: Այսպես, ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժինը ըստ ամիսների ռեկտորին է

ներկայացնում բյուջեի նախահաշվի կատարողականը և մոտակա երկու ամիսների դրամական մուտքերի և ելքերի կանխատեսումները: Ֆինանսների օգտագործումը շահակիցների համար թափանցիկ դարձնելու նպատակով ՎՊՀ բյուջեների տարեկան նախահաշիվները և դրանց կատարողականները հասանելի են համալսարանի կայքում:

Ամեն մի ֆինանսական տարվա վերջին իրականացվում է արտաքին աուդիտ՝ ըստ ՀՀ-ում գործող կարգի: Աուդիտի եզրակացությունը ռեկտորի կողմից ներկայացվում է Համալսարանի հոգաբարձուների խորհրդին և նույնպես տեղադրվում ՎՊՀ կայքում:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ վերջին տարիներին կատարվել են որոշակի աշխատանքներ բուհի ռեսուրսների համալրման ուղղությամբ, սակայն բացակայում են վերլուծությունները ֆինանսական և այլ ռեսուրսների ներդրման արդյունքների ու արդյունավետության վերաբերյալ: Մասնավորապես, ավելացել են վճարովի վերապատրաստման դասընթացներն արտաքին շահակիցների համար, որոնք ունեն շարունակական բնույթ, օրինակ՝ հաշվապահական հաշվառման, ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ են անցկացվել: Բուհի՝ որպես հիմնադրամի գործունեություն ծավալելը տալիս է մի շարք հնարավորություններ արտաքին աղբյուրներից միջոցների ներգրավման, սակայն նկատելի արդյունքները դեռ քիչ են: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ բուհը նախատեսում է մեծացնել ֆինանսական ռեսուրսների ներհոսքը ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացների անցկացման, լաբորատոր սարքավորումների նպատակային վճարովի կիրառման՝ հատկապես դատաբժշկական գործընթացներում, հրաձգարանից օգտվելու իրավունքի տրամադրման և այլ ծառայությունների միջոցով:

Ընդհանուր առմամբ, ըստ ռազմավարական խնդիրների ռեսուրսների ամբողջական հստակ բաշխում ՄՈՒՀ-ի կողմից դեռևս չի իրականացվում, ծախսային մասի համար հիմք են հանդիսանում բոլոր ստորաբաժանումների կողմից ներկայացված գնումների հայտերը և զեկուցագրերը, որոնց գնահատումը և հաստատումը կատարվում է Ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժնի կողմից, տարեկան բյուջեների նախահաշիվները ըստ ռազմավարական նպատակների կամ խնդիրների ռեսուրսների ամբողջական բաշխում չեն պարունակում, սակայն տալիս են հնարավորություն ՄՈՒՀ-ի կողմից թե կրթական, թե գիտական հիմնարար ծրագրերի իրականացման և ընթացիկ խնդիրների հաղթահարման համար:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Մինչև 2021 թվականը Համալսարանում ընդունված փաստաթղթերը գրանցվում և հաշվառվում էին մտից մատյաններում: 2021թ. նոյեմբերի 1-ից բուհում կիրառվում է փաստաթղթաշրջանառության «Mulberry Groupware 2.0» համակարգը, ինչն ապահովում է փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակների պահպանումը, դրանց ընթացքին և հրահանգների իրականացման ժամկետների պահպանմանը հետևելը: Համակարգին

հասանելիություն ունեն վարչական ղեկավարները և բոլոր ստորաբաժանումների ղեկավարները:

Համալսարանում ներդրված է էլեկտրոնային ուսումնական բազա, ինչը դյուրացնում է ուսանողների վերաբերյալ վիճակագրական տվյալների հետ աշխատանքը: Բազան կառավարվում է կրթական գործընթացների կառավարման բաժնի կողմից, և այնտեղ արտացոլված են ուսանողների անհատական գործերը, գնահատականները, ռոտացիայի արդյունքները, ներքին շարժը և այլն:

Համալսարանում առկա համակարգիչները ներառված են ներքին ցանցում, որի միջոցով աշխատակիցներին հասանելի են դառնում տարբեր փաստաթղթերի և հաշվետվությունների նախագծերը, ռեկտորի հրամանները, գիտխորհրդի որոշումները և այլն:

Համալսարանը դեռ չի վերլուծել տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացների կառավարման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

ՎՊՀ ներքին շահակիցների առողջապահական կարիքների բավարարման համար համալսարանում գործում է բուժկետ: Առաջին կուրսի ուսանողները պոլիկլինիկաներում պարտադիր անցնում են բուժզննում և արդյունքները ներկայացնում բուժքրոջը:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ 2022թ.-ից համալսարանը բյուջեով ծախսեր է նախատեսում աշխատակիցների առողջության ապահովագրության համար:

ՎՊՀ տարածքն առանձնացված է շրջակայքից՝ ստեղծելով փակ միջավայր ուսանողների և աշխատակիցների համար, իսկ մուտքը հսկվում է պահակակետով: Համալսարանի բակային տարածքում և մասնաշենքերի ներսում տեղադրված են տեսախցիկներ, որոնց շուրջօրյա ռեժիմով հետևում են վարչատնտեսական բաժնի աշխատակիցները: Ներդրվել է հակահրդեհային ազդարարման ինքնաշխատ ժամանակակից համակարգ, որը մշտապես միացված է ԱԻՆ SOS համակարգին, փակցված են տարհանման պլանները: ՄՈՒՀ-ի քաղպաշտպանության շտաբը՝ ԱԻ Լոռու մարզի հատուկ ջոկատի հետ համատեղ, ներքին շահակիցների մասնակցությամբ անցկացնում է ուսումնաուսուցողական միջոցառումներ փրկարարական տարբեր տիպի տարհանումներին նախապատրաստելու նպատակով:

Ուսումնական միջավայրի անվտանգության ապահովման նպատակով բուհի ուսումնական լաբորատորիաներում փակցված են անվտանգության մասին տեղեկատվական պաստառներ, կիրառվում են անվտանգության մատյաններ, որոնցում ուսանողները ստորագրում են՝ հաստատելով իրենց կողմից անվտանգության կանոններին ծանոթ լինելը, իսկ լաբորատոր ցուցումներում առկա է նաև ուսանողների կողմից թույլատրելի քայլերի հաջորդականությունը, նրանց նկատմամբ պահանջներն ու սահմանափակումները:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում խորհրդատվություն էր տրամադրվել՝ «ստեղծել համապատասխան պայմաններ հատուկ կարիքներ ունեցող անձանց համար կրթական միջավայրը լիարժեք հասանելի դարձնելու նպատակով»:

Հենաշարժողական խնդիրներ ունեցող ուսանողների համար Համալսարանի բոլոր մասնաշենքերի մուտքերում առկա են թեքահարթակներ, որոնց միջոցով հնարավոր է մուտք գործել մասնաշենքերի առաջին հարկեր:

Բուհում գործում է նաև Հոգեբանական աջակցության կենտրոն, որտեղ հասարակական հիմունքներով աշխատում են երկու հոգեբան:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

ՎՊՀ ՈԱ կենտրոնի կողմից իրականացվող առցանց հարցումների հարցաթերթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ռեսուրսների գնահատման հարցերը հիմնականում վերաբերում են ներքին շահակիցների՝ ռեսուրսներից ընդհանուր բավարարվածությանը: Հարցումների վերլուծություններն ամփոփվում են հիմնականում տվյալների քանակական պատկեր դուրս բերելով: Ռեսուրսներով ապահովվածությունից բավարարվածության տվյալների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ բուհի ռեսուրսներով բավարարված են ուսանողների 62, իսկ դասավանդողների՝ 65 տոկոսը: Համալսարանը դիտարկում է ուսանողների բավարարվածությունը լաբորատորիաների ընդհանուր հագեցվածությունից, համակարգիչների հասանելիությունից, ծրագրային ապահովվածությունից և այլն: Բարելավման ավելի հիմնավոր առաջարկներ ներկայացնելու համար անհրաժեշտ կոնկրետ և նպատակային լրացուցիչ ուսումնասիրություններ և վերլուծություններ առկա չեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ խնդրահարույց հարցերը քննարկվում են ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչների հետ անցկացվող ֆոկուս խմբերում: Այսպես, քննարկումների արդյունքում համակարգչային ռեսուրսները վերաբաշխվել են ըստ լսարանների, անհրաժեշտ նյութական ռեսուրսների և ծառայությունների ձեռքբերման նպատակով տարին 4 անգամ հավաքագրվում են հայտեր, ձեռք են բերվում անհրաժեշտ ռեսուրսները, որոնց արդյունքում նախորդ հավատարմագրումից հետո ավելացել է շահակիցների բավարարվածությունը ռեսուրսներով ապահովվածությունից:

Միևնույն ժամանակ, դասախոսներին և ուսանողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման հստակեցված և կանոնակարգված մեխանիզմներ ՎՊՀ-ում բացակայում են[7]:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՎՊՀ-ի քայլերը կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի պահանջների ձևավորման ուղղությամբ: Կրթական ծրագրերում ռեսուրսների արտացոլումը բուհին հնարավորություն կտա ավելի հիմնավորված վերլուծել ռեսուրսների ապահովվածությունը, գնահատել ուսումնական միջավայրի բավարար լինելը և երաշխավորել, որ ռեսուրսները համապատասխանում են կրթական ծրագրերի պահանջներին:

Բուհն արդյունավետորեն օգտագործում է միջազգային ծրագրերի և համագործակցությունների հնարավորությունները՝ կրթական ծրագրերի ռեսուրսների

[7] Վերաձևակերպվել է բուհի հետ քննարկումների արդյունքում:

թարմացման և համալրման նպատակով: Սակայն առկա ռեսուրսները բավարարում են միայն մինիմալ պահանջներին և լուրջ ներդրումների կարիք ունեն՝ հետազոտական առաջնահերթություններին և կրթական ծրագրերի համաչափ զարգացմանը հասնելու համար:

Դրական է նաև, որ բուհը կարևորում է գրադարանի համալրման անհրաժեշտությունը: Այս ուղղությամբ անհրաժեշտ է լուծել ուսանողների և դասավանդողների գրականության հետ կապված խնդիրները՝ ձեռք բերելով ժամանակակից մասնագիտական գրականություն և ապահովելով հասանելիություն վճարովի գրադարանային ցանցերին:

Բուհի 2023թ. ֆինանսական քաղաքականությունը նախատեսում է ռազմավարական պլանավորմանը համապատասխան ֆինանսների բաշխում, սակայն այս դրույթները դեռևս ամբողջությամբ չեն կիրառվում: Գործողությունները հաճախ չեն արտացոլում ռազմավարական նպատակներին հասնելու ուղիները, իսկ երկարաժամկետ պլանավորում չի իրականացվում: Փորձագիտական խումբը գտնում է, որ երկարաժամկետ ֆինանսական պլանավորման համակարգի ներդրումը կբարձրացնի ռեսուրսների արդյունավետ բաշխումը և նպաստի բուհի ռազմավարական նպատակների իրականացմանը:

Ֆինանսական ռեսուրսների բազմազանեցումը կարևոր է բուհի կայունությունը ամրապնդելու համար: Լրացուցիչ ծառայությունների մատուցումը և դրամաշնորհային ծրագրերի ներգրավումը կնվազեցնեն պետությունից և ուսման վարձավճարից կախվածությունը:

Բուհի համար կարևոր է ստեղծել ֆինանսական ծախսերի արդյունավետության գնահատման մեխանիզմներ և ցուցիչներ, որոնք թույլ կտան մոնիթորինգ իրականացնել և բարելավել ֆինանսական կառավարումը: Ֆինանսական հաշվետվությունները և աուդիտի արդյունքները պետք է վերլուծվեն ու դառնան հետագա պլանավորման հիմք:

Դրական է, որ բուհը կիրառում է էլեկտրոնային համակարգեր տեղեկատվության տարածման և փաստաթղթաշրջանառության կազմակերպման համար, ինչը նպաստում է գործընթացների արդյունավետությանը:

ՎՊՀ-ն դրական տեղաշարժեր է իրականացրել ապահով և անվտանգ միջավայրի ստեղծման ուղղությամբ՝ հատուկ ուշադրություն դարձնելով առողջապահական և անվտանգության պահպանման հարցերին, ինչպես նաև լաբորատորիաներում անվտանգ պայմանների ձևավորմանը:

ՈԱ կենտրոնի կողմից իրականացվող ռեսուրսներից բավարարվածության հարցումների ֆոկուսխմբային քննարկումներով լրացումն արդյունավետ կլինի, եթե վերլուծության միջոցով հնարավոր լինի մասնավորեցնել խնդիրները և պատճառները պարզել: Հարցումների և գործիքների հստակեցումը կօգնի ստանալ որակական տվյալներ, որոնք կնպաստեն ռեսուրսների բարելավմանն ուղղված որոշումների կայացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո բարելավվել են բուհի ռեսուրսները, ստեղծված ուսումնական միջավայրը բավարար է կրթական ծրագրերով սահմանված նվազագույն պահանջների ապահովման համար, ֆինանսական միջոցներ են տրամադրվում ենթակառուցվածքների շարունակական բարելավման և զարգացման համար, առկա են առողջապահական և անվտանգության ապահովման

ծառայություններ, գործում է փաստաթղթաշրջանառության ներքին համակարգ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը բավարարում է չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

ՎՊՀ-ը, կարևորելով հասարակական պատասխանատվությունը, իր 2021-2025թթ. ՌԾ-ի «Հասարակական պատասխանատվություն» ենթակետում նախատեսում է «տեղեկատվության հաշվետվողականության մեխանիզմների կանոնակարգում, հետադարձ կապի ապահովման համար սոցիալական ցանցերի օգտագործման հնարավորությունների ընդլայնում և խորացում, հասարակությանը տեղեկատվության փոխանցման մեխանիզմների կատարելագործում»:

ՎՊՀ-ում հաշվետվողականության հիմնական մեխանիզմ են դիտարկվում ռեկտորի տարեկան հաշվետվությունները: Ռեկտորի հաշվետվությունը ձևավորվում է բոլոր ստորաբաժանումների կողմից ներկայացված հաշվետվությունների հիման վրա: Ռեկտորի հաշվետվության մեջ արտացոլված են հետևյալ բաժինները կառավարում (մարդկային, ֆինանսական, ենթակառուցվածք), կրթական գործունեություն (ռեսուրսներ, գիտահետազոտական գործունեություն, հոգևոր-մշակութային և ռազմահայրենասիրական գործունեություն, համագործակցություն և միջազգայնացում, որակի ապահովում և կառավարում, հանրակրթություն, միջին մասնագիտական կրթություն): ՎՊՀ-ի տարեկան հաշվետվությունը քննարկվում է հոգաբարձուների խորհրդում: Այստեղ քննարկվում է նաև ֆինանսական հաշվետվությունը և հաջորդ տարվա նախահաշիվը:

Հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանցում թույլ է փոխկապակցվածությունը ՌԾ նպատակների հետ: Դրանք առավելապես պարունակում են տարեկան ընթացիկ գործունեության նկարագրությունը՝ հիմնականում թվային տվյալների ներկայացմամբ:

ՎՊՀ-ում գործում են նաև ներքին հաշվետվողականության մեխանիզմներ, մասնավորապես, առանձին ստորաբաժանումների հաշվետվությունները քննարկվում են ամբիոնների նիստերում, ֆակուլտետային խորհուրդներում, համալսարանի գիտական խորհրդի նիստերում՝ ներքին շահակիցների առջև ապահովելով հաշվետվողականություն ու թափանցիկություն:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:

Բուհն իր ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունն ապահովում և հասարակությանը հարսանելի է դարձնում համալսարանի պաշտոնական կայքի, սոցիալական հարթակների՝ Facebook-ի, Instagram-ի, Telegram-ի միջոցով: Ավելին, այս ուղղությամբ աշխատանքերի արդյունավետ իրականացման նպատակով ՎՊՀ-ն 2024թ.-ին մշակել է «Համացանցային պաշտոնական կայքի և սոցիալական ցանցերի աշխատանքերի կազմակերպման կարգ»:

Համալսարանի կայքի և սոցիալական ցանցերի աշխատանքը կազմակերպվում է Գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժնի կողմից: Առկա է բաժնի կանոնակարգը (մշակվել է 2021թ.), որտեղ սահմանված են բաժնի գործառույթները, գործունեության ուղղությունները, իրավասությունները, կառուցվածքը: Բաժինն ունի 6 աշխատակից՝ ղեկավար, միջազգային կապերի և դրամաշնորհների խթանման մասնագետ, բուհ-դպրոց կապի աշխատանքների համակարգող-մասնագետ, լրագրող, հասարակայնության հետ կապերի մասնագետ, համակարգչային գրաֆիկայի մասնագետ:

Նախորդ հավատարմագրման արդյունքում փորձագիտական խմբի խորհրդատվությունների հիման վրա վերանայվել է համալսարանի պաշտոնական կայքը՝ բարելավելով տեղեկատվության և հաշվետվողականության եռալեզու տարածման հնարավորությունները: Կայքի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ բուհը տեղադրել է հիմնական պաշտոնական փաստաթղթերը, կրթական ծրագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը: Համալսարանի կայքում պարտադիր տեղադրվում են նաև ռեկտորի տարեկան և ֆինանսական հաշվետվությունները, ծախսերի նախահաշիվները և դրանց կատարողականները, աուդիտի արդյունքները: Այստեղ հրապարակված են նաև գիտական խորհրդի կողմից հաստատված բոլոր կարգերը և ընթացակարգերը: Այսուհանդերձ, ռուսերեն և անգլերեն էջերը դեռևս ձևավորման փուլում են, մասնավորապես տեղեկատվության որոշ բաժիններ ներկայացված չեն /օր. կրթական ծրագրեր/, կամ լրացված են մասնակիորեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհը գտնում է, որ հատկապես դիմորդների շրջանում անհրաժեշտ նյութերը տարածելու նպատակով սոցիալական ցանցերն առավել արդյունավետ են և արագ արձագանքի հնարավորություն են ընձեռում:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Տեղեկատվության տարածումը և հասարակայնության հետ բազմակողմանի կապերի ստեղծումը Գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժնի գործառույթներից է, որն ամրագրված է նաև համապատասխան աշխատակիցների պաշտոնի անձնագրերում:

Բուհը հետադարձ կապի ապահովման մեխանիզմ է դիտարկում պաշտոնական կայքի միջոցով հետադարձ կապի հնարավորությունը և սոցիալական ցանցերի (Facebook, Instagram, Telegram) հնարավորությունները, պաշտոնական էլեկտրոնային փոստերը, ինչպես նաև բջջային հեռախոսակապը:

Սոցիալական ցանցերի արդյունավետությունը գնահատելու համար յուրաքանչյուր տարի կատարվում է արդյունքների և տվյալների վերլուծություն: Կատարվում է սոցիալական

կայքերի հաճախելիության, հետևորդների քանակի վերլուծություն: Համալսարանի ֆեյսբուքյան էջն ունի 10106 հետևորդ, իսկ ինստագրամյան էջը՝ 1670:

Յուրաքանչյուր ուսումնական տարի ՎՊՀ-ն կազմակերպում է «բաց դռների օր» միջոցառումը, որտեղ արտաքին շահակիցները, մասնավորապես, դիմորդները, նրանց ծնողները, տարածաշրջանի դպրոցների ուսուցիչները հանդիպում եմ համալսարանի ներկայացուցիչների հետ և ստանում տեղեկատվություն իրենց հետաքրքրող հարցերի վերաբերյալ:

Նախորդ հավատարմագրման ընթացքում փորձագիտական խմբի կողմից տրամադրվել էր խորհրդատվություն՝ մշակել և ներդնել շահակիցների հետ հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմներ: Հետևելով փորձագիտական խմբի խորհրդատվությանը ՎՊՀ-ն 2021թ.-ից համալսարանում դպրոցականների մասնագիտական կողմնորոշման և դիմորդների հավաքագրման նպատակով կազմակերպում է «Մասնագիտությունների տոնավաճառ» միջոցառումը: Միջոցառման արդյունավետության գնահատման համար հարցումներ են տրամադրվել մասնակցող դպրոցներին, որոնք բարձր գնահատական են տվել և անհրաժեշտ համարել միջոցառման կազմակերպումը՝ որպես մասնագիտությունների մասին տեղեկատվության տրամադրման միջոց և առաջարկել միջոցառումն անցկացնել պարբերաբար:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

ՎՊՀ-ն հասարակությանը գիտելիքի փոխանցման մեխանիզմ է դիտարկում ընդունելության քննությունների առարկայական («Հայոց լեզու», «Անգլերեն», «Մաթեմատիկա» և «Հայոց պատմություն») անվճար դասընթացների կազմակերպումը, որոնք իրականացվում են յուրաքանչյուր տարի հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներից մինչև մայիս ամիսը:

ՎՊՀ-ն իրականացնում է նաև թիրախային տարբեր խմբերի վերապատրաստման, որակավորման և վերաորակավորման դասընթացների կազմակերպում: Այս աշխատանքները համակարգում է Կրթական բարեփոխումների և վերապատրաստումների կենտրոնը:

2021 թ.-ից ՎՊՀ-ն ՀՀ ԿԳՄՍ նախարարության երաշխավորմամբ կազմակերպում է նաև վերապատրաստման դասընթացներ նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալ ցանկացողների, ատեստավորման ենթակա ուսուցիչների, ուսուցչի օգնականների, ՆՈՒՀ մանկավարժական աշխատողների համար:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2022թ.-ից արտաքին շահակիցների համար ՎՊՀ-ում իրականացվում է «Հաշվապահական հաշվառում» վերապատրաստման դասընթացը: Ըստ ինքնավերլուծության՝ ներկայումս հավաքագրվում է ունկնդիրների չորրորդ խումբը: 2021թ.-ից որակի ապահովման կենտրոնը IFES կազմակերպության միջնորդությամբ ուսանողների համար կազմակերպում է «Ներգրավված քաղաքացի» լրացական դասընթացը: 2023թ.-ին համալսարանում «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության հետ համատեղ մեկնարկել է «Քաղաքացիական կրթության կենտրոն» նախագիծը: Նախաձեռնության նպատակն է ստեղծել նպաստավոր միջավայր մարզի

երիտասարդների քաղաքացիական գիտելիքների, սոցիալական և տեխնիկական կարողությունների զարգացման համար:

Համալսարանի Մշակույթի կենտրոնի շրջանակներում գործում են «Բիայնա» երգչախումբը, «Ադելաս» պարի խումբը և Գրական խմբակ, որոնք կազմակերպում են մշակութային միջոցառումներ, որոնց հրավիրվում են նաև գործընկեր դպրոցների, կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմ է նաև ուսանողների գիտաժողովների նյութերի, մագիստրոսների ավարտական թեզերի արդյունքների հիման վրա հոդվածների հրապարակումը պաշտոնական կայքի միջոցով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհի կողմից դեռ չեն գնահատվել մարզում այս հրապարակումներին շահակիցների հասանելիությունն ու դրանց կիրառումը մարզի կարիքները բավարարելու հարցում: Հասարակությանն արժեքների փոխանցման մեխանիզմների կիրառման արդյունավետության գնահատումը դեռևս ոչ բոլոր միջոցառումների դեպքում է իրականացվում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՎՊՀ-ում գործող հաշվետվողականության սահմանված կարգը, որը ներառում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հաշվետվողականության մեխանիզմներ: Ռեկտորի տարեկան հաշվետվությունները, որոնք ձևավորվում են ստորաբաժանումների հաշվետվությունների հիման վրա, կարևոր նշանակություն ունեն բուհի գործունեության թափանցիկության ապահովման գործում: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը նշում է, որ հաշվետվություններն ամբողջությամբ չեն արտացոլում ՌԾ նպատակների հետ փոխկապակցվածությունը, ինչը կարող է սահմանափակել դրանց գործնական կիրառելիությունը ռազմավարական որոշումների ընդունման համար:

Դրական են ՎՊՀ ջանքերը գործընթացների թափանցիկության ապահովման ուղղությամբ՝ օգտագործելով պաշտոնական կայքը և սոցիալական հարթակները: Խումբը դրական է գնահատում նաև բուհի մոտեցումը պաշտոնական կայքում փաստաթղթերի ու կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակելու ուղղությամբ, ինչը հնարավորություն է տալիս արտաքին շահակիցներին ծանոթանալու բուհի գործունեությանը և իրականացվող կրթական ծրագրերին: Փորձագիտական խմբի դիտարկմամբ կայքի ռուսերեն և անգլերեն էջերի համալրումը կարևոր են նաև միջազգային արտաքին շահակիցների համար տեղեկատվության հասանելիությունն ապահովելու համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՎՊՀ-ում հասարակության հետ կապերի ձևավորման ուղղությամբ ներդրված մեխանիզմները: Հատկապես արդյունավետ են սոցիալական ցանցերի ակտիվ օգտագործումը և «Մասնագիտությունների տոնավաճառ» միջոցառումը, որոնք նպաստում են բուհ-դիմորդ-գործատու կապերի ամրապնդմանը: Սակայն խումբը գտնում է, որ հետադարձ կապի մեխանիզմների արդյունավետության գնահատումը և արտաքին շահակիցների կարիքների վերլուծությունը կարող են նպաստել միջոցառումների որակի բարձրացմանը և բուհի հասարակական ներգրավվածության ընդլայնմանը:

ՎՊՀ-ն իրականացրել է բազմապրոֆիլ միջոցառումներ հասարակությանը գիտելիքների փոխանցման ուղղությամբ, ներառյալ՝ անվճար դասընթացներ, վերապատրաստման ծրագրեր և այլն: Մշակույթի կենտրոնի շրջանակներում

կազմակերպվող մշակութային միջոցառումները ևս մեծապես նպաստում են հանրության կրթական և մշակութային իրազեկմանը: Այս համատեքստում հատկապես դրական է բուհի մոտեցումն իրականացված հետազոտությունների արդյունքների հասանելիության ապահովման ուղղությամբ արտաքին շահակիցների համար:

Այնուամենայնիվ, բուհի կողմից կազմակերպված ծրագրերի, իրականացված հրապարակումների արդյունավետության համակարգված գնահատման բացակայությունը կարող է սահմանափակել դրանց հետագա բարելավման հնարավորությունները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհում գործում են ներքին և արտաքին հաշվետվողականության մեխանիզմներ, բուհն ապահովում է իրականացվող գործընթացների ու միջոցառումների թափանցիկությունը ու հասանելիությունը հասարակությանը, կիրառում է պաշտոնական կայքն ու սոցիալական հարթակներն արտաքին շահակիցների հետ հետադարձ կապն ապահովելու համար, առկա են հասարակությանը գիտելիքների փոխանցման մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՊՀ-ն բավարարում է չափանիշ 8-ի պահանաջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՎՊՀ-ն միջազգայնացումը դիտարկում է որպես ռազմավարական զարգացման առաջնահերթություն: 2024-2025թթ. միջազգայնացման ռազմավարությամբ սահմանված են միջազգայնացման առաջնահերթությունները, նպատակներն ու խնդիրները: Միջազգայնացման զարգացման ուղղությամբ որդեգրած ուղղություններն են՝ կրթության, գիտության միջազգայնացում, միջազգային համագործակցության զարգացում, միջազգային վարկանիշի ամրապնդում: Նախորդ հավատարմագրումից հետո բուհը քայլեր է իրականացրել միջազգայնացման զարգացման համար սահմանված նպատակների ուղղությամբ: Մասնավորապես, համաձայն Գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի 2023թ. կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվության՝ ներկայումս բուհն ունի 11 Էրազմուսյան և 18 ոչ Էրազմուսյան համագործակցություններ արտերկրյա կրթական հաստատությունների հետ: Տալլինի տեխնիկական համալսարանի հետ նոր համագործակցության հաստատմամբ բուհը նախատեսում է շարժունություն և համատեղ ծրագրերի իրականացում ապահովել:

Միջազգային համագործակցությունների արդյունքում խթանվել է բուհում օտարալեզու առարկաների դասաժամերի ավելացումն ու առանձին դասընթացներն օտար լեզվի ուսուցմամբ իրականացնելը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզեց, որ միջազգային շարժունությանն ուսանողները կարող են դիմել ուսումնառության երկրորդ և երրորդ տարիներին՝ հաշվի առնելով, որ առաջին տարում դեռևս չունեն կուտակային ՄՈԳ, իսկ վերջին տարում նախապատրաստվում են ավարտական քննություններին:

Միջազգայնացման գործընթացները և նախորդ հավատարմագրումից ի վեր Erasmus+ ծրագրերում ընդգրկվելը բուհին հնարավորություն են տվել համալրելու ռեսուրսները և զարգացնելու իր ենթակառուցվածքները:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ բուհը կարևորում է կրթական ծրագրերի շրջանակներում փորձի փոխանակումը: Այս նպատակով բուհի ՄԿԾ-ներն ուղարկվում են ՀՀ համալսարաններ արտաքին կարծիք ստանալու նպատակով: Նախորդ հավատարմագրումից հետո ավելացել է նաև ՄԿԾ-ների կազմման աշխատանքներին արտաքին շահակիցների ներգրավումը, միաժամանակ նաև այլ բուհերից դասախոսական կազմի ներգրավումը՝ որպես դասավանդողներ:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

ՎՊՀ արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացները համակարգում է Գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժինը: 2020 թ. ձևավորված բաժինն իր մեջ ներառում է նախկինում գործող Կրթական բարեփոխումների և արտաքին կապերի, Լրատվության և տպագրության բաժինների գործառույթները և ասպիրանտական կրթության համակարգման և կազմակերպման աշխատանքները: Բաժինը կազմակերպում է միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերին, միջազգային փորձին վերաբերող միջոցառումներ, ինչպես նաև համալսարանի արտաքին և ներքին գովազդը, պատրաստում է Համալսարանի գործունեությանը վերաբերող հաղորդագրություններ, տեղեկատվական նյութեր, հոդվածներ, գովազդային հոլովակներ, մամուլ հաղորդագրություններ:

Բաժինն իր գործառույթների շրջանակում կազմում է տարեկան աշխատանքային պլան, որտեղ ներկայացվում են պլանավորվող միջոցառումները և հանդիպումները: Արտաքին կապերի ու միջազգայնացման գործընթացների խթանման համար բուհը նախատեսում է 200.000 դրամ բյուջե միջազգային, գիտական կոնֆերանսներին և սեմինարներին մասնակցելու համար ուսանողների և անձնակազմի ճանապարհածախսի նպատակով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործուղման ծախսերը հիմնականում Erasmus+ ծրագրերի շրջանակում տրամադրվում են մասնակիցներին, իսկ լրացուցիչ անհրաժեշտության դեպքում ղեկավար կազմը փորձում է աջակցել դասախոսներին և ուսանողներին:

Բաժինը համալրված է նաև Միջազգային կապերի և դրամաշնորհների խթանման մասնագետով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ միջազգային հետազոտական դրամաշնորհներ բուհը դեռևս չունի: Դրամաշնորհային ծրագրերին ՊԴԿ ցածր մասնակցության խոչընդոտը բուհի ներկայացմամբ լեզվական իմացության ոչ բավարար մակարդակն է:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Համալսարանի միջազգայնացման ու համագործակցությունների հաստատման ուղղություններն են Էրազմուս+ ծրագրերը, համագործակցություններն օտարերկրյա համալսարանների հետ, տեղական կառույցների հետ գործընկերային նախագծերի իրականացումը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2019-2024 թթ. ՎՊՀ-ը ներգրավված է եղել 8 Էրազմուս+ ծրագրերում, որոնցից երկուսն ավարտվել են 2020 թ.-ին, երեքը՝ 2024 թ.-ին, իսկ երեքն ընթացքի մեջ են: ՎՊՀ-ն առաջին անգամ նաև դարձել է Erasmus+ ծրագրի համակարգող . DeSIRe ծրագիրն ուղղված է Հայաստանի և Վրաստանի բուհերում փափուկ հմտությունների զարգացմանը՝ 21-րդ դարի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

2019-2024թթ. ընթացքում ՎՊՀ-ն համագործակցել է 11 համալսարանի հետ շարժունության ծրագրերի շրջանակում. գործընթացներն իրականացվել են՝ ըստ «Ուսանողների, վարչական և պրոֆեսորադասախոսական աշխատակազմի շարժունության կանոնակարգի»: Այդ ծրագրերին մասնակցել են 18 ուսանող և 10 աշխատակից, իսկ համալսարանը շարժունությամբ ընդունել է 9 դասախոս, ովքեր անցկացրել են դասընթացներ ՎՊՀ ուսանողների և դասախոսների համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շարժունության ծրագրերին մասնակցող ուսանողների թիվը հիմնականում սահմանափակվել է լեզվական խոչընդոտներով, ինչը բուհում վերանայված ուսումնական պլանների և օտար լեզվի լրացուցիչ դասընթացների միջոցով բուհը փորձում է հաղթահարել:

Միջազգային համագործակցությունները նպաստել են ոչ միայն բուհի ներկայացուցիչների կարողությունների զարգացմանը, այլև բուհը կարողացել է համագործակցությունների շնորհիվ համալրել իր ռեսուրսները:

Բուհն ունի պրակտիկաների իրականացման պայմանագրեր մարզում գործող կազմակերպությունների հետ՝ հաշվի առնելով կրթական ծրագերի ուղղությունները: Մանկավարժական որակավորում շնորհող մասնագիտությունների դեպքում ուսանողները պրակտիկաներն անցնում են դպրոցներում, ավելի քիչ են իրենց նեղ մասնագիտական ուղղություններով այլ պրակտիկա անցնելու հնարավորությունները (օրինակ՝ Պատմություն կրթական ծրագրի պարագայում):

Համալսարանի և «Ինստիգեյթ մոբայլ» կազմակերպության համագործակցության արդյունքում բացվել է «Գերազանցության կենտրոն», որը կրթական տեխնոլոգիական հարթակ է և հնարավորություն է տալիս ուսանողներին ձեռք բերել SS ոլորտի համապատասխան հմտություններ և գիտելիքներ: Կենտրոնի գործունեությունը նպաստում է համալսարան-աշխատաշուկա կապի ամրապնդմանը, ինչպես նաև ռեսուրսների զարգացմանը: Կենտրոնի շրջանակում նախատեսվում է նաև համատեղ դրամաշնորհային ծրագրերի իրականացում:

Համալսարանը համագործակցում է Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների (FAST) հիմնադրամի հետ՝ «SciNova» ծրագրի շրջանակում: Ծրագրի արդյունքում վերապատրաստվել են ՎՊՀ-ի երեք աշխատակիցներ՝ նպաստելով գիտահետազոտական մեթոդաբանության զարգացմանը մագիստրանտների, ասպիրանտների և հայցորդների շրջանում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ներկայումս

գիտահետազոտական մեթոդաբանություն առարկան ներառված է մագիստրատուրայի ուսումնական պլաններում:

«ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության հետ համատեղ ՎՊՀ-ում ստեղծվել է «Քաղաքացիական կրթության կենտրոնը», որը նպատակ ունի զարգացնել երիտասարդների քաղաքացիական գիտելիքները, սոցիալական և տեխնիկական հմտությունները, ինչպես նաև խթանել նրանց մասնակցությունը հանրային որոշումներում:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Նախորդ փորձաքննության արդյունքում բուհի համար շեշտադրվել է օտար լեզվի իմացության բարձրացման անհրաժեշտությունը: Վանաձորի պետական համալսարանը վերջին տարիներին կարևոր քայլեր է ձեռնարկել ուսանողների և աշխատակիցների՝ օտար լեզվի տիրապետման մակարդակի բարձրացման ուղղությամբ: Համալսարանը ներգրավված է Էրազմուս+ SMARTI նախագծում, որի շրջանակներում իրականացվել են ESP («Անգլերենը՝ հատուկ նպատակների համար») և EMI («Անգլերենը՝ որպես ուսուցման միջոց») ծրագրերի վերապատրաստումներ: Բուհում վերջին տարիներին ավելացել է օտար լեզվին տիրապետողների թվաքանակը: Ըստ պաշտոնի անձնագրի, պահանջ է դրվել դասավանդողների և վարչական աշխատողների նկատմամբ կարողանալ շփվել գործընկերների հետ որևէ օտար լեզվով (առնվազն պարզ խոսակցական մակարդակով): Բուհում կազմակերպվում են օտար լեզվի ստուգման քննություններ՝ թեստային տարբերակով, որի արդյունքում բուհը շնորհում է նաև վկայագրեր:

Ուսանողների լեզվական հմտությունների զարգացման համար ավելացվել են օտար լեզվի դասաժամերն ու կրեդիտների քանակը (30-40%-ով), ներդրվել են նոր ձևաչափեր, ինչպես օրինակ՝ անգլերենի կարճաժամկետ դասընթաց «Սերվիս» մասնագիտության համար, որը մեկնարկելու է հոկտեմբերին: Կազմակերպվում են նաև օտար լեզվի ստուգման թեստեր, որոնց արդյունքում տրամադրվում են վկայագրեր, իսկ դասախոսները պարբերաբար իրականացնում են օտար լեզվով ֆիլմերի դիտումներ և քննարկումներ՝ ուսանողների հետ համագործակցային ձևաչափում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս բոլոր նախաձեռնություններն աջակցել են դասախոսներին ու ուսնաողներին բարելավելու լեզվահմացության իրենց մակարդակը: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ներքին շահակիցների լեզվահմացության ամբողջական գնահատում բուհը չի իրականացրել: Հարկ է նշել նաև, որ միջազգային ուսանողների ներհոսք ապահովելու նպատակով օտարալեզու կրթական ծրագրեր բուհում չեն իրականացվում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ համալսարանի կողմից վերջին տարիներին իրականացված միջազգային ծրագրերը և ձևավորված գործընկերային կապերը նպաստել են բուհի տեսանելիության բարձրացմանը՝ հնարավորություն ընձեռելով ուսանողներին և դասախոսներին ներգրավվելու միջազգային ծրագրերում:

Փորձագիտական խումբը գնահատում է նաև, որ բուհը կրթական ծրագրերի շրջանակներում կարևորում է փորձի փոխանակումը և արտաքին կարծիքների ներգրավումը: Այս գործընթացները կարող են առավել արդյունավետ դառնալ, եթե ներառեն միջազգային

փորձագետների մասնակցություն՝ ՄԿԾ-ների միջազգային լավագույն փորձին համապատասխանեցնելու նպատակով:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ բուհը շարունակական ռեսուրսներ տրամադրի միջազգայնացման գործընթացների խթանման համար: Սա կնպաստի միջազգայնացման ենթակառուցվածքների զարգացմանը, միջազգային համագործակցության խորացմանը և բուհի ներկայացուցիչների կարողությունների շարունակական զարգացմանը:

Փորձագիտական խումբն արձանագրում է, որ ՎՊՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ենթակառուցվածքը կազմակերպված և կանոնակարգված է, ինչը ապահովում է որոշակի արդյունավետություն, սակայն, կան մի քանի ոլորտներ, որտեղ անհրաժեշտ են բարեփոխումներ և լրացուցիչ միջոցառումներ՝ առավել կայուն ու ազդեցիկ արդյունքների հասնելու համար: Առաջին հերթին, բուհին անհրաժեշտ է իրականացնել կառուցվածքային փոփոխությունների գնահատում՝ պարզելու համար, թե արդյոք այս նոր կազմակերպչական մոդելը բարելավում է ռեսուրսների կենտրոնացումը և կառավարման արդյունավետությունը, թե այն բարդացնում է կառավարման գործընթացները: Եթե պարզվի, որ կառավարման գործընթացների բարդացումը իրականում խոչընդոտում է արագ արձագանքման հնարավորություններին, ապա անհրաժեշտ կլինի կատարել որոշակի ճշգրտումներ կառավարման կառուցվածքում արտաքին կապերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՎՊՀ-ի արդյունավետ համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ, ինչը մեծապես նպաստել է բուհի միջազգայնացման գործընթացի զարգացմանը: Համալսարանի ներգրավվածությունը Էրազմուս+ ծրագրերում, միջազգային շարժունության ծրագրերում, ինչպես նաև տարբեր գործընկերային նախագծերի իրականացումը ամրապնդել է բուհի միջազգային հարաբերությունները և նպաստել ուսանողների ու դասախոսների կարողությունների զարգացմանը:

Դրական է, որ Վանաձորի պետական համալսարանը վերջին տարիներին կայուն քայլեր է ձեռնարկել ուսանողների և աշխատակիցների՝ օտար լեզվի տիրապետման մակարդակի բարձրացման ուղղությամբ, ինչը կարևոր է բուհի միջազգայնացման ու միջազգային ծրագրերի շրջանակում արդյունավետ մասնակցության համար: Բուհի կողմից կազմակերպվող օտար լեզվով դասընթացները, կամընտրական ու լրացուցիչ առարկաների շրջանակում օտար լեզվի զարգացման ուղղությամբ կատարվող քայլերը նպաստել են ներքին շահակիցների լեզվահմացության բարձրացմանը՝ փորձի փոխանակման ու համագործակցության հնարավորություններ ստեղծելոբ բուհի ներկայացուցիչների համար: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ ներքին շահակիցների՝ օտար լեզվի տիրապետման ամբողջական գնահատումն անհրաժեշտ է՝ հասկանալու, թե որքանով են բարելավվել լեզվական կարողությունները շահակիցների տարբեր խմբերի համար և ինչի վրա է անհրաժեշտ ուշադրություն դարձնել հետագա զարգացումն ապահովելու համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՊՀ-ի կոմոիից օտարալեզու կրթական ծրագրերի իրականացումը կնպաստի միջազգային ուսանողների ներգրավմանը և բուհի գրավչության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո աճել է բուհի ներգրավվածությունը միջազգային ծրագրերում, բուհը նախաձեռնողական է ներգրավվելու

Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագրերում, համագործակցում է տեղական բուհերի հետ կրթական ծրագրերի վերանայման նպատակով, ունի գործընկերային մեծ շրջանակ ուսանողների պրակտիկաների կազմակերպման համար, փորձի փոխանակման նպատակով համագործակցում է գործընկեր միջազգային բուհերի հետ, իրականացնում է դասախոսների և ուսանողների՝ լեզվամիմացության բարձրացման միջոցառումներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՊՀ-ն բավարարում է չափանիշ 9-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՎՊՀ ՌԾ նպատակներից մեկը Որակի ապահովման համակարգի կատարելագործումն է, համաձայն որի որակի ապահովման հիմնական առաքելությունն է ապահովել Համալսարանի կողմից մատուցվող ծառայությունների շարունակական բարելավումը՝ հասարակությանը մատուցելով բարձրակարգ կրթական ծառայություններ: ՎՊՀ որակի ապահովման հայեցակարգը ներկայացված է 2022թ. հրապարակված Որակի ապահովման ձեռնարկում, որը 2017թ. Ձեռնարկի բարելավված տարբերակն է: Ձեռնարկը պարունակում է նաև ՎՊՀ որակի ապահովման համակարգի պատմությունը, Համալսարանի տեսլականը և առաքելությունը:

Ձեռնարկի համաձայն՝ բուհի ՈԱ քաղաքականությունն իրականացվում է համալսարանի տեսլականին, առաքելությանը և բնագավառի ռազմավարությանը համապատասխան, կանոնակարգերի և ընթացակարգերի հիման վրա, որոնք մշակվում են, իսկ գործընթացները համակարգվում՝ համալսարանի կառավարման մարմինների ու որակի ապահովման կենտրոնի կողմից: Մյուս կողմից, բուհն ունի 2018թ. մշակված «ՎՊՀ որակի քաղաքականություն», որի դրույթների մի մասը տեղ են գտել ՈԱ ձեռնարկում: Ձեռնարկի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Որակի ներքին ապահովման համակարգի քաղաքականության իրականացման համար պատասխանատու է Համալսարանի ողջ անձնակազմը, սակայն կոնկրետ պատասխանատվությունները ՈԱ ձեռնարկում հստակեցված չեն:

Ձեռնարկում տեղ են գտել նաև ՈԱ որոշ ընթացակարգեր՝ Որակի ապահովման աուդիտի կարգը, Կրթական ծրագրի ներքին աուդիտի կազմակերպման ընթացակարգը, Ծրագրերի մշտադիտարկման ընթացակարգը, ՄԿԾ առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման քաղաքականությունը և ընթացակարգը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի ապահովման գործընթացների բուհի պլան առկա չէ. ՎՊՀ-ն առաջնորդվում է ՌԾ-ով սահմանված գործողություններով և քայլերով, որտեղ դեռևս տեսանելի չէ, թե համակարգը որ տարիներին ինչ խնդիրների վրա

պետք է ուշադրություն դարձնի, ինչ ուղղությամբ կարիքների գնահատում պետք է իրականացնի: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ բուհի ղեկավարության կողմից ՈԱ կենտրոնի առջև հստակ տվյալների հավաքագրման պահանջ չի դրվում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նաև որոշ դեկաններ անհրաժեշտ չեն համարում իրենց ֆակուլտետին առնչվող վերլուծությունների իրականացումը: Որպես վերջին տարիների մեծ փոփոխություն՝ բուհի ներկայացուցիչները նշում են տվյալների բազմակողմանի հավաքագրումը, ինչը, սակայն, արդյունավետ չի օգտագործվում միասնական էլեկտրոնային բազայի և առցանց հարցումների պլատֆորմներին հասանելիության բացակայության պատճառով: Փորձագիտական այցի հանդիպումներից պարզ դարձավ, որ բուհի Գիտխորհրդում Որակի ապահովման կենտրոնի ղեկավարը ներկայացնում է ուսանողների բավարավածության և պրակտիկայի կազմակերպման, կամընտրական դասընթացների ընտրության վերաբերյալ, խորհրդատուների և դասախոսների հետ անցկացված հարցումների արդյունքները:

2022թ. ՈԱ կենտրոնի կողմից իրականացվել է կառավարման համակարգի գնահատում, որի արդյունքները ներկայացվել են բուհի ռեկտորին: Միևնույն ժամանակ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ կառավարման համակարգի կոնկրետ բարելավումներ որակի ապահովման գործընթացների ու հավաքագրված տվյալների հիման վրա դեռևս տեղի չեն ունեցել:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բուհի ռազմավարությամբ կարևորված հետազոտության և միջազգայնացման գործընթացների արդյունավետության գնահատման համար հստակ մեխանիզմներ դեռևս առկա չեն:

Ըստ Ձեռնարկի՝ Համալսարանը որակի ապահովման փուլից անցել է Որակի կառավարման փուլին, և որակի ապահովման ներքին համակարգը պայմաններ է ապահովում որակի մշակույթի զարգացման համար: Այդ գործողությունը սահմանվել է որպես ՈԱ կենտրոնի գործունեության հիմնական ուղղություն: Ձևակերպված են Որակի կառավարման համակարգի խնդիրներն ու գործառույթները, մշակված է Որակի կառավարման սխեման և համակարգի փաստաթղթերի ցանկը: Այսուհանդերձ, փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումները ցույց տվեցին, որ շահակիցները տարբեր պատկերացումներ ունեն որակի ապահովման համակարգի դերի մասին:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Որակի ապահովման գործընթացներին Համալսարանը ռեսուրսներ սկսել է տրամադրել 2009թ.-ից, երբ Գիտխորհրդի որոշմամբ ձևավորվել է Որակի վերահսկման հանձնաժողով: 2010թ. հիմնվել է առանձին ստորաբաժանում՝ Կրթության որակի ապահովման կենտրոն (ԿՈԱԿ)՝ ուսումնագիտական գծով պրոռեկտորի ենթակայությամբ: 2011-2013թթ. ԿՈԱԿ-ը Համաշխարհային բանկի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում համալրվել է տեխնիկական միջոցներով, համակարգչային ծրագրերով, անհրաժեշտ գրականությամբ ու գույքով, վերանվանվել է Որակի ապահովման կենտրոն (ՈԱԿ) անկախ կառուցվածքային ստորաբաժանում և դարձել ողղակիորեն հաշվետու համալսարանի ռեկտորին:

Բուհում ներկայումս գործող որակի ապահովման համակարգի կառուցվածքային սխեման ՈԱ Զեռնարկում բացակայում է: Զեռնարկում ներկայացված են ՈԱԿ և ֆակուլտետի ՈԱ աշխատանքային խմբերի գործառույթները:

Որակի ապահովման կենտրոնի համար նախատեսված 3 դրույքից փորձագիտական այցի ժամանակ 3 աշխատակից զբաղեցնում էին 2.5 դրույքը: Կենտրոնի բոլոր աշխատակիցների համար մշակված են պաշտոնի անձնագրեր՝ ղեկավարի, կրթության որակի աուդիտի պատասխանատուի, մոնիտորինգի և վերլուծության, ինչպես նաև շուկայաբանության մասնագետի, որի հաստիքը թափուր էր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կենտրոնի աշխատակիցները ՈԱ գործընթացների կազմակերպման և կառավարման վերապատրաստումներ բուհից դուրս չեն անցել:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ Որակի կենտրոնին տրամադրված է առանձին աշխատասենյակ՝ անհրաժեշտ գույքով, համակարգիչներով և տեխնիկական այլ միջոցներով: Կենտրոնին անհրաժեշտ նյութական ռեսուրսները տրամադրվում են գնումների գործընթացով՝ 4 ամիսը մեկ անգամ ներկայացվող պահանջաթերթերով: Բուհի բյուջեի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ որակի ապահովման գործընթացների համար ֆինանսական միջոցներ նախատեսված չեն, բացի աշխատակիցների աշխատավարձերից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ֆինանսական միջոցների սղությամբ պայմանավորված տվյալների հավաքագրման միասնական էլեկտրոնային բազայի ձևավորումը և հարցումների անցկացման առցանց էլեկտրոնային պլատֆորմ ունենալը դեռևս բուհին չի հաջողվում:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ բացի ՈԱԿ-ի աշխատակիցներից՝ որակի ներքին ապահովման գործընթացներին ուղղված աշխատանքներ են իրականացնում նաև որակի ապահովման ֆակուլտետային անդամները և ուսանող-համակարգողները: Կենտրոնը համագործակցում է նաև ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների և դասախոսների հետ կրթական ծրագրերին առնչվող հարցերում: ՈԱ Զեռնարկում նախատեսված ֆակուլտետային աշխատանքային խմբերը չեն գործում, սակայն ֆակուլտետներում կան որակի ներկայացուցիչներ որպես որակի ապահովման ֆակուլտետային անդամներ: Նրանք հիմնականում աջակցում են որակի ապահովման հարցումների տարածմանը և շահակիցների ներգրավմանը հարցումներում: Ֆակուլտետային անդամների և ուսանող-համակարգողների աշխատանքն իրականացվում է հասարակական հիմունքներով:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

2019 թ. ՎՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում տրվել է խորհրդատվություն՝ մշակել և ներդնել ՈԱ գործընթացներում արտաքին շահակիցների մասնակցությունը խրախուսող քաղաքականություն, մեխանիզմներ և ընթացակարգեր:

2022թ. մշակվել է «Որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավման քաղաքականություն», որտեղ հստակեցված են բուհի ներքին (ուսումնառողներ, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ, վարչական անձնակազմեր) և արտաքին (շրջանավարտներ, դիմորդներ, նրանց ծնողներ, գործատուներ,

սոցիալական ոլորտի ենթակառուցվածքներ, հասարակական կազմակերպություններ) շահակիցները:

Քաղաքականությամբ նախատեսվում է շահակիցների մասնակցություն բազմաթիվ միջոցառումների՝ կառավարման մարմիններից սկսած մինչև ինքնավերլուծության խմբեր, աշխատանք որակի ապահովման կառույցներում և գործընթացների կազմակերպման հանձնաժողովներում և այլն: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ խորհուրդներում դասախոսների և ուսանողների մասնակցությունն ապահովված է նրանց ձևավորման կարգերով, սակայն ռեկտորի հրամաններով ձևավորված տարբեր հանձնաժողովներում հիմնականում վարչական կազմի ներկայացուցիչներ են ներգրավվում: Օրինակ, բուհի ինստիտուցիոնալ ինքնավերլուծության խմբում ոչ դասախոս, ոչ ուսանող կամ որևէ արտաքին շահակից չի եղել ներառված: Ռազմավարական ծրագրի իրականացման և բարելավման պլանի մոնիտորինգի հանձնաժողովում նույնպես վարչական անձնակազմի ներկայացուցիչներ են:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համալսարանի որակի ապահովման կենտրոնը քայլեր է ձեռնարկել որակի ապահովման գործընթացներում ուսանողների մասնակցությունը ապահովելու ուղղությամբ: Ուսանողները ներկայացված են ՄՈՒՀ-ի կառավարման մարմիններում, որտեղ մասնակցում են որակի ապահովման խնդիրների քննարկումներին, ըստ անհրաժեշտության ներգրավվում են նաև կրթական ծրագրերի մշտադիտարկման, վերանայման գործընթացներում:

Ուսանողները մասնակցում են «Դասախոսն ուսանողի աչքերով» հարցմանը, որի նպատակն է պարզել դասավանդման որակը և արդյունավետությունը: Բացի այդ ֆակուլտետներում առկա են ուսանող-համակարգողներ, որոնք աջակցում են հարցումների կազմակերպմանը: Ուսանողների շրջանում իրականացված հարցումների արդյունքների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների համար առավելապես խնդիր է գնահատման համակարգը, քանի որ հստակեցված չեն գնահատման չափանիշները: Ուսանողների կողմից որպես խնդիրներ նշվել են նաև կրթական ծրագրերում տարբեր դասընթացներում առկա կրկնությունները, կամընտրական առարկաների ընտրության համար ոչ բավարար իրազեկվածությունը, լաբորատորիաների նյութատեխնիկական հագեցվածությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցումների միջոցով վերհանվել է նաև պրակտիկաների ժամաքանակի ավելացման հարցը, ինչի արդյունքում ավելացվել են պրակտիկային հատկացվող ժամերը:

Փորձագիտագիտական խմբի կողմից հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում ներառված հարցերը երբեմն հասկանալի չեն և ոչ միշտ են ուղղված որակի ապահովման համակարգի կողմից առաջադրված խնդիրների լուծմանը: Այսպես, օրինակ, ուսանողների կարիքների վերհանման և կրթությունից բավարարվածության ուսումնասիրությանն ուղղված հարցաթերթկներում և ֆոկուս խմբային հարցաշարում տեղ են գտել հետևյալ հարցադրումները՝ «Արդյոք առարկան միաժամանակ կարող է լինել բարդ, օգտակար և հետաքրքիր: Ընդհանրապես կարևորու՞մ եք առարկայի հետաքրքիր լինելը, թե՝ ոչ: Ինչն է ազդում հիմնականում առարկայի՝ հետաքրքիր լինելու վրա, օրինակ, մատչելիությունը, պարզությունը, դասախոսի անձնային որակները, նախընտրած մեթոդները, Ձեր անհատական հետաքրքրությունների շրջանակը», «Ձեր կարծիքով ինչպիսի՞ն կարող է լինել դասախոս-ուսանող հարաբերությունը ֆորմալ և ոչ ֆորմալ շփումների հնարավորության տեսանկյունից» և այլն: Հարցաշարերի ուսումնասիրությունը

ցույց տվեց, որ հստակ չեն դրանց համար կիրառվող գնահատման սանդղակները. որոշ հարցումների դեպքում կիրառվում են 0-5, որոշ դեպքերում՝ 1-5 գնահատման սանդղակները: Այսպիսով, վերլուծությունն իրականացնելիս տարբեր դեպքերում ստացված միջին գնահատականները համադրելի չեն: Բուհի կողմից հարցումների արդյունքում իրականացված բարելավումների գնահատում դեռ չի իրականացվել:

Դասախոսները ներգրավվում են կրթական ծրագրերի մշակման, մշտադիտարկման, վերանայման գործընթացներում, իրենց ներկայացուցիչներն ունեն կառավարման մարմիններում և ֆակուլտետային աշխատախմբերում: ՈԱԿ-ը մշակել է պրոֆեսորադասախոսական կազմի բավարավածության հարցումներ և ուսանողների կողմից դասընթացների և թեմաների արդյունավետության գնահատման հարցաթերթեր[8]: Պրոֆեսորադասախոսական կազմի հարցումների վերլուծությունը ևս ներկայացնում է պատասախանների քանակական պատկերը, որակական հարցեր այստեղ ներառված չեն, ինչպես նաև դասախոսական կազմի իրական խնդիրները հնարավորություն չեն տալիս պարզել: Այսպես օրինակ, դասախոսները 7-միավորանոց սանդղակով (1-5 միավորով, որտեղ 1-ը նշանակում է «վատ», 5-ը՝ «գերազանց», 77-ը՝ «անհրաժեշտ չեմ համարում», 99-ը՝ «դժվարանում եմ պատասխանել») միևնույն հարցման շրջանակներում գնահատում են ուսանողների ինքնուրույնությունը, կարգապահությունը, հետազոտական կարողությունները, ինչպես նաև բուհում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը, կրթական, գիտական աշխատանքների արդյունավետությունը, աշխատավարձի չափը և այլն: Հարկ է նշել, որ միևնույն հարցման շրջանակներում մյուս ենթաբաժնում արդեն կիրառված են գնահատման այլ սանդղակներ (Դրական, Չեզոք, Բացասական, Չեմ առնչվել/Չեմ մասնակցել, Դժվարանում եմ պատասխանել)՝ գնահատելու դասախոսների ինքնաիրացման վրա ազդող գործոնները: Որպես գնահատման գործոններ բուհը դիտարկել է բեռնվածքի լսարանային ժամաքանակը, մեթոդական սեմինարները, դասալսումները և այլն:

Ղեկավար, վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմը 2-3 տարվա կտրվածքով ներգրավվում է ՈԱԿ-ի կողմից կազմակերպվող կառավարման գործընթացների գնահատման և կարիքների վերհանման հարցումներում: Հարցումների վերլուծությունում որպես խնդիրներ բուհի կողմից առանձնացվել են ներքին շահակիցների պասիվ ներգրավվածությունը, հավաստի տվյալների հիման վրա չկայացված որոշումները:

Ուսանողների կողմից հարցաթերթերի միջոցով դասընթացների և թեմաների արդյունավետության գնահատման նպատակ է դիտարկվում՝ օգնել դասախոսին բազմակողմանի ինքնագնահատման ենթարկել դասընթացի մատուցումը: Սակայն, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդ հարցաշարից օգտվում է դասախոսների 15%-ը[9]:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ տարբեր հարցումների միջոցով բացահայտված խնդիրների լուծման համար հստակ պլանավորում, պատասխանատուների բաշխում բուհի կողմից չի իրականացվել, չեն հատկացվել համապատասխան միջոցներ:

[8] Վերաձևակերպվել է բուհի հետ քննարկումների արդյունքում:
[9] Վերաձևակերպվել է բուհի հետ քննարկումների արդյունքում:

Հետևելով նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցի խորհրդատվություններին՝ ՎՊՀ-ն նպատակադրվել է ակտիվացնել արտաքին շահակիցների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում:

Շրջանավարտները ներգրավված են կրթական գործընթացից բավարարվածության գնահատման հարցումներում, ինչպես նաև՝ մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկումներում, վերանայման և ինքնավերլուծության գործընթացներում: Շրջանավարտների կողմից գնահատվել են իրենց մասնագիտական գիտելիքները, անկանխատեսելի խնդիրները լուծելու հմտությունները, իրենց ոլորտին առնչվող տեղեկատվությունը բացատրելու, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հմտությունները և այլն: Շրջանավարտների գիտելիքների, հմտությունների, կարողունակությունների ինքնագնահատումը միջինում 4.5 և բարձր է, ինչը բուհը համարել է գոհացուցիչ ցուցանիշ: Հարցման վերլուծությունն այս դեպքում ևս ամփոփված է միայն քանակական տվյալների ներկայացմամբ: Բարելավման ուղղություններ և հետագա քայլեր նախանշված չեն:

Հիմնականում բուհում աշխատող գործատուներն են ներգրավվում կրթական ծրագրերի մշակման, մշտադիտարկման, վերանայման և ինքնավերլուծության աշխատանքներում: 2-3 տարին մեկ առցանց անցկացվող հարցումների են մասնակցում այն գործատուները, որոնց կազմակերպություններում աշխատում են ՎՊՀ շրջանավարտները: Այսուհանդերձ, ինքնավերլուծության շրջանակներում բուհը որպես թույլ կողմ դեռևս նշում է արտաքին շահակիցների ոչ բավարար ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

2019թ. ՎՊՀ-ն մշակել է Որակի ապահովման ինքնագնահատման և վերանայման կանոնակարգ և ընթացակարգ: Որակի ներքին ապահովման ինքնագնահատման և վերանայման նպատակ է դիտարկվում բարելավել ՈԱ համակարգը, արդիականացնել ՈԱ գործառույթները, ընթացակարգերը, կատարելագործել ՈԱ մեխանիզմները, վերհանել և նվազեցնել որակի ներքին ապահովման ռիսկերը:

Վերոնշյալ փաստաթղթով կանոնակարգված են ՈՆԱ համակարգի ինքնագնահատման և վերանայման 7 հիմնական քայլերի հաջորդականությունը և մանրամասն նկարագրված են այդ քայլերի ժամանակ նախատեսվող գործողությունները, ինչպես նաև ինքնագնահատման փուլերը: Մշակված են նաև անհրաժեշտ ձևաչափերը, այդ թվում՝ ինքնագնահատման հաշվետվությունների համար: Նախատեսված է նաև ՈՆԱ համակարգի միջանկյալ վերանայում, որը կարող է կատարվել ըստ հիմնավոր անհրաժեշտության՝ առանց ինքնագնահատման գործընթացի: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ իրականացված բարելավումներ նշված գործիքների կիրառմամբ դեռ առկա չեն:

ՎՊՀ գործունեության 2020-2024թթ. հաշվետվությունների որակի ապահովմանը վերաբերող բաժիններում հիմնական ուշադրությունը նվիրվում է ՈԱԿ-ի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքների ներկայացմանը /օրինակ, արտաքին շահակիցների նախընտրությունների ուսումնասիրության, ներքին շահակիցների կարիքների վերհանման, ակնկալիքների և բավարարվածության ուսումնասիրության և այլն/: Ներկայացվում է նաև որոշ փաստաթղթերի վերանայումների մասին տեղեկատվություն.

օրինակ, 2021թ. հաշվետվության համաձայն վերանայվել են որակի ապահովման քաղաքականության հետ կապված հիմնական փաստաթղթերը՝ դրանք համահունչ դարձնելով բուհի 2021-2025թ. ռազմավարությանը: Այսուհանդերձ, հիմնավորված չեն՝ ինչ փոփոխություններ են կատարվել դրանցում, ինչ է ակնկալվում ունենալ վերանայված փաստաթղթերի կիրառումից: Նույն կերպ, 2022թ. վերանայվել է նաև բուհի Որակի ապահովման ձեռնարկը, որի վերլուծություն չի իրականացվել՝ պարզելու ինչ փոփոխությունների անհրաժեշտությունն է դրվել այս վերանայման հիմքում: Հարկ է նշել, որ «Որակի կառավարման համակարգի կանոնակարգը» մշակվել է 2015թ. և առանց էական փոփոխությունների վերահաստատվել է 2024թ.[10]:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Ինստիտուցիոնալ վերահավատարմագրում անցնելու նպատակով ՎՊՀ կողմից կազմված ինքնավերլուծությունը հիմնականում նկարագրողական է, ներկայացնում է բուհի կողմից կիրառվող փաստաթղթերը և գործընթացները՝ չանդրադառնալով դրանց կիրառման արդյունավետությանն ու զարգացման ուղղություններին:

Համալսարանի որակի ապահովման կենտրոնի կողմից 2021 թվականից իրականացվում է ՎՊՀ տարեկան ինքնավերլուծություն: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վերլուծություններում առանձնացված են ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով նկարագրվող ոլորտներին համապատասխան բաժիններ, սակայն չափորոշիչների պահանջներին համապատասխան տեղեկատվության ամփոփում և վերլուծություններ կատարված չեն: Ինքնավերլուծություններում հաշվետվության ձևաչափով ներկայացված են Համալսարանի վարած գործունեությունը և դրա արդյունքները: Ինքնավերլուծության տեքստի որոշ բաժիններ կրկնում են ՎՊՀ գործունեության ռեկտորի տարեկան հաշվետվությունների համապատասխան մասերը ավելի համառոտ տարբերակով:

Վերահավատարմագրման նպատակով ՎՊՀ-ն լրացրել է նաև ՈԱԱԿ էլեկտրոնային հարցաշարի պահանջվող տեղեկատվության հիմնական մասը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհը հավաքագրում է նաև ՈԱԱԿ ինքնավերլուծության ձևաչափով պահանջվող տեղեկատվությունը հավատարմագրմանը նախորդող ժամանակահատվածում:

Բուհի ՈԱԿ-ը 12 հարցում է իրականացնում՝ տեղեկատվություն հավաքագրելու ուսանողների և դասախոսների կարիքների, անձնակազմի, շրջանավարտների և գործատուների բավարարվածության, պրակտիկայի կազմակերպման արդյունավետության և մի քանի այլ գործընթացների վերաբերյալ: Այդ տվյալները ՈԱԿ-ը օգտագործում է վերլուծություններ կատարելու համար, որոնց մի մասը ներկայացված են բուհի ինքնավերլուծության մեջ:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Համալսարանն իր կողմից իրականացվող կրթական և այլ գործընթացների թափանցիկության և հրապարակայնությունն ապահովում է պաշտոնական կայքի միջոցով:

[10] Վերաձևակերպվել է բուհի հետ քննարկումների արդյունքում:

Կայքում տեղադրված են հիմնական պաշտոնական փաստաթղթերը, կրթական ծրագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը: Կենտրոնը պատրաստում է իրականացված աշխատանքների հաշվետվություններ, որոնք ներառվում են բուհի գործունեության տարեկան հաշվետվություններում: Բուհի ռեկտորի տարեկան հաշվետվությունների բաժիններից մեկը՝ «Որակի ապահովում և կառավարում», ամփոփում է ՈԱ համակարգի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը: Համալսարանի կայքում պարտադիր տեղադրվում են ռեկտորի տարեկան և ֆինանսական հաշվետվությունները:

Փորձագիտական այցի ժամանակ ՎՊՀ կայքում հասանելի են որակի ապահովման ձեռնարկները, երեք ինքնավերլուծությունները, շրջանավարտների ու գործատուների շրջանում իրականացված հարցումների արդյունքները:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ներքին շահակիցները ոչ միշտ են տեղեկանում իրականացված հարցումների արդյունքների ու դրանց հիման վրա պլանավորվող բարելավումների մասին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևորում է ՎՊՀ ռազմավարական նպատակներից մեկը՝ որակի ապահովման համակարգի կատարելագործումը: Տարբեր տարիներին մշակված փաստաթղթերի ամբողջացումը բուհին հնարավորություն է տվել ունենալ գործընթացները կարգավորող և նկարագրող փաստաթղթային հիմք: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ գործընթացների բարելավումը կլինի առավել արդյունավետ, եթե վերանայումները կատարվեն հիմնված վերլուծությունների և կարիքների վրա: Սա թույլ կտա ոչ միայն ամրապնդել փաստաթղթային հիմքը, այլև ապահովել դրա լիարժեք կիրառությունը՝ նպաստելով ռազմավարական ծրագրով սահմանված որակի նպատակների իրագործմանը:

Խումբը շեշտադրում է, որ որակի ապահովման համակարգի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է, որ կառավարման մարմինները սահմանեն հստակ խնդիրներ և արդյունավետության գնահատման չափորոշիչներ: Սա կօգնի համակարգին արձագանքել բուհի կարիքներին և նպաստել կայացվող որոշումների որակի բարձրացմանը: Բուհը կարիք ունի համակարգված մոտեցման՝ վեր հանելու ներքին և արտաքին շահակիցների կարիքները, ինչը թույլ կտա այդ տվյալները կիրառել ստորաբաժանումների բարելավման պլաններում:

Հատկապես կարևոր է հարցումների և ֆոկուս խմբային քննարկումների մեթոդաբանության բարելավումը: Խումբը կարևորում է հարցումների նպատակների հստակեցումը, գնահատման սանդղակների համապատասխանեցումը, թիրախային խմբերի ճիշտ ընտրությունը և հավաքագրված տվյալների որակական վերլուծությունը: Հարկ է նաև հստակեցնել տվյալների աղբյուրները, սահմանել պարբերականություն, և ապահովել եզրակացությունների հիման վրա հաջորդ քայլերի իրականացումը՝ համագործակցելով ստորաբաժանումների հետ:

Դրական է, որ ՎՊՀ որակի ապահովման կենտրոնը ապահովված է նյութական ռեսուրսներով, սակայն խումբը կարևորում է նաև մարդկային ներուժի զարգացմանը ֆինանսական միջոցների հատկացումը: Սա թույլ կտա մասնագետներին զարգացնել իրենց կարողությունները և նպաստել համակարգի արդյունավետությանը: Բուհը կարող է դիտարկել նաև տվյալների էլեկտրոնային բազայի ձևավորման և հարցումների անցկացման

հարթակների հասանելիության հնարավորությունը, ինչը կբարձրացնի տվյալների կառավարման արդյունավետությունը։

Խումբը դրական է գնահատում բուհի կողմից որակի ապահովման համակարգի վերանայման գործընթացների կանոնակարգումը, ինչը նպաստել է մեխանիզմների արդիականացմանն ու գործառույթների բարելավմանը։ Այնուամենայնիվ, կարևոր է վերլուծել փոփոխությունների անհրաժեշտությունը և դրանց ազդեցությունը որակի ապահովման գործընթացների արդյունավետության վրա՝ վեր հանելով առկա խնդիրները և վերապլանավորելով գործընթացները։

Բուհը կարիք ունի նաև վերանայելու ինքնավերլուծությունների մեթոդաբանությունը՝ ներառելով գործընթացների արդյունավետության գնահատման հիմքերը և ընդգծելով առկա խնդիրները։ Սա թույլ կտա ավելի ամբողջական պատկեր ներկայացնել արտաքին գնահատման համար։

Դրական է, որ ՎՊՀ-ն ակտիվորեն օգտագործում է իր պաշտոնական կայքը և սոցիալական հարթակները թափանցիկության և տեղեկատվության հասանելիության ապահովման նպատակով։ Սակայն որակի ապահովման վերլուծությունների սակավ հասանելիությունը կարող է խոչընդոտել շահակիցների տեղեկացվածությանը։ Բուհը կարող է առավել արդյունավետ օգտագործել այս հարթակները՝ որակի ապահովման գործընթացների մասին շահակիցների տեղեկացվածությունը բարձրացնելու համար։

Եզրահանգում։ Հաշվի առնելով, որ բուհի որակի ապահովման համակարգը բավարար ազդեցություն չունի բուհի գործունեության և զարգացման ուղղությունների բարելավման վրա, որակի ապահովման գործընթացները հստակ պլանավորված չեն, առկա չեն համակարգի արդյունավետության գնահատման ցուցիչներ, համակարգի միջոցով չեն հավաքագրվում կառավարչական որոշումների կայացման համար անհրաժեշտ տվյալներ, կիրառվող մեխանիզմները չեն նպաստում ներքին և արտաքին շահակիցների կարիքների պարբերական ու համակողմանի վերհանմանը, որակի ապահովման ներքին համակարգը չի ապահովում բավարար հիմքեր որակի արտաքին գնահատման գործընթացների համար, համակարգը դեռ չի նպաստում բուհի գործունեության թափանցիկության ապահովմանը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՊՀ-ն չի բավարարում չափանիշ 10-ի պահանջները։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար։**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Չի բավարարում**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Բավարարում է**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Չի բավարարում**

Անուշավան Մակարյան
Փորձագիտական խմբի ղեկավար

30-ը հունվարի, 2025 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Անուշավան Մակարյան՝ 2001 թվականին ստացել է Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2006-ին՝ դոցենտի: 1986-1988թթ. աշխատել է ՀՀ Գիտությունների Ակադեմիայի Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող: 1988թ. մինչ այժմ դասավանդում է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի օպտիկայի ամբիոնում: 2011-2013թթ. Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնում աշխատել է «Որակի ներքին ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր» ծրագրի ղեկավար, իսկ 2013-2019թթ. ղեկավարել է Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժինը: 2016-2019թթ. հանդիսացել է ՌԴ «Росаккредагенство» հավատարմագրման պետական գործակալության կրթության հավաստագրված միջազգային փորձագետ: 2019-2024թթ. եղել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատարը:

Գեղամ Կարոյան՝ 2002 թ.-ին ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի կիբեռնետիկայի ֆակուլտետը, 2004թ.-ին՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրանիսկ 2006 թ.-ին՝ ասպիրատուրան՝ ստանալով տեխնիկական գիտությունների թեկնածուի աստիճան: 2013 թ.-ին ստացել է դոցենտի գիտական կոչում: 2003-2008 թթ. աշխատել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի «Էլեկտրոնային տեխնիկա» ամբիոնում՝ որպես ավագ լաբորանտ: 2005-2006 թթ. աշխատել է Գավառի պետական համալսարանի «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» ամբիոնում՝ որպես ասիստենտ: 2009 թ.–ից մինչ այժմ աշխատում է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում՝ որպես «Էլեկտրոնիկա, կենսաբժշկական և չափիչ համակարգեր» ամբիոնի դոցենտ: Ներկայումս Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալն է: 2020-2024 թթ. եղել է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի հավատարմագրման հանձնաժողովի անդամ:

Մարե Խաչատրյան՝ 2008 թ.-ին ավարտել է Երևանի պետական տնտեսագիտական համալսարանը՝ «Մաքսային գործ» մասանգիտացմամբ: 2012 թ.-ին ավարտել է նույն համալսարանի ասպիրանտուրան՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտացմամբ: 2018 թ.-ին ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2020 թ.-ին ստացել է տնտեսագիտության դոցենտի գիտական կոչում: 2013 թ.-ից մինչ օրս աշխատում է ՀՊՏՀ-ի «Ֆինանսներ» ամբիոնում՝որպես դոցենտ: ՀՊՏՀ Էթիկայի հանձնաժողովի անդամ է, ակտիվորեն ներգրավված է բուհի կողմից իրականացվող բենչմարքինգային գնահատումներին և կրթական ծրագրերի բարեփոխումներին՝ հատկապես կորպորատիվ ֆինանսների ոլորտում: Համագործակցում է պետական և մասնավոր հատվածների մի շարք կառույցների հետ՝ ֆինանսական վերլուծությունների, մենթորության իրականացման գործում: 2017 թ.-ից մինչ օրս Erasmus + ծրագրի շրջանակներում

դասավանդել է եվրոպական տարբեր երկրներում, մասնակցություն է ունեցել միջազգային գիտաժողովների, սեմինարների, համաժողովների, վերապատրաստումների։

Մագդալենա Լիբ՝ 2005 թ.-ին ավարտել է Պասաուի համալսարանի «Իսպանախոսության, տնտեսագիտության և սոցիոլոգիայի» ֆակուլտետը։ 2009 թ.-ին ավարտել է Ռեգենսբուրգի համալսարանի «Մշակութաբանության և Քաղաքագիտության» ֆակուլտետը՝ մագիստրոսի որակավորմամբ։ 2007-2009 թթ. աշխատել է նույն համալսարանում որպես գիտաշխատող։ 2009-2014 թթ.աշխատել է Բայրոթի Հավատարմագրման, հավաստարգրման և որակի ապահովման ինստիտուտում (ACQUIN)։ 2014-2019 թթ. եղել է Ֆրիդրիխ-Ալեքսանդր Էրլանգեն-Նյուրնբերգ համալսարանի Իրավական հարցերի, դասավանդման ու հետազոտությունների որակի կառավարման բաժնի ղեկավարի տեղակալը։ 2023թ.-ից Քյոլնի համալսարանի որակի կառավարման խորհրդի անդամ է։ 2023թ.-ից Օմանի Սուլթան Քաբուսի անվան համալսարանին կից «Արվեստի և սոցիալական գիտությունների» քոլեջի ինստիտուցիոնալ հավատարմագրման խորհրդի անդամ է։

Զարուհի Հակոբյան՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Տեղեկատվական անվտանգություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող է։ 2024թ.-ին մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի Ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին։

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	06.10.2024 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	10:00	13:00	180 րոպե
2	Մեկնում Երևանից Վանաձոր	13:00	15:00	120 րոպե
3	ՎՊՀ ռեսուրսների և ենթակառուցվածքների դիտարկում	16:00	18:00	120 րոպե

	07.10.2024 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում համալսարանի ռեկտորի հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում պրոռեկտորների հետ	10:40	11:30	50 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	11:40	12:30	50 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:40	13:40	60 րոպե
5	Հանդիպում համալսարանի Հոգաբարձուների խորհրդի հետ	13:50	14:50	60 րոպե
6	Հանդիպում շրջանավարտների հետ	15:00	15:50	50 րոպե
7	Հանդիպում գործատուների հետ	16:00	17:00	60 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:10	18:30	80 րոպե

	08.10.2024 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում դեկանների հետ	09:30	10:20	50 րոպե
2	Դասալսումներ	10:30	11:40	70 րոպե
3	Հանդիպում ամբիոնների վարիչների և կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	12:00	13:00	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների (8-10 հոգի) հետ	14:10	15:10	60 րոպե
6	Հանդիպում ուսանողների (8-10 հոգի) հետ	15:20	16:20	60 րոպե
7	Հանդիպում ՈւԽ և ՈւԳԸ ներկայացուցիչների հետ	16:30	17:10	40 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:20	19:00	100 րոպե

	09.10.2024 թ.			*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում «Պատմություն» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	Հանդիպում «Հոգեբանություն» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	Հանդիպում «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում «Պատմություն» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Հոգեբանություն» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» կրթական ծրագրի դասախոսների հետ	10:45	11:45	60 րոպե
3	Հանդիպում «Պատմություն» կրթական ծրագրի ուսանողների հետ	Հանդիպում «Հոգեբանություն» կրթական ծրագրի ուսանողների հետ	Հանդիպում «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» կրթական ծրագրի ուսանողների հետ	12:00	13:00	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:10	14:10	60 րոպե
5	Հանդիպում ստորաբաժանումների (Կրթական բարեփոխումների եվ վերապատրաստման կենտրոն, Կրթական գործընթացների կառավարման, Գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժիններ, Գրադարան) ղեկավարների հետ			14:20	15:20	60 րոպե
6	Հանդիպում ստորաբաժանումների (Ֆինանսական ռեսուրսների կառավարման, Վարչատնտեսական, Մարդկային ռեսուրսների կառավարման, Ընդհանուր բաժիններ, Տեղեկատվական տեխնոլոգիաների, Մշակույթի կենտրոններ)			15:30	16:20	50 րոպե

	ղեկավարների հետ			
7	Բաց հանդիպում	16:30	17:20	50 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	18:30	60 րոպե

	10.10.2024 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում Որակի ապահովման կենտրոնի աշխատակիցների հետ	09:30	10:30	60 րոպե
2	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	10:40	11:40	60 րոպե
3	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	11:50	12:50	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:10	15:10	60 րոպե
6	Հանդիպում համալսարանի ղեկավար կազմի հետ	15:30	16:00	30 րոպե
7	Վերադարձ Վանաձորից Երևան	17:00	19:00	120 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Ռազմավարական ծրագրի արդյունավետության գնահատում	1
2.	ՎՊՀ նախորդ Ռազմավարական ծրագիր	1
3.	Ռեկտորի վերջին երեք տարիների հաշվետվություններ	2
4.	Ստորաբաժանումների պլաններ և հաշվետվություններ	2
5.	Էթիկայի կանոնագիրք	2
6.	Գիտխորհրդի նիստերի 2021-2024թթ. ժամանակացույցեր, օրակարգեր և որոշումներ	2
7.	Ֆինանսատնտեսական հանձնաժողովի վերլուծություններ	2
8.	Պաշտոնի անձնագրեր	2
9.	Նախահաշիվ (վերջին երեք տարիների)	2
10.	Բյուջե(վերջին երեք տարիների)	2
11.	Գիտխորհրդին և ռեկտորին կից հանձնաժողովների ցանկեր	2
12.	Ձեռնարկատիրական գործունեության ծավալման հայեցակարգ	2
13.	ՄՈՒՀ բյուջետային մուտքերի 1.4%-ը կազմող դրամաշնորհների հիմքեր	2
14.	ՄԿԾ-ների արտոնման փաթեթներ	3
15.	Մատյաններ (յուրաքանչյուր կուրսից՝ մեկական)	3
16.	Պրակտիկայի լրացված օրագրեր, մատյաններ	3
17.	Դասընթացների մակարդակում կրթական ծրագրի նպատակի իրականացման և վերջնարդյունքների ապահովման ուսումնասիրություններ	3
18.	Նոր ՄԿԾ-ի մշակման, արտոնման և ներդրման գործընթացում ենթադրյալ բոլոր շահառուների ակտիվ մասնակցության ձևաչափ, արդյունքներ	3
19.	2018թ. ՄԿԾ մշակման և ներդրման ռազմավարության արդյունքներ	3
20.	ՄԿԾ-ների համեմատական վերլուծության արդյունքներ (Նոր ներդրված ՄԿԾ-ների համար)	3
21.	ՄԿԾ–ի ձեռքբերումները հավաստող գնահատման մեթոդներ, ցուցիչներ	3
22.	Դասընթացների ուսումնամեթոդական փաթեթի օրինակներ գնահատման ձևեր և չափանիշներ	3
23.	Ինքնուրույն աշխատանքների օրինակներ	3
24.	Էրազմուս+ շարժունությամբ արտերկրյա որևէ համալսարանում ուսանած և հետ վերադարձած ուսանողի՝ տվյալ կիսամյակի դասընթացների առարկայական, կրեդիտային տարբերություններն ու նույնությունները հավաստող փաստաթուղթ	3
25.	ՄԿԾ-ների մշտադիտարկման և աուդիտի իրականացման արդյունքի	3

	արտաքին գնահատում	
26.	Աշխատաշուկայի պահանջարկի վերլուծություններ	3
27.	Ուսանողների կարիքների վերաբերյալ ՈՒԽ վերլուծություն	4
28.	Ուսանողների հետ ֆոկուս խմբի անցկացման հարցարաններ	4
29.	Կայքէջի միջոցով արված ուսանողների դիմումների տվյալներ	4
30.	Շրջանավարտների բազա	4
31.	Հետազոտական գործունեության համար խրախուսման հիմքեր	4
32.	ՈՒԽ պլան, հաշվետվություններ	4
33.	Հաստիքացուցակը՝ աշխատավարձով	5
34.	Դասախոսական կազմի միջին տարիք	5
35.	Դասախոսական կազմի մրցույթի հայտարարություններ	5
36.	Դասախոսների ընդհանուր թիվ	5
37.	ՊԴ կազմի մրցութային հանձնաժողովի կազմ	5
38.	Գիտխորհրդին կից մրցութային հանձնաժողովի արձանագրություններ	5
39.	Ֆակուլտետային մրցութային հանձնաժողովի արձանագրություններ	5
40.	«Դասախոսն ուսանողի աչքերով» լրացված հարցաթերթիկներ	5
41.	Դասալսումների լրացված արդյունքներ	5
42.	Դասախոսական կազմի վերապատրաստումների պլան, վերապատրաստման փաթեթներ	5
43.	Վերջին հինգ տարիներին պաշտպանած ասպիրանտների/հայցորդների թիվ	5
44.	Բուհում աշխատող շրջանավարտների թիվ	5
45.	ՈՒՀ/վարչական կազմի թիվ, ցանկ	5
46.	Վարչական աշխատակիցների տարեկան գնահատման հիմքեր	5
47.	ՊԴ և վարչական կազմի խրախուսման չափանիշներ	5
48.	Ամբիոնային հետազոտական պլաններ	6
49.	Միջազգային հետազոտական ծրագրերում ներգրավված դասախոսների ցանկ	6
50.	Աշխատակից ասպիրանտների, հայցորդների թիվ	6
51.	SMART CAFFE-ի գործունեության ֆինանսական հաշվետվություն	6
52.	Գիտության զարգացման ուղղությամբ ձևավորված փորձագետների և գործատուների բազաներ	6
53.	Համագործակցության պայմանագրերի ցանկ՝ ըստ ուղղությունների	6
54.	«Մագիստրոս» ժողովածուի օրինակներ	6
55.	ՈՒԳԸ գիտաժողովի ժողովածուի օրինակներ	6
56.	Ակադեմիական ազնվության քաղաքականության հայեցակարգ	6
57.	Վերջին երեք տարիներին արված հետազոտության արդյունքներ	6
58.	Ներքին դրամաշնորհների տրամադրման հիմքեր	6
59.	Գիտական խմբերի ստեղծման կանոնակարգ և տարեկան ֆինանսավորման հիմքեր	6
60.	Զարգացմանն ուղղված ծախսերի նախահաշիվ և կատարողականի օրինակ	7
61.	Վերջին 5 տարվա համար առողջության և անվտանգության	7

	պահպանմանն ուղղված ծառայություններին հատկացված ֆինանսական միջոցների բաշխում	
62.	Համացանցային գիտական կայքէջերին հասանելիության հիմքեր	7
63.	Ռեսուրսներից բավարարվածության հարցաշարեր	7
64.	Վերապատրաստման դասընթացներին մասնակցած շահառուների ցանկ	8
65.	Կայքի դիտելության տվյալներ	8
66.	Կայքի, սոցիալական հարթակների դիտելիության տվյալներ	8
67.	Դպրոցների հետ հարցումների արդյունքների վերլուծություն «Մասնագիտությունների տոնավաճառ» միջոցառման վերաբերյալ	8
68.	Կրթական բարեփոխումների և վերապատրաստումների կենտրոնի աշխատանքային պլան	8
69.	Գործատուների բազա	9
70.	Օտարալեզու դասընթացների նկարագրեր	9
71.	Գործատուների հետ հարցումների վերլուծություններ	10
72.	Որակի ապահովման կառուցվածք, պլան, հաշվետվություն	10
73.	«Դասախոսն ուսանողի աչքերով» հարցման արդյունքներ	10
74.	Ուսանողների կողմից դասընթացների և թեմաների արդյունավետության գնահատման հարցաշար	10
75.	Որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգի արդյունքներ	10
76.	ՈԱԿ և ՈԱՖԱ աշխատանքային պլաններ, հաշվետվություններ	10
77.	ՈԱ համակարգի ինքնագնահատումներ իրականացրած աշխատանքային խմբերի կազմեր և արձանագրություններ	10
78.	ՈՆԱ համակարգի բարելավման ծրագիր	10
79.	Որակի ապահովման քաղաքականությունների՝ առաջավոր փորձի համեմատության վերլուծություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,

2. համակարգչային լսարաններ,

3. լաբորատորիաներ,

4. ստորաբաժանումներ,

5. գրադարան,

6. ընթերցասրահ,

7. հանդիսությունների սրահ:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հավելված թիվ 1
Հաստատված է՝
<<Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան>>
հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի
16.05. 2020թ. թիվ 15 նիստի 35-Լ. որոշմամբ
ՎՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ՝
Դ. Տեր-Ստեփանյան

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



1

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՄԿԾ - Մասնագիտական կրթական ծրագրեր
ՄՈՒՀ - Մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱ - Որակի ապահովում
ՈԱՇ - Որակավորումների ազգային շրջանակ
ՈՈՇ - Որակավորումների ոլորտային շրջանակ
ՊԴԿ - Պրոֆեսորադասախոսական կազմ
ՌԾ - Ռազմավարական ծրագիր
ՈՒԳԸ - Ուսանողական գիտական ընկերություն
ՈՒԽ - Ուսանողական խորհուրդ
ՈՒՕ կազմ- Ուսումնաօժանդակ կազմ